ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(74-րդ տարի) **Թիվ-6** (1640) Հունիս 2020

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Մեր պարտքն ու պատասխանատվությունը
(էջ 1-2)

2- Հարցազրույց
Պատասխանում է Վիգէն Եագուպեանը
Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնը պէտք է խարսխուի փոխադարձ հարգանքի վրայ (էջ 3-5)

3- Հասարակություն
Սիւզան Խարտալեան
Բնապահպանական ուրոյն փիլիսոփայութեան համար (էջ 6-9)

4- Բնապահպանություն
Արեգ Ղարաբեգյան
Հայաստանի բնապահպանական որոշ խնդիրների մասին (էջ 10-15)

5- Տնտեսական
Արմեն Գրիգորյան
Գյուղատնտեսական քաղաքականության նոր հրամայականները (էջ 16-19)

6- Պատմության լուսարձակ
Արարատ Հակոբյան
Հայաստանի Հանրապետության պետաիրավական կառուցվածքի ազգային-ժողովրդավարական բնույթը (1918-1920 թթ.) (էջ 20-24)
Արամ Նազարյան
Իրական պատմություն. Բաթումի պայմանագրի գնահատման շուրջ (էջ 25-29)
Անի Մելքոնյան
Իրադրությունը ՀՀ-ում Մայիսյան հերոսամարտերից հետո.Արամ Մանուկյանը Վարիչների մարմնի նախագահ(էջ 30-33)

7- Դաշնակցական բեմ
Աւօ Գաթրճեան *«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս վէրջին) (էջ 34-36)*

8- Սփյուռք
Մկրտիչ Մկրտիչեան
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (Դաշնակցութիւնը ՀՀ կառավարութեան մասնակից) (էջ 37-39)

9- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Այս անկիւնէն. Կը լսէ՞ք, հայե՛ր (էջ 40)

Մեր պարտքն ու պատասխանատվությունը

Ընդամենը 30-40 տարի առաջ կանխատեսումներ էին հրապարակվում այն մասին, որ ծխի ու գազերի անվերահսկելի արտանետումները մի օր ծածկույթի շերտ կգոյացնեն մթնոլորտում՝ երկրի վրա առաջացնելով ջերմոցային էֆեկտ: Իր հերթին ջերմոցի վերածված երկրի վրա տեղի կունենա ջերմաստիճանի գլոբալ տաքացում՝ որպես հետևանք պատճառ դառնալով սառցաշերտերի ու այսբերգների հալոցքին և այլն: Այն ժամանակ այդ կանխատեսման իրականացումը շատ հեռու էր թվում, որովհետև մարդու պատկերացումներում անսահման էր երկրագունդն իր մեծությամբ: Այնինչ տիեզերական չափումներով ինչ-որ ակնթարթ հետո իրականություն դարձան ամենավատթար կանխատեսումները: Ակնառու դարձավ գիտական ճշմարտությունը, որ դարերով ձևավորված սառուցյալ գոտին յուրատեսակ սառցարանի դեր է կատարում Երկիր մոլորակի համար՝ ապահովելով վերջինիս ջերմային հավասարակշռությունը: Եվ այսօր մեր մոլորակը նմանվել է տենդահար հիվանդի, անբնական կլիմայական երևույթները պատուհասում են հողագնդի բոլոր անկյունները, այնպես որ այլևս բնական են ընկալվում կլիմայի մշտական անբնական դրսևորումները:

Երկրի վրա ջրի և ցամաքի ծավալային հարաբերակցությունը համընկնում է մարդու օրգանիզմի հեղուկ և ոչ հեղուկ զանգվածների համամասնության հետ: Ըստ գիտնականների՝ տարբեր բնակլիմայական երևույթների և տիեզերական մարմինների ազդեցությամբ մարդու օրգանիզմում տեղի ունեցող շատ փոփոխություններ, օրինակ՝ արյան ճնշման բարձրացումը, նույնը հիշեցնող երևույթներ են առաջ բերում նաև Երկիր մոլորակի վրա, այսպես՝ ջրային զանգվածները, ճնշում առաջ բերելով, հոսում լցվում են երկրակեղևի շերտերի ու խոռոչների մեջ և այլն: Գուցե այս և այլ համընկնող երևույթները ոչ թե զարմանալի, այլ միանգամայն տրամաբանական ու բնական պետք է համարել: Կարելի է հիշել Աստվածաշունչը, որում ասվում է, որ Արարիչը մարդուն ստեղծեց իր պատկերով և նմանությամբ: Մի սերնդի կյանքում դրսևորված ակնառու երևույթ է, թե ինչպես շատ հիվանդություններ (նույն արյան ճնշումը և մեծապես դրանով պայմանավորված սրտանոթային հիվանդությունները) երիտասարդացան ու ստացան համատարած բնույթ:

Այսինքն՝ բումերանգի պես բնությունը վերադարձնում է մեզ այն, ինչ մենք անում ենք իր նկատմամբ: Խորանալով հոռետեսական դատողությունների մեջ՝ գուցե պիտի եզրակացնենք նաև, թե քաղաքակրթական զարգացման ընթացքը մարդ արարածին օրինաչափորեն տանում է դեպի ինքնաոչնչացում, և գուցե այն օրը, երբ մարդը կսթափվի իր արարքների հետևանքների հետ առերեսվելով, այլևս ուշ կլինի ստեղծված իրականությունը շտկելու համար: Իսկ այսօրվա կացությունը պարտավորեցնում է բնապահպանությանը և բնապահպաններին չնայել որպես աղանդի ու աղանդավորների նման մի բանի, այլ գործունեության այս ուղղությունը դիտարկել որպես պետությունների ու ժողովուրդների քաղաքակրթական մակարդակի ցուցիչ:

Այն, ինչ մեր սերնդի աչքի առաջ մեր իսկ հայրենակիցների ձեռքով իրականացավ Հայաստանի անկախացումից ու երկրի ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու իրավունքը ձեռք բերելուց հետո, երևի չափազանցրած չենք լինի, եթե անվանենք գիշատչական գործունեություն: Այլևս օտարի իշխանությունը չէր ցամաքեցնում Սևանը և աչք փակում նրա ձկնային պաշարների ոչնչացման վրա, Մոսկվայի հրահանգով չէին թալանվում ազգի ներկա ու գալիք սերունդների սեփականությունը հանդիսացող հանքահումքային պաշարները, անտառները, գետերը, բնապահպանական հատուկ նշանակության գոտիները, կենդանական աշխարհը և այլն: Այսինքն՝ տպավորությունը, որն այսօր էլ անցած չէ, այն է, թե մենք մեր երկրի վրա հարձակվել ենք վերջին սերունդը լինելու հոգեբանությամբ: Երբ օրերից մի օր ակնհայտ կդառնա, թե Հայաստանում ինչեր են սեփականաշնորհված կամ հատկացված 99 տարով շահագործման, հարց կծագի, թե կա՞ արդյոք ինչ-որ բան, ինչը սրա կամ նրա սեփականությունը չէ, այլ պատկանում է բոլորին:

Մենք իսկապես կկարողանա՞նք մի օր Սևանի մակարդակը հասցնել անհրաժեշտ նվազագույնին, խողովակների մեջ խցկված և այլ վայրերում հիդրոկայանների ծառայության քշված գետերին վերադարձնել իրենց ցամաքած հուներին և ափամերձ տարածքներին, ձկնային վտառների առջև բացել ձվադրավայրերի ճանապարհը, ապահովագրել անտառներն ու նրանց բնակիչներին, դադարեցնել հանքերի անխնա եւ բնապահպանական առումով վտանգավոր շահագործումը, ապահովել Երևանի բնակլիմայական առողջ համակարգը և ազատագրել մայրաքաղաքը բիզնես հոգեբանությամբ հաշմելուց ու կերպարանախեղելուց:

Բնապահպանական գործունեությունը ևս մշակույթ է, և մեր ներկա քաղաքակրթական մակարդակը պետք է չափվի նաև այն հանգամանքով, թե որչափ ազգային ու պետական կամք, գիտակցություն և քաղաքացիական պատասխանատվություն կարող ենք ի հայտ բերել մեր մեջ՝ մեր երկիրը պահպանելու և գալիք սերունդներին անվնաս փոխանցելու համար: Բնապահպանական խնդիրները, պետք է այլևս մաս կազմեն մեր մշտական օրակարգերին, ոչ թե շահարկման առարկա, այլ առողջ քննարկումների նյութ դառնան քաղաքական տարբեր ուժերի և թևերի միջև: Դրանք ոչ թե գործիք պետք է ծառայեն այլևայլ օտար ուժերի ձեռքին՝ ներքաղաքական խնդիրներ հրահրելու համար, այլ ընդգրկվեն դպրոցական և բուհական ծրագրերում՝ ընկալվելով որպես անհատ մարդու եւ հավաքականության դաստիարակվածության ու պարկեշտ վարքի դրսեւորումներ: Պետությունը պետք է ունենա իր բնապահպանական ռազմավարությունը, որը կհանդիսանա կարևոր պայմաններից մեկը կենսագործունեության մյուս ոլորտներում նախաձեռնվող ծրագրերի համար: Պատասխանատվության զգացումը երկրի զավակի եւ քաղաքացու պարտքն է իրեն ծնող երկրի ու միջավայրի հանդեպ:

Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնը պէտք է խարսխուի փոխադարձ հարգանքի վրայ

Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Եագուպեանի հետ

- Ընկեր Վիգէն, ողջ աշխարհին պատուհասած համավարակը փոխեց բոլորի օրակարգերը՝ վերջին ամիսներին դառնալով մարդկութեան թիւ մէկ մտահոգութեան առարկան: Չնայած ստեղծուած տագնապալի վիճակին՝ տեսնում ենք, որ հայկական համայնքները և մեր ազգային կառոյցները դրսևորում են եռանդ ու համախմբուածութիւն հայրենակիցներին ամէնուր անհրաժեշտ օգնութիւններով ապահովելու շնորհակալ գործում՝ չմոռանալով առաւել նեղ կացութեան մէջ յայտնուած միւս համայնքները, օրինակ՝ Լիբանանը: Եթէ հնարաւոր է, ընդհանուր ձևով ներկայացրէք ԱՄՆի հայկական կառոյցների և այդ շրջանակում ՀՅԴի ու նրա ուղեկից միութիւնների, յանձնախմբերի, այլ միաւորների իրականացրած և իրականացուող աշխատանքները:

- Կասկած չկայ, որ COVID-19 համավարակը յանկարծակիօրէն և չսպասուած ձևով վերափոխեց մեր իրականութիւնը: Արդի պատմութեան մէջ մեզի ծանօթ նախընթացներէն ամբողջութեամբ տարբեր ձևով այս աղէտին հետևանքը համաշխարհային տարողութեամբ է և ամէնուր կը զգացուի: Աւելին՝ կայ անկանխատեսելիութեան ազդակը, որ տագնապը շատերուն համար վերածեց գոյութենական խնդրի՝ թէ՛ ֆիզիքական և թէ՛ հոգեբանական ցնցումի իմաստով: Այս նոր իրականութեան ի տես՝ ՀՅԴ շարքերը և ուղեկից կազմակերպութիւնները մտան տագնապը դիմագրաւելու կացութաձևի մէջ, որպէսզի աշխարհի չորս ծագերուն գտնուող մեր համայնքներուն օգնեն՝ Հայաստանէն Արցախ, Լիբանան, Սուրիա, Մ. Նահանգներ, Արժանթին ու այլ երկիրներ: Մինչ կարգ մը կազմակերպութիւններ ևս գործի լծուեցան, սակայն ՀՅԴ «պատասխանը» բնազդային կարելի է համարել՝ հաշուի առնելով իր պատմական դերը Սփիւռքի մէջ, ժողովրդային արմատներուն հետ գործելու իր մօտեցումները և առ այս իր ստեղծած համայնքային կառոյցները:

Հոս՝ Մ. Նահանգներու մէջ, յատկապէս Արևմտեան շրջանէն ներս, Կեդրոնական կոմիտէն ստեղծեց շտապ օգնութեան մարմին մը, որ տեղական մարմիններով կազմակերպեց կարիքաւորներուն օժանդակութիւն հասցնելու գործը՝ Կլենտէյլի, Փասատինայի, Լա Քրեսենթա հովիտի, Հոլիվուտի, Նորթ Հոլիվուտի, Մոնթէպելլոյի կարիքաւոր հայ ընտանիքներուն հասցնելով անհրաժեշտ սննդեղէնի ու յարակից

նիւթերու (հականեխիչներ, դիմակներ) ծրարներ, հիմնականին մէջ մեր Երիտասարդական միութեան անդամներուն միջոցով: Մեր բոլոր ուղեկից կազմակերպութիւնները, ներառեալ ՀՕՄը, ՀՄԸՄը, մասնակից եղան այս հաւաքական ճիգին, որ այս տագնապին մէջ դարձան յոյսի և տոկունութեան խորհրդանիշներ:

Հեռավար կարգով սփռուած արարողութիւններով մեր եկեղեցիները հոգևոր սնունդ հասցուցին համայնքին, իսկ հայկական դպրոցները անմիջապէս որդեգրեցին հեռավար ուսուցման համակարգը՝ արտակարգ արհեստավարժութեամբ: Նոր տեսակի թելադրականութիւն ունեցող լոյս մը ծագեցաւ համայնքէն ներս, յատկապէս գործակցութեան, միասնականութեան ոգիով, որ ի յայտ բերաւ մեր ժողովուրդին ազնիւ յատկանիշները:

- Տեսնում ենք, որ, չնայած ստեղծուած վիճակին, չեն մոռացւում նաև ազգային հիմնական անելիքները՝ Հայ դատի ուղղութեամբ աշխատանքներ, Արցախի ճանաչման հարց, ճիգեր հայկական երկու հանրապետութիւններին ԱՄՆ-ի կողմից տրամադրուող օժանդակութիւնների մեծացման ուղղութեամբ, ճնշում Բաքուի վրայ և այլն:

- Նոյնիսկ այս համաշխարհային համավարակի մթնոլորտին մէջ հրամայական էր Հայ դատի աշխատանքները շարունակելը, ինչ կը վերաբերի Արցախի Հանրապետութեան ճանաչման, Հայաստանի ի նպաստ ծրագիրներու հետապնդում, Հայաստանի տրուող ամերիկեան օժանդակութեան վերաուղղորդումը այն տրամաբանութեամբ, որ կարելի ըլլայ դարմանել

տագնապին թէ՛ առողջապահական և թէ՛ տնտեսական հետևանքները:

Այս աշխատանքները ոչ միայն շարունակուեցան, այլև յաւելեալ թափ ստացան շնորհիւ Հայ դատի յանձնախումբի գրասենեակներուն՝ Ամերիկայի, Եւրոպայի մէջ և այլուր: Նման տարողութեամբ աղէտները կը խախտեն ցարդ գոյութիւն ունեցած ընկերաքաղաքական կացութաձևը: Սա նաև պէտք է տեսնել իբրև պատեհութիւն յաւելեալ ձեռքբերումներու Հայ դատի և մեր ազգային պահանջատիրութեան պարունակին մէջ:

- Ինչպէս յայտնի է, Հայաստանի ներկայ իշխանութիւնները լուծարեցին Սփիւռքի նախարարութիւնը՝ փոխարինելով այն յանձնակատարի գրասենեակով: Ինչպէ՞ս էք գնահատում հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների ներկայ վիճակը՝ գործակցութեան արդիւնաւէտութեան և այլ առումներով: Իհարկէ, այս պարագայում ևս պէտք է զանց առնենք համավարակի պատճառով վերջին ամիսներին ստեղծուած առարկայական խոչընդոտները, երբ պարտադրուած ինքնամեկուսացման մէջ են ոչ միայն մարդիկ, այլև պետութիւնները:

- Անկախութենէն ի վեր Սփիւռքի վերաբերեալ ՀՀ իրարայաջորդ իշխանութիւններու որդեգրած հայեցակարգը ցոյց կու տայ Սփիւռքին նկատմամբ լուրջ անտեղեակութիւն մը: Դժբախտաբար, փոխանակ ուղղութիւն սրբագրելու անհրաժեշտ քայլեր առնելու, կառուցային լուծումներ որդեգրուեցան, որոնք ծառայեցին սխալներու մշտատևութեան: ՀՀ ներկայ վարչակազմին պարագային նախարարութիւնը լուծարքի ենթարկելու որոշումը մեզ հասցուցած է նոր ու աւելի բարդ կէտի մը, որ աւելի ևս կը խոչընդոտէ աշխարհագրական սահմանները զանցող ու լիիրաւ ուժականութեամբ օժտուած Հայաստանի մը կերտումը:

Իրականութեան մէջ երկրորդական է այն, թէ ինչ է կառոյցին էութիւնը: Երբ կը պակսի հիմնական հասկացութիւնը, և կառոյցը հիմնուած է խոցելի ենթադրութիւններու վրայ, անկասկած որ պիտի երերայ, ինչպէս որ պատահեցաւ անցնող տասնամեակներուն՝ Հայաստանի վերանկախացումէն ասդին: Հայաստան-Սփիւռք երկկերդ և նուիրապետական ըմբռնողութիւնը կը ժխտէ պատմական իրականութիւնն ու հոլովոյթը: Սփիւռքեան ինքնութիւնը կազմաւորուած է վերապրումի և գոյատևման պարունակին մէջ, որ իր էութեամբ իսկ ճկուն է և պատշաճող և հետևաբար նաև իր միջավայրին համապատասխանող: Սփիւռքեան ինքնութեան այս երեսը գործնապաշտ է, նպատակաուղղուած և ազգայնամոլութենէ զերծ: Միաժամանակ սփիւռքեան ինքնութիւնը զարգացած է այնպիսի ընկերա-մշակութային պարունակի մը մէջ, ուր տեղատոհմային պատկանելիութիւնը կը հանդիսանայ հասարակաց դաշտ մը: Այնտեղ անհատական փորձառութիւնները կը ստանան հաւաքական բնոյթ: Այս տեսակի ինքնութիւն մը ինքզինք կը դրսևորէ կազմակերպչական ընդարձակ, բազմերես ու բազմաշերտ ցանցով մը, ուր ի վերջոյ կը կազմաւորուի ազգային ձգտում ըսուածը:

Ինչպէս վերը նշեցինք, կազմակերպչական այս ցանցերը ընդարձակ են և բազմաշերտ: Իբրև այդպիսին՝ անոնք հետք կը ձգեն անհատական «պատումին» վրայ և միաժամանակ պարիսպ կը հանդիսանան ապամշակութայնացումին և որոշ չափով ձուլումին դիմաց: Սփիւռքեան ինքնութիւնը կ'ենթադրէ եղաշրջական յարատև ընթացք մը և երբեք կայուն, լճացած իրավիճակ: Անոր տրուելիք որևէ պարզունակ սահմանում սխալ է ու մոլորեցնող: Օրինակի համար, վերջերս Հայաստանէն լրագրող մը առաջադրեց, որ Սփիւռքը կարելի է բաժնել «ինստիտուցիոնալ» և «ոչ ինստիտուցիոնալ» հանրոյթներու, հետևաբար Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները կարելի է ըմբռնել այս մօտեցումով: Այս մէկը լաւագոյն պարագային ցոյց կու տայ Սփիւռքին նկատմամբ մակերեսային ու պարզունակ ճանաչողութիւն մը՝ չըսելու համար, որ ան լրջօրէն կը թերագնահատէ Սփիւռքի պատմականօրէն հարուստ եղաշրջական հոլովոյթը: Սփիւռքեան որևէ կառոյցի մը անհատական անդամակցումը չի կրնար սահմանել Սփիւռքը սև ու ճերմակ տարազումով, որովհետև սփիւռքեան կազմակերպութիւնները չեն համապատասխաներ «Institute»ի մը աւանդական հասկացութեան:

Սփիւռքի ծնունդոցը ամէն բանէ առաջ փորձառութիւն մըն է, որ, ի վերջոյ իր հոլովոյթը ապրելով, վերածուած է կոկուած-մշակուած և համայնքին վրայ խարսխուած ենթակառոյցի մը, որ արտայայտիչն է այս փորձառութեան:

Հետևաբար կառուցային աւանդական յատկանիշները կիրարկելի չեն Սփիւռքին պարագային, ինչպէս որ են ազգ-պետութեան մը պարագային: Հետևաբար յղացքային առումով սխալ մօտեցումները, ինչպէս «ինստիտուցիոնալ» և «ոչ ինստիտուցիոնալ»ը կամ վիճակագրական ցուցանիշները (ուր փորձ կը կատարուի ճշդելու անդամակցութեան տոկոսը այս կամ այն կազմակերպութեան կամ կուսակցութեան), մեզ կրնան առաջնորդել միայն սխալ ուղիի: Քաղաքական մասնակցութեան իմաստով կան բազմամակարդակ ազդեցութեանց գօտիներ և համայնքային ուժական «կանոններ» և փրոթոգոլներ, որոնք անկարելի կը

դարձնեն վիճակագրական տուեալներով Սփիւռքի հեղինակութեան այսպէս կոչուած «ուժերը» սահմանել: Հետևաբար այսպիսի թիւրըմբռնումներու հիման վրայ կառոյցի մը ստեղծումը կրնայ միայն արգելք հանդիսանալ Հայաստան-Սփիւռք երկարաշունչ և կառուցողական յարաբերութեանց վրայ:

Սփիւռքեան կազմակերպչական ցանցերը չձուլուած սփիւռքահայուն համար իր էթնիկ-ցեղային ինքնութեան մաս կը կազմեն անկասկած: Կազմակերպչական անդամակցութիւնը դերակատար է անոր մասնակցութեան և «աքթիվիզմին» չափին մէջ, բայց և այնպէս, ատիկա չի սահմաներ սփիւռքահայ անհատին ազգային ինքնութիւնը:

Սփիւռքը կարելի է ըմբռնել այն պարագային, երբ զայն իբրև «սիստեմ» ընդունինք և ոչ թէ իբրև հանրոյթ մը, որուն զանազան մասնիկները կարելի է զիրար կցել կամ անջատել. «սիստեմիք» մօտեցումը կը բացառէ այդպիսի հայեացք:

Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնը պէտք է սկսի փոխադարձ յարգանքի դիտանկիւնէն: Այսինքն՝ պատմական իրողութիւնը, ատոր հոլովոյթը (տինամիզմը) ըմբռնելու կամեցողութիւն, ինչպէս նաև Սփիւռքին տեղն ու դերը իբրև անկախօրէն գործող, լիազօր և բարձրակարգ նրբութիւններով օժտուած ազգային ուժ մը, որ անհրաժեշտ է սիստեմաթիք կերպով համարկել Հայկական աշխարհի նոր իրականութեան մէջ, քան թէ զայն համարել երկկողմանի յարաբերութիւններու գործիք: Սկզբնական շրջանին, երբ Հայաստան նոր վերանկախացած էր (Սպիտակի աղէտէն և Արցախեան պայքարէն վերջ. կարելի էր այդ տարիները կոչել «կազմաւորման հանգրուան»), անհրաժեշտ էր միացեալ Սփիւռք մը, որ խաղար իր զօրակցական դերը: Այդ տարիներուն, գոյատևումը կը գերակշռէր ամէն ինչ: Յաջորդող, համեմատաբար կայուն տարիներուն, սակայն, անհրաժեշտ էր, որ այս յարաբերութիւնը զարգանար դէպի աւելի բարձր հարթութիւն, ուր առնուազն կարելի պիտի ըլլար յստակեցնելու ճանապարհային քարտէս մը, որ յանգէր «սահման չունեցող ազգ»ի՝ խարսխուած ազգ-պետութեամբ: Հայկական աշխարհ մը, որ հիմնուած ըլլայ փոխադարձ յարգանքի, ներազգային այլազանութեան նկատմամբ իրաւացի ըմբռնողութեան, հաւասարէ հաւասար յարաբերութեան, ժողովրդավարութեան և նմանօրինակ այլ հանգամանքներու վրայ: Դժբախտաբար, չկրցանք «բարերար-օգնող»ի յարաբերութենէն անդին անցնիլ, որ ժամանակի ընթացքին միայն փոխադարձ անհանդուրժողութեան և անվստահութեան կը յանգեցնէ, ըլլայ ատիկա բացայայտ թէ ծածուկ: Դժբախտաբար, Սփիւռքի նախարարութիւնը, կամ հիմա Սփիւռքի նորակազմ յանձնակատարի գրասենեակը չեն կրնար դրական փոփոխութեան կրողները ըլլալ:

Սփիւռքը՝ իբրև բաբախուն և ուժական ընկերամշակութային մարմին, ճիշդ ձևով չէ գնահատուած: Աւելին՝ Հայաստանի կառավարութեան քաղաքականութիւն մշակողները կը շարունակեն առաջարկել ծրագիրներ, որոնք կ'առաջադրեն «կազմակերպել» Սփիւռքը ու սահմանել անոր դերը Հայաստան-Սփիւռք լայն ծիրի մը մէջ, երբ կայ իսկական շփոթ, թէ իրապէս ինչ է այդ ծիրը: Տակաւին կը սպասեմ այնպիսի առաջարկի մը, որ ըլլայ առարկայական, փաստական հիմքերու վրայ, որ փորձէ համադրել ակնառու թիւով ուսումնասիրութիւններ, որոնք կ'առնչուին սփիւռքեան բարդ փորձառութեանց այլազան երեսներուն:

Աւելի բարդացնելով իրավիճակը՝ Սփիւռքի մէջ շատ մը անհատներու եզրակացութիւնները ևս զուրկ են փաստական հիմնաւորումէ և հետևաբար նաև մոլորեցնող են: Պէտք է խուսափիլ լուծումներ առաջադրելէ՝ առանց խորապէս ըմբռնելու այն «տինամիզմը», որ մեր ժողովուրդը հասցուցած է պատմութեան այս քառուղիին:

Ազդու և դրական փոփոխութեան համար նախապայման է առաջադէմ տեսլական մը՝ առանց անցեալէն մեր սորված դասերը անտեսելու: Սակայն ընկերային կարգի կացութաձևի փոփոխութիւնը կրնայ միայն յանգիլ ակնառու և երկարատև դրական զարգացումի, եթէ անցեալը տեղ մը վերջնականապէս մէկդի դրուի, և ապագայի յստակ տեսլական մը ուրուագծուի մեր առջև: Տեսլական մը, որուն նպատակն է իրականացնել իրական միաւորում՝ ի գործ դնելով մեր կարողականութիւնը և «ռեսուրսները» և առաւելագոյնս լարելով մեր ազգին իսկական ներուժը:

Մինչ կը տօնենք անկախութեան տօնը, մեր հանրապետութեան հիմնադրութեան տօնը, պէտք է վստահեցնենք, որ մեր ընտրանքները կը ցոլացնեն մեր յոյսերը, և մեր քայլերը կը մարմնաւորեն այդ յոյսերը: Այլապէս մեզ սահմանողը պիտի ըլլան անցեալի կապանքները և ոչ թէ ապագայի մը տեսլականը: ■

Բնապահպանական ուրոյն փիլիսոփայութեան համար

Սիւզան Խարտալեան

Կենդանիներու, բնութեան և բնավայրերու բարոյական և իրաւական կարգավիճակի չափն ու բնոյթը մարտահրաւէր է, որ պէտք է ընդունիլ:

Բնապահպանական բարոյագիտութիւնը էթիկայի այն ճիւղն է, որ կ'ուսումնասիրէ ոչ միայն մարդու և շրջակայ միջավայրի միջև կապը, այլ նաև թէ ինչ դեր ունի բարոյագիտութիւնը այս գործին մէջ: Բնապահպանական բարոյագիտութեան մէկնակէտը այն է, որ մարդը մաս է մէկ հասարակութեան, ուր կը ներառուին այլ ապրող էակներ՝ բուսական և կենդանական աշխարհը իր բոլոր մանրամասնութիւններով, որոնք ոչ միայն մեր մոլորակի, այլև մարդու կեանքի անփոխարինելի մաս կը համարուին: Այսպէս, բարոյագիտութիւնը կը պահանջէ, որ իւրաքանչիւր մարդ, որ կ'առնչուի բնութեան հետ, պէտք է յարգէ և առաջնորդուի բարոյագիտութեան օրէնքներով:

Բնապահպանական փիլիսոփայութեան այս մօտեցումը կ'ընդլայնէ բարոյագիտութեան աւանդական սահմանները՝ մարդկայինի հետ ներառելով ոչ մարդկային աշխարհը: Ուրեմն բնապահպանական բարոյագիտութիւնը կիրառական փիլիսոփայութեան մէկ մասն է, որ լուսարձակի տակ կ'առնէ ոչ միայն բնապահպանական արժէքներու հայեցակարգային հիմքերը, այլ նաև աւելի շօշափելի-գործնական ուրիշ խնդիրներ՝ կապուած հասարակութեան վերաբերմունքի ու անոր հետևող գործողութիւններուն կենսաբազմազանութեան պահպանման և բնապահպանական համակարգերու պաշտպանութեան քաղաքականութեան հետ:

Ան նաև մեծ ազդեցութիւն ունի մեր կեանքին մօտէն առնչուող այլ բնագաւառներու, ինչպէս, օրինակ, բնապահպանական օրենսդրութեան, բնապահպանական հասարակագիտութեան, էկո-տնտեսագիտութեան, էկո-աշխարհագրութեան և նոյնիսկ էկո-աստուածաբանութեան վրայ: Բնապահպանական բարոյագիտութիւնը փաստօրէն չի կրնար անբաժան մնալ քաղաքական կեանքէն և քաղաքական կուսակցութիւններու ծրագրէն, յատկապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար, որ իր պատմութեան ողջ ընթացքին միշտ եղած է հայութիւնը և մարդկութիւնը յուզող խնդիրները սահմանելու առաջատարի դերին մէջ:

Համաշխարհային տաքացում, կլիմայի փոփոխութիւն, անտառահատում, օդի աղտոտում, աղմուկ, բնական աղբիւրներու վատնում ու քայքայում, կենսաբազմազանութեան ոչնչացման սպառնալիք՝ ասոնք քանի մը օրինակներ են այն հարցերէն, որոնցմէ կը տառապեն մեր մոլորակը և իհարկէ անմիջական մեր միջավայրը, մեր հայրենիքը: Քաղաքական կուսակցութիւն մը, որ կը փայփայէ իր երկրի ոչ միայն ներկան, այլ նաև ապագան, իրաւունք չունի անտեսելու, հեռու մնալու այս բարդ խնդիրներէն: Հասարակական

կարծիքը միասնաբար ձևաւորելու, նախաձեռնելու, ակնկալելի բարդութիւնները դիմագրաւելու և լուծումներ փնտռելու դժուար գործը քաղաքական անյետաձգելի պարտաւորութիւն է, որուն պէտք է լծուիլ անյապաղ:

Այս համաթեքսթին մէջ կ'ուզեմ քննարկման բերել բնապահպանական բարոյագիտութեան խնդիրը: Կը կարծեմ, որ առաջին հերթին բոլորս պէտք է ընդունինք, որ բնապահպանական բարոյագիտութեան առանցքը մարդոց և Երկիր մոլորակին միջև յարաբերութիւններն են: Երկրորդ՝ մենք պիտի սահմանենք և հաստատենք, թէ որոնք են այդ յարաբերութիւնները կանոնաւորող օրէնքները:

Բնապահպանական բարոյագիտութեան դիմելով՝ մենք կ'ապահովենք որ բնապահպանութեան քննարկումը «էլիթիսթ» չըլլայ, այլ իր գործընթացի բովին մէջ ներառնէ ժողովրդային մասնակցութիւն, որ ես ու դուն՝ իբրև անհատներ, իւրաքանչիւրս կատարենք մեզի ինկած բաժինը՝ շրջակայ միջավայրը անվտանգ և պաշտպանուած պահելու համար: Մարդիկ պիտի հասկնան, որ ամէն անգամ, երբ ծառ կը կտրենք, հանք կը շահագործենք, ջուրի պաշարները անխնայ կը վատնենք, մենք կ'օգտագործենք բնական և համայնական մեր ռեսուրսները, որոնք ամէն օր աւելի ու աւելի կը նօսրանան և անգտանելի կը դառնան: Անհրաժեշտ է, որ ես ու դուն անհատապէս և հաւաքաբար կատարենք մեզի բաժին ինկած գործի մասը՝ շրջակայ միջավայրը պաշտպանելու և վտանգէ զերծ պահելու համար:

Սակայն իրականութիւնը ցոյց կու տայ, որ սա այդքան ալ դիւրին գործ չէ, որքան ալ իբրև անհատներ պատրաստ ըլլանք մի քանի պարզ և հեշտ

փոփոխութիւններ կատարելու մեր կեանքէն ներս: Հարցը «հոլիստիկ» լուծումներու կը կարօտի: Այստեղ կազմակերպուած ծրագրելն ու գործելը միայն սկիզբն է:

Աշխարհի բնակչութեան աննախընթաց արագ աճի բերմամբ բազմապատիկ աճած է բնական պաշարներու սպառումը: Այդ պաշարներու արագընթաց իւրացումն ու վատնումը կը ջլատէ և զերոյականցնէ մեր մոլորակի ունակութիւնը՝ մատուցելու այն ծառայութիւնները, որոնք մարդկութեան պէտք են: Ռեսուրսներու սպառումը կը շարունակուի աննախընթաց արագութեամբ, իսկ պաշարներու բնական համալրումը կ'ընթանայ դանդաղ:

Բնապահպանական բարոյագիտութեան բնորդը (մօտելը) պիտի հիմնուած ըլլայ գիտական և հասարակական արժէքներու փոխըմբռնման վրայ. անիկա ի մի պիտի բերէ մէկ կողմէ գիտութիւնը, միւս կողմէ՝ մարդկային արժէքները, բարոյական սկզբունքները և որոշումներու կայացման գործընթացը: Իսկ բարոյագիտութեան առարկայացումն ու գործնականացումը հեշտ և արագ ըլլալիք բան չէ: Մարդոց ենթագիտակցութեան մէջ բարոյա-արժէքային նոր համակարգ մշակելը մէկ օրուան գործ չէ: Բնապահպանական արդարութեան հասնելու համար մեր առջև ունինք երկարաժամկէտ աշխատանք:

Այս մէկը կարևոր է նշելը, քանի որ շրջակայ բնապահպանական բարոյագիտութեան թեման միանշանակ չ'ընդունուիր և նոյնիսկ հակադիր ուժերու միջև բախումներ կը յառաջացնէ: Բնապահպանական բարոյագիտութեան շուրջ կան տեսական և գործնական բնոյթի վէճեր: Կան մարդիկ, որոնք կը հաւատան, որ բոյսերու և կենդանիներու՝ բնական աշխարհին հետ մեր յարաբերութիւններուն նոր սահմանում տալով կ'անտեսուին աւանդական բարոյագիտական նորմերը:

Որո՞նք են այն սկզբունքները, որոնք պէտք է մեզ առաջնորդեն շրջակայ միջավայրի հարցերուն մէջ: Ինչո՞ւ կարևոր է կենսաբանական համայնքը՝ կենդանական բնաշխարհը և բնավայրերը, մարդկային յարգանքի արժանի երևոյթներու շարքին ներառելը: Փիլիսոփայական բնոյթ կրող այս հարցերուն պատասխան տալու առաջին փորձերէն մէկը կը պատկանի Ալտօ Լէոփոլտին (Aldo Leopold), որ հետաքրքրական զուգադիպութեամբ փիլիսոփայ չէր, այլ անտառատնտեսութեան և հողերու կառավարման մեծ փրոֆեսոր: 1949ին գրուած իր «The Land Ethic» («Հողին բարոյականը») յայտնի ակնարկին մէջ ան կը բանաձևէ մօտաւորապէս հետևեալ սկզբունքը. «Ճիշտ է այն, որ կը ձգտի պահպանելու կենսական համայնքի ամբողջականութիւնը, կայունութիւնը և գեղեցկութիւնը: Սխալ է այն, որ կը ձգտի հակառակին կամ այլ բանի»: Այս սկզբունքով ան հարցականի տակ կ'առնէր 19րդ դարէն եկող պահպանողական այն հաւատամքը, ըստ որուն՝ բնութիւնը պէտք է պահպանել միայն տնտեսական և գործնական շահերէ մեկնած: Կրնայ զաւեշտալի թուիլ, բայց այս համեստ մարդն իր հարցադրումով արժէքի վերածեց թռչունների ու ծղրիթներու երգը, անտառներու և ծաղիկներու գեղեցկութիւնը՝ իբրև բնութեան արգասիք: Ան նաև ուշադրութեան կիզակէտին բերաւ բնութեան մէջ իրերու փոխկապակցման կարևորութիւնը, մատնանշեց և պաշտպանեց «հոլիստիկ» մօտեցումը, որ այսօր կայ բնապահպանական բարոյագիտութեան մէջ: Ան կը պնդէր, որ բնապահպանական բարոյագիտութիւնը պէտք է կեդրոնանայ համակարգերու վրայ և ոչ թէ առանձին իրերու: Բնութենէն մեր կախուածութիւնը հնարաւոր է հասկնալ միայն այն ատեն, երբ ունինք կեանքի փոխկապակցուածութեան խոր և համապարփակ գիտակցութիւն:

Լէոփոլտի ժամանակէն ի վեր անցած են 70 տարիներ: Այսօր բնապահպանական փիլիսոփայութեան դաշտն ընդլայնուած է, և իհարկէ կան նոր տեսակէտներ, թէ բնութեան հետ ինչպիսի պէտք է ըլլայ մեր յարաբերութիւնը, որոնք են մետաֆիզիքական և բարոյական այն սկզբունքները, որոնք կը ձևաւորեն մեր մտածողութիւնը:

Կ'ուզեմ այստեղ առանձնացնել բնապահպանութեան փիլիսոփայութեան առնչուող երեք խնդիրներ, որոնք մինչև այսօր կը յամենան, և մենք՝ որպէս անհատներ ու հաւաքականութիւն, որպէս քաղաքական էակներ և քաղաքական կազմակերպութիւններ, պարտաւոր ենք կեցուածք որդեգրելու:

ԱՌԱՋԻՆԸ բնութեան նկատմամբ մեր մարդակեդրոն տեսակէտի յաղթահարման խնդիրն է: Այսինքն՝ այն մօտեցումը, որ բնութիւնը միայն մարդկային շահերուն ծառայելու համար է, ժամանակավրէպ է: Այս տեսակէտը կը շրջանցէ այն միտքը, որ բնութիւնը ինքնին ներյատուկ արժէք է:

ԵՐԿՐՈՐԴ՝ ինչպէ՞ս բնորոշել մարդու տեղը բնութեան մէջ. արդեօք մենք մեզ պէ՞տք է դասենք հաւասար բնութեան այլ էակներու հետ, առանց յատուկ արտօնութիւններու կամ յաւելեալ իրաւունքներու. մի՞թէ ճիշդ է աւելի բարձր դերակատարութիւն վերապահել մեզի բնութեան ձևաւորման և կառավարման մէջ:

ԵՐՐՈՐԴ՝ ի՞նչ հիմունքներով մենք պէտք է բարոյական և իրաւական կարգավիճակ տանք կենդանիներուն, բոլոր օրկանիզմներուն և բնավայրերուն:

Այս թեմաներէն իւրաքանչիւրը լայն քննարկման առարկայ է բնապահպանական փիլիսոփայութեան մէջ, և ցարդ միաձայնութիւն չկայ պատասխանին շուրջ: Սակայն պէտք չէ զարմանալ: Խնդիրները բարդ են: Հայկական համաթեքսթի մէջ մնալով՝ օրինակները շատ են: Բոլորս ամէնօրեայ մեր կեանքին մէջ կը տեսնենք, թէ ինչպիսի տարաբնոյթ վէճեր կան բնապահպանական քաղաքականութեան առնչութեամբ՝ սկսած հանքերէն՝ բանա՞լ, թէ՞ չբանալ, Սևանի ջրապաշարներու օգտագործումը կանոնաւորե՞լ, թէ՞ ոչ, թափառող շուները հաւաքել-սպանե՞լ, թէ՞ պաշտպանել, վայրի կենդանիները պաշտպանե՞լ, թէ՞ որսալ, բազմակենսականութեան պահպանման հետամուտ ըլլա՞լ, թէ՞ անտեսել, կենդանիներու իրաւունքներու պաշտպանութիւնը հակադրե՞լ մարդու իրաւունքներու պաշտպանութեան, թէ՞ ոչ, որսորդութիւն թոյլատրե՞լ, թէ՞ արգիլել, ձուկ

բուծանել Արարատեան դաշտին մէջ, թէ՛ ոչ, թոյլ տա՞լ տարածքներու անապատացումը, թէ՛ պահպանել և աքթիւ պաշտպանել անտառները, միս ուտե՞լ, թէ՛ ոչ, ջուրը «կազիֆիկացնել» և վաճառե՞լ, թէ՛ ոչ... Նման հարցադրումներու թիւը շատ է:

Կարելի՞ է յաղթահարել մարդակեդրոն մեր աշխարհընկալումը:

Պատկերացուցէք պահ մը, որ հսաւոր աղէտի մը հետևանքով բնութեան մեծ մասը աւերուած է, մարդկութիւնը՝ վերացած, և դուն կամ ես Հայաստանի մէջ ապրող վերջին մարդն ենք: Ենթադրենք նաև, որ ես կամ դուն հնարաւորութիւն ունինք առյաւէտ ոչնչացնելու բնութեան մնացած՝ վերապրած մասը: Դուք գիտէք, որ բնութեան կորուստէն այլևս ուրիշ ոչ ոք կրնայ տուժել, քանի որ այլևս մարդ չէ մնացած: Ի՞նչ կ'ընէ մեր ներգիտակցութիւնը: Կ'ենթադրեմ և կը յուսամ, որ պատասխանը անվիճելի է, որ ճիշդ չէ ոչնչացնել բնաշխարհը, նոյնիսկ երբ մարդ արարածը դադրի գոյութիւն ունենալէ, որ մենք պէտք է յարգենք բնութիւնը, քանի որ ճիշդը այդ է, չկեդրոնանանք միայն բնութեան օգտակարութեան երևոյթին վրայ: Մէկ խօսքով՝ մեր պատասխանով մենք կրնանք յաղթահարել մեր մարդակեդրոնութիւնը՝ բնութեան տալով յատուկ ներարժէք:

Իրաւացի հարցադրումներ: Ի՞նչ նկատի ունինք երբ կ'ըսենք «ներարժէք», և արդեօք այսպիսի հայեցակարգի անհրաժեշտութիւն կա՞յ մեր կեանքին մէջ: Հնարաւո՞ր է, որ բան մը արժէք ունի առանց դուրսէն, իմա՛ մարդու կողմէ գնահատման առարկայ դառնալու: Բնապահպանները կը պնդեն, որ բարոյագիտութիւնը կը պահանջէ, որ մենք յարգենք բնութիւնը նոյնիսկ այն պարագային, երբ ան մարդկային օգուտ չունի: Թէ՛ կենդանիները, թէ՛ կենսաբանական համակարգերը և թէ՛ բնական վայրերը (խօսքը բնակելի վայրի մասին չէ) ունեն իրենց ներարժէքը, և հետևաբար մարդը բարոյական պարտաւորութիւններ ունի անոնց նկատմամբ:

Բնութիւնը, ճիշդ է, մարդոց կը տրամադրէ ռեսուրսներու հարուստ բազմազանութիւն, ճիշդ է, որ մենք որպէս մարդ գոյատևելու համար կ'օգտուինք անոր բարիքներէն: Ճիշտ է նաև, որ բնութիւնը հաճոյք կը շնորհէ մեզի. բնութիւնը միայն գործիքային չէ: Օրինակ անտառներու պարագային ինչո՞ւ պէտք է պահպանել անտառային բնութիւնը: Ոմանք կը մատնանշեն անտառներու բազմաթիւ արժէքաւոր բուժական յատկութիւնները կամ այն փաստը, որ անոնք կը պաշտպանեն մոլորակը ածխածինէն: Սակայն կան նաև ուրիշներ, որոնք անտառները կը պաշտպանեն պարզապէս, որովհետև անտառները ունին իրենց ուրոյն բնարժէքը: Այս տարբերութիւնը կարևոր է: Բայց երկու տեսակէտներն ալ մարդածին-մարդակեդրոն են, քանի որ մարդկային արժէքներն են, որ կ'որոշեն, թէ ինչն է արժևորելի բնութեան մէջ, և ինչը՝ ոչ:

Այս պատճառով որոշ փիլիսոփաներ կ'առանձնացնեն նեղ մարդակեդրոնութիւնը աւելի լայնէն. լայն մարդակեդրոնութիւնը իր հետ կը բերէ բնութեան արժէքներու մի ամբողջ տեսականի: Սա կարևոր է քաղաքականութեան մէջ գործնական իմաստով. եթէ գործնապաշտ բնապահպաններ ենք, ապա ինչպէ՞ս որոշում կայացնենք, բնապահպանական ի՞նչ նպատակներ կը կորսնցնենք կամ կը շահինք բնութեան ներարժէքի վրայ հիմնուած փիլիսոփայական տեսութիւն ընդունելով, կամ հակառակը՝ ի՞նչ կը շահինք ու կը կորսնցնենք, երբ կ'ապաւինինք տեսութեան մը, որ մարդակեդրոն է, հիմնուած է միայն մարդու արժէքային համակարգին վրայ:

Մարդուն տեղը բնութեան մէջ

Կրօններու մեծ մասին համաձայն՝ մարդը ստեղծուած է Աստուծոյ պատկերով, և Աստուած ինք մարդը տեղադրած է բնութեան մէջ: Աստուած մարդուն իրաւունք տուած է օգտագործելու բոյսերը, կենդանիները և բնական ամէն ինչ՝ մեր սեփական կարիքները բաւարարելու համար: Բնութեան ընկալման այս մօտեցման ուղղակի արդիւնքը մարդուն ամբարտաւան վերաբերմունքն է դէպի բնութիւնը: Այդ ամբարտաւանութիւնը ամէն օր աւելի կը մեծնայ գիտութեան և արհեստագիտութեան (թեքնոլոճի) զարգացման զուգահեռ:

Իհարկէ, կարելի է բանավիճիլ կրօնի և բնութեան յարաբերութեան շուրջ: Այստեղ արդէն հրամայական է վերատեսութեան ենթարկել այն նախադրեալները, որոնք մարդուն կու տան բնութեան հետ որպէս գերադաս վարուելու ազատութիւն:

Բնապահպաններու խումբ մը կայ, որ անհրաժեշտ կը համարէ հարցականի տակ առնել մարդու գերակայութեան ուսմունքը, քանի որ բնապահպանական բազմաթիւ խնդիրներ արդիւնք են այլ կենդանի էակներու նկատմամբ մարդու ցուցաբերած ամբարտաւանութեան և արհամարհանքին: Մարդը կենսաբանական միջավայրի փոքր մասն է միայն և ոչ թէ բնութենէն վեր կամ դուրս:

Բոլոր օրկանիզմներն ունին իրենց իրաւունքները: Կայ նոյնիսկ փորձ՝ ուրուագծելու բարոյական այն սկզբունքները, որոնք կարող են առաջնորդել մեզ կանխարգիլելու մեր և բնութեան միջև բախումը: Մենք մնայուն հակասութիւններու մէջ ենք, օրինակ՝ սպորտի համար որսն ու ձկնորսութիւնը սխալ են, բայց դպրոց, գրադարան կամ օդակայան կառուցելու համար կենդանիներէն տարածք վերցնելը արդարացուած է, քանի որ այս գործողութիւնները կը ծառայեն որոշ մարդոց շահերուն կամ մեծ թիւով մարդոց կարիքներուն: Մարդը միշտ կը գտնէ կենսաբանական իրաւունքներու այլ տարածքներ խուժելու ինքնարդարացումներ: Այս հակասութիւնները կը հաստատեն մարդու և բնութեան միջև հաւասարութիւն դնելու շուրջ առկայ լարուածութիւնը: Մենք մեր գործողութիւններուն մէջ կ'առաջնորդուինք այնպիսի չափանիշներով, որոնք կը հակադրուին կենսաբանական այլ արարածներու գոյութեան և գոյատևումի խնդրին: Ուրեմն հակասութենէն կը յառաջանայ հետևեալ հարցը.կա՞ն, և եթէ այո, որո՞նք են բնութեան այլ տարածութիւն «ներխուժելու», այսպէս ըսած, պատշաճ սահմանները: Բնութիւնը ինք պատասխան չունի: Պատասխանելը

մեր պարտականութիւնն է:

Մարդը բնութեան մէջ տեղաւորելու և միաժամանակ զայն յատուկ իրաւունքներով օժտելու հետևանքով ստեղծուած լարուածութեան այլ օրինակ մըն է կենսաբազմազանութեան (biodiversity) պահպանման խնդիրը: Այն պնդումը, որ պէտք է պահպանենք բնութեան բոլոր տեսակները (species), միանշանակ չ'ընդունուիր մարդոց կողմէ: Կը հակաճառեն, որ ժամանակի ընթացքին ինքնաբերաբար վերացեր են բնութեան բազմաթիւ տեսակներ, և թերևս որոշ տեսակներ չեն կրնար գոյատևել այլ տեսակներու կողքին: Աւելին, օրինակ, մարդը կը գոյատևէ այն պատճառով, որ ան ստիպուած է պաշտպանելու իր բնակելի տարածքը: Սա մեզ (մարդ արարածը) կը դնէ բնութիւնը տնտեսող «մենեճերի» դերին մէջ, և մենք կը դադրինք միայն կենսաբանական արարածներ ըլլալէ: Բայց եթէ մարդը պատասխանատուութիւն կը կրէ տեսակներու գոյատևման համար, ապա կրկին մենք մեզի կու տանք առանձնայատուկ դեր բնութեան մէջ, բան մը, որ կը հակասէ կենսակեդրոն ու բնակեդրոն հաւասարութեան սկզբունքին:

Մէկ խօսքով՝ ինչպէ՞ս պէտք է բնութագրենք մեր տեղը բնութեան մէջ: Պատասխանը կը շարունակէ մնալ մարտահրաւէր:

Բարոյական և իրաւական կարգավիճակի սահմանումը

Կայ շատ հին հարցադրում մը՝ արդեօք ճի՞շդ է և անհրաժեշտ կենդանիները ներառել բարոյական դաշտ՝ թեթևցնելու կամ վերացնելու համար անոնց տառապանքն ու շահագործումը: Քանի անգամներ մենք մեզի հարց չենք տուած՝ «Սիւզա՛ն, կենդանիները ցաւ կը զգա՞ն»: Կատու, շուն պահողները, նոյնինք գիտցին, ինչպէս նաև կենդանիներու բարեկեցութեան և կենդանիներու իրաւունքներու պաշտպանութեան շարժումները գիտեն, որ պատասխանը այո է: Եթէ այո, ուրեմն անոնք արժանի են յարգանքի և բարոյական ուշադրութեան:

Թէև կենդանիներու բարեկեցութեան և անոնց իրաւունքներու պաշտպանութեան շարժումները միշտ չէ, որ կը բաժնեն բնապահպաններու բոլոր նպատակները, սակայն կայ ընդհանրական առաջադրութիւն մը, որ ունի փիլիսոփայական հիմք՝ մոլորակի բոլոր օրկանիզմներուն և բնական վայրերուն տալ բարոյական կարգավիճակ:

Յաջորդ հարցադրումը՝ բնական վայրերը, ծովը, լիճը, անտառը, անապատը, սարերը, պէ՞տք է ունենան բարոյական և օրինական իրաւունք՝ ոչ պատշաճ օգտագործման առաջքը առնելու համար: Վայրերը հաճոյք կամ ցաւ չեն զգար, հետևաբար սխա՞լ է լեռը շահագործելը, փորելը, քանդելը կամ հնագոյն ծառերը արմատախիլ ընելը: Կարճ՝ պատրա՞ստ ենք բնական վայրերուն և ապրող բոլոր օրկանիզմներուն տալու բարոյական կարգավիճակ:

Ընդունինք, որ մեր բարոյական աւանդոյթները պատշաճ կերպով չեն վերաբերիր բնութեան վայրերու և կենդանիներու բարոյական պահանջներուն:

«Յարգենք կեանքը» կրնայ դառնալ մեր լոզունգը:

Բարոյական և իրաւական գնահատման այս քայլը կրնայ ոմանց համար խնդրայարոյց ըլլալ, քանի որ ան կրնայ բախիլ, օրինակ, մեր հաւատքին, որ նաև վերատեսութեան պէտք է ենթարկել: Մենք չենք կրնար շարունակել ապրիլ այնպէս, որ մենք իշխանաւոր ենք, իսկ կենսաբանական միւս արարածները՝ մեր ստրուկները: Փաստը քորոնավիրուսի համաճարակն է, որ մարտահրաւէր նետեց բոլորին՝ և՛ անհատներուն, և՛ հասարակութիւններուն: Իհարկէ, քննարկման մէջ կը մտնեն նաև այլ նկատառումներ, ինչպիսին են կենսոլորտային հաւասարակշռութիւնը, կենսաբանական համակարգերու կարևորութիւնը և այլն: Ինչպէ՞ս լուծել հասարակութեան զարգանալու խնդիրները, ինչպէ՞ս դիմակայել այն մարդկանց, որոնք կ'ուզեն բնավայրերը օգտագործել տնտեսական նպատակներու համար, ինչպէ՞ս վերաբերիլ անոնց, որոնք հետամուտ են բնութեան գեղագիտական արժէքներու պահպանման և այլն:

Եթէ բնութեան մասին խօսքը միայն յուզական կամ գեղագիտական էր, ապա այսօր խօսքը բնապահպանման բարոյական կարգավիճակի մասին է, և հարցը փոխադրուած է իրաւական դաշտ:

Ինչքանո՞վ այս խնդիրները կը յուզեն հայ քաղաքական միտքն ու գործի կը մղեն քաղաքական դաշտը. առայժմ պատասխանը խրախուսիչ չէ: Հայ մարդու յուզական աշխարհահայեացքին մէջ բնութիւնը կարևոր է, վկայ մեր գրականութիւնը Սևանի, Վանի, Արարատի մասին: Սակայն այստեղ հարցը կը վերաբերի պատասխանատուութեան: Եթէ բնութեան հետ մեր հանդիպումը յուզականէն անդին չանցնի դէպի բարոյական և իրաւական դաշտ, ապա բնապահպանական խնդիրները պիտի մնան մեր ապագայի գերագոյն և ամէնէն ցաւոտ կէտը: Հարցի անյապաղ քննարկումը հրամայական է ՀՅԴ-ին համար: Բնապահպանման գործը փոքր խմբաւորումներու մենաշնորհը չի կրնար ըլլալ, պարտաւոր ենք զայն իրացնել, ընդհանրացնել, ընդհանուրին սեփականութիւնը դարձնել: Գործը թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական ուժերուն զինուորագրումը կը պահանջէ:

Մէկ խօսքով՝ կենդանիներու, բնութեան և բնավայրերու բարոյական և իրաւական կարգավիճակի չափն ու բնոյթը մարտահրաւէր է, որ պէտք է ընդունիլ:

Հայաստանի բնապահպանական որոշ խնդիրների մասին

Արեգ Ղարաբեգյան – ՀՅ Դաշնակցության Հայաստանի գերագույն մարմնի շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների հանձնախմբի նախագահ:

Շրջակա միջավայրի աղտոտվածության հարցը վաղուց մտահոգության առարկա է Հայաստանում, և տասնամյակներ շարունակ այս մասին եղել են զանազան հրապարակումներ: Օրինակ՝ Սևանա լճի ցավալի դրությունը բազմիցս բարձրաձայնված հարց էր 1960-ականների վերջին՝ ջրի մակարդակի կտրուկ անկման և լիճ թափվող աղտոտիչների պատճառով:

Խորհրդային Հայաստանի բնապահպանական շարժումը նշանակալի ուժ էր 1980-ականների վերջին՝ գլասնոստի (հրապարակայնության) և պերեստրոյկայի (վերակառուցման) ժամանակաշրջանում, քաղաքական փոփոխություններ իրականացնելու համար: Անկախացումից ի վեր բազմաթիվ բնապահպանական խմբեր կորցրին իրենց ազդեցությունը:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ում առաջատար էր շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման հարցում: 1987թ. Օպերայի հրապարակում աննախադեպ ցույցին մասնակցում էր մոտ 3000 մարդ, որոնք պահանջում էին փակել որոշ քիմիական գործարաններ և Մեծամորի ատոմակայանը: Հաջորդ տարի Սպիտակի երկրաշարժը բնակիչներին ստիպեց հավելյալ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրին և շինարարական տեխնոլոգիաների հարակից խնդիրներին:

Չնայած շրջակա միջավայրի մասին իրազեկվածության կարևորությանը՝ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում հավաքական գիտակցության ձևավորման գործում Խորհրդային Միության կտրուկ փլուզման հետևանքով Հայաստանը ստիպված էր պայքարել մի քանի ճակատներում: Հայաստանի մի շարք բնապահպանական խնդիրներ ավելի սրվեցին անկախության առաջին տարիներին, երբ էներգիան կտրուկ նվազում էր, բենզինն անորակ էր, կատարվում էին զանգվածային անտառահատումներ, կեղտաջրերի մաքրումը պատշաճ մակարդակով չէր իրականացվում:

Անկախացումից հետո Հայաստանում հսկայական տնտեսական անկում գրանցվեց, մեծ փոփոխություններ տեղի ունեցան շուկայական տնտեսությանն անցնելիս և ծագեցին դրանց ուղեկցող, անհապաղ ուշադրություն պահանջող բնապահպանական խնդիրներ: Անկախացման պահին ի հայտ եկած ազգային անվտանգության խնդիրները պատճառ դարձան, որ բնապահպանական մտահոգությունները առաջնահերթություն չդիտվեն հանրության համար: Բացի այդ՝ արագ տնտեսական զարգացման ընթացքում բնապահպանական խնդիրները հետ էին մղվել շինարարության, քիմիական արդյունաբերության մասնակի վերականգնման և հանքարդյունաբերական գործունեության ընդլայնման

Ձկնաբուծարանի կողմից ջրի օգտագործումը

համեմատ: Պահի թելադրանքով կողմնորոշվելը, կարողությունների անբավարարությունը և կոռուպցիան խոչընդոտում էին պատասխանատու քաղաքական գործողությունների իրականացմանը, ինչից երկարաժամկետ հեռանկարում կշահեին երկիրը և նրա բնակչությունը:

Վերջերս Հայաստանում բնապահպանական շարժումը որոշակի թափ է հավաքել, բայց բնակչության մեծամասնության կողմից այն դեռևս անհրաժեշտ լրջությամբ չի ընկալվում և այնքան ուժեղ չէ, որ մեծ ազդեցություն ունենա քաղաքականության և զարգացման ընթացքի վրա: Շարժումը միավորել է մի շարք հասարակական կազմակերպությունների (ՀԿ), բայց դրանք ունեն սահմանափակ կարողություններ և ազդեցություն: Վերջին տարիներին այդ կազմակերպություններից մի քանիսը հաջողությամբ համատեղել են իրենց ջանքերը՝ բնապահպանական հստակ խնդիրները լուծելու համար, ինչը հանգեցրել է որոշակի նախագծերի բարեփոխմանը, որոնք կարող էին վնաս հասցնել շրջակա միջավայրին:

Հայաստանը վավերացրել է բազմաթիվ միջազգային կոնվենցիաներ, որոնք վերաբերում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը, անապատացումը և մշակութային ու բնական ժառանգության պահպանումը: Բացի այդ՝ Հայաստանի Սահմանադրությունը հստակորեն անդրադառնում է բնության պահպանությանը, շրջակա միջավայրին հասցված վնասներին և մարդկանց՝ առողջ կյանք վարելու իրավունքներին:

Բազմաթիվ բնապահպանական խնդիրներ՝ կապված ջրային պաշարների, հանքարդյունաբերության, անտառների և պահպանվող տարածքների հետ, սերտորեն առնչվում են կոռուպցիայի երևույթին: Հաճախ բնական պաշարների շահագործումը տեղի է ունենում առանց որոշումների պատշաճ հիմնավորման:

Ավելին՝ որոշումները, որպես կանոն, վերաբերում են հատուկ հետաքրքրություն ներկայացնող խմբերի և կայացվում են առանց կառավարության հռչակած երկարաժամկետ կայուն զարգացման նպատակներին պատշաճ ուշադրություն դարձնելու:

Հայաստանի համար, որը նախատեսում է իր զարգացումը հիմնել կայունության սկզբունքների վրա, շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է կազմի զարգացման գործընթացի բաղկացուցիչ մասը: Այսպիսով, Հայաստանի անկախացումից գրեթե երեք տասնամյակ անց երկրի բնապահպանական իրավիճակը շարունակում է մտահոգիչ մնալ:

Ստորև կանդրադառնանք առանձնահատուկ և զգայուն բնապահպանական խնդիրներին:

Ջուր

Բազմաթիվ սուր և բարդ սոցիալ-տնտեսական խնդիրների, ինչպես նաև ստուգումների և որոշումների կիրարկման անբավարարության պատճառով քաղցրահամ ջրերի էկոհամակարգերը՝ լճերը, գետերը և ջրամբարները, խիստ տուժել են: Էներգետիկ և տնտեսական արտադրության զարգացման ընթացքում հիդրոէկոհամակարգերի անկայուն օգտագործման պատճառով տեղի են ունեցել խորքային ջրերի մակարդակների կտրուկ նվազում և գետերի հիդրոֆիզիկական ու հիդրոկենսաբանական փոփոխություններ: Այս ոլորտում կարևոր դերակատարներն են ձկնաբուծությունը Արարատյան դաշտում և տարբեր գետերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանները:

Ձկնաբուծական տնտեսություններն օգտագործում են հսկայական քանակությամբ ջուր՝ չունենալով վերամշակման որևէ համակարգ: Այս պատճառով Արարատյան դաշտի ստորեկրյա ջրերի մակարդակը իջել է մոտ 15 մետրով, ինչի հետևանքով մեծ թվով գյուղական հորեր ցամաքել են: 2017 թվականին Բնապահպանության նախարարությունը մի ձկնաբուծականի հորի վրա տեղադրեց Սկադա սարքավորումը, որի միջոցով նախարարության էին ուղարկվում էլեկտրոնային տվյալներ օգտագործվող ջրի քանակի վերաբերյալ: Նպատակն էր հսկել, որ հորից ստացվեր միայն թույլատրելի քանակությամբ ջուր: Իսկ գլխավոր նպատակը Սկադա սարքավորումների տեղադրումն էր բոլոր ձկնաբուծական հորերի վրա, բայց այդ նախագիծը չգործադրվեց: 2017 թ. ընթացքում նաև փակվեցին մեծ թվով արտեզյան հորեր, որոնց ջուրն այլևս չէր օգտագործվում:

Երևանի ջրի քայքայված խողովակները

Հայաստանում մաքուր ջրի պահպանման խնդիրը շարունակում է մնալ մտահոգիչ: Ջրամատակարարման համակարգերն անհապաղ ուշադրության կարիք ունեն: Ջրօգտագործման համակարգը ջրամատակարարման քայքայվող ենթակառուցվածքի պատճառով պարբերաբար աղտոտվում է, ինչը դառնում է կոյուղաջրերի և խմելու ջրի խառնվելու ու հսկայական կորուստների պատճառ: Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կորուստները Երևանում կազմում են մինչև 60 տոկոս, Գյումրիում՝ 70 տոկոս, իսկ Վանաձորում՝ 75 տոկոս:

Երևանը, լինելով ավելի քան մեկ միլիոն բնակչությամբ քաղաք, դեռևս չունի կեղտաջրերի մաքրման լիովին գործունակ կայան: Մասնակիորեն մշակված թափոններն ուղղակիորեն թափվում են Հրազդան գետը, որը տասնյակ բնակավայրերի ջրամատակարարման հիմնական աղբյուրն է:

Արարատյան դաշտում ջրի աղտոտման հիմնական պատճառը գյուղատնտեսական աշխատանքներում օգտագործվող թունաքիմիկատներն են: Դրանք ոռոգման ընթացքում լցվում են ջրահեռացման ջրանցքների մեջ, թափվում են գետերը կամ, հողի մեջ ներծծվելով, անցնում ստորերկրյա ջրերի ավազան:

Սևանա լիճ

Սևանա լիճը Անդրկովկասի՝ խմելու ջրի խոշորագույն ամբարներից և աշխարհի ամենամեծ լեռնային քաղցրահամ լճերից մեկն է: Նրա խոնավ էկոհամակարգը զգալի դեր է խաղում չվող թռչունների համար: Սևանա լիճը, բացի մշակութային, հանգստի և հոգևոր արժեքից, ունի նաև ռազմավարական, տնտեսական, սոցիալական և պատմական նշանակություն: Իրապես այն գնահատվում է որպես ազգային հարստություն՝ գանձ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հրազդան գետի երկայնքով կառուցվեցին յոթ հիդրոէլեկտրակայաններ, իսկ Սևանա լճի ջուրն օգտագործվեց էլեկտրաէներգիա արտադրելու համար: Այս նպատակով ջրային պաշարների լայնածավալ օգտագործման և վատ կառավարման պատճառով (և ավելի քիչ՝ գյուղատնտեսական արտադրության համար) լճի ջրի մակարդակը 20 տարվա ընթացքում իջավ ավելի քան 19 մետրով:

Ուղղահայաց ուղղությամբ Ջրի մակակարդակի բարձրությունը, մյուսում՝ Ջրի բացթողումը, մլն մ3

Լճի մակարդակի նվազման պայմաններում հարաբերականորեն մեծացավ ազոտի պարունակությունը, ակտիվացավ ջրիմուռների աճը, ապակայունացավ լճի բնապահպանական հավասարակշռությունը: Իրավիճակն էլ ավելի բարդացավ մոտակա քաղաքների մաքրման կայաններից կոյուղաջրերի և գյուղացիական տնտեսություններից թունաքիմիկատների՝ դեպի լիճ

արտահոսքի պատճառով:

Անկախացումից հետո Սևանա լճի երկայնքով մեծաթիվ նոր հանգստյան տների ապօրինի կառուցումը, ընդհանուր բնակչության կողմից, զբոսաշրջության նպատակով Սևանի շահագործումը և լճի շրջակայքում կատարված ծառահատումները (անտառահատումը) դարձել են կարևոր գործոն լճի մակարդակի կարգավորման հարցում:

Ջրի մակարդակի իջեցմամբ պայմանավորված՝ էկոհամակարգի վրա անբարենպաստ ազդեցությունների հետևանք են իշխան ձկնատեսակի չորս ենթատեսակներից երկուսի անհետացումը, մյուս երկու ենթատեսակների վերարտադրողական ունակության խիստ նվազումը: Այս ազդեցությունների պատճառով չորացան իշխան ձկնատեսակի բազմացման բնավայրերը, և ավելացավ որսագողությունը: Բացի այդ՝ ջրի ֆիզիկա-քիմիական բնութագրերի փոփոխությունները խիստ ազդել են ոչ միայն ձկնաբուծական աշխարհի, այլև ընդհանրապես ջրաշխարհի վրա:

Ժամանակին կառավարությունը քայլեր ձեռնարկեց լճի ջրի հավասարակշռությունը վերականգնելու նպատակով: Արփա-Սևան թունելի շինարարությունը յուրահատուկ ճարտարագիտական և հիդրոլոգիական նախագիծ է, որը կենսագործվել է 1961 թ.՝ Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով: Թունելը տարեկան 250 միլիոն խմ. ջուր էր տրամադրում Սևանին: Տարիների ընթացքում կառավարությունը որոշումներ է ընդունել էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով լճի ջրի օգտագործումը նվազագույնի հասցնելու համար՝ այն հիմնականում բաց թողնելով ոռոգման նպատակներով: Բայց հաճախ այս որոշումները չեն գործադրվել կամ գործադրվել են խախտումներով:

Չնայած Սևանա լճի ափերը ներառված են «Սևան» ազգային պարկի մեջ, որտեղ գործում են տնտեսական գործունեության սահմանափակումներ, այդուհանդերձ, ապօրինաբար տրվել են հարյուրավոր շինարարական թույլտվություններ: Կառավարության որոշումն է, որ լճի մակարդակը պետք է բարձրացվի 6 մետրով (հիմք ընդունելով 1996 թ. մակարդակը), որի արդյունքում լճի բնապահպանական համակարգը կկայունանա: Լճի մակարդակը բարձրացել է 3 մետրով, բայց կառավարությունը հետաքրքրություն չի ցուցաբերում ջրի մակարդակի հետագա բարձրացման հարցում: Պատճառներից մեկն էլ միգուցե այդ ապօրինի շինարարությունների տերերի շահերն են:

Օդ

Հայաստանի ստանդարտները շրջակա միջավայրի օդի որակի վերաբերյալ հիմնականում համապատասխանում են զարգացած երկրների ստանդարտներին: Օդի աղտոտվածության դեմ պայքարի մասին օրենքները պահանջում են, որ յուրաքանչյուր արդյունաբերական



աղբյուր համապատասխանի աղտոտման համակենտրոնացման ստանդարտին: Այնուամենայնիվ, այդ ստանդարտները հաճախ չեն կիրառվում:

Խորհրդային շրջանում քիմիական արտադրությունը Հայաստանում խոշոր արդյունաբերությունն էր, որը հայտնի էր թունավոր գազերի արտանետումների բարձր մակարդակով: Գրեթե բոլոր այդ գործարանները՝, այլևս չեն աշխատում, ուստի օդի աղտոտման այդ աղբյուրները այլևս գոյություն չունեն:

Օդի աղտոտումը բնապահպանական խնդիր է Հայաստանի մի քանի շրջաններում: Օրինակ՝ Երևանում Նուբարաշենի աղբավայրի հիմնական մասն անընդհատ այրվում է՝ առաջացնելով ծուխ և մթնոլորտ արտանետվող այլ տոքսիններ այրված պլաստմասայից, ներկերից և ծանր մետաղներից: Չնայած այն բանին, որ մթնոլորտ են արտանետվում միայն փոքր քանակությամբ թունավոր նյութեր, բայց դրանք կուտակվում են Երևանում, որովհետև Երևանը տեղակայված է երկրաբանական փոսի մեջ:

Ալավերդի արդյունաբերական քաղաքի օդը շարունակում է աղտոտված մնալ: Ալավերդու օդում ծծմբի երկօքսիդի պարունակությունը գերազանցում է թույլատրելի մակարդակը: Հայկական պղնձի ծրագրով (ACP), որը համարվում է հիմնական աղտոտող աղբյուրը, արտանետումների գլխավոր ծխնելույզը փոխադրվել է մոտակա լեռան բարձունքի վրա՝ իբրև արտանետումների մեղմացման միջոց: Սա՝ որպես հարցի լուծում, անընդունելի քայլ է:

Պինդ թափոններ

Թափոնների կառավարումը առաջնահերթ բնապահպանական խնդիր է ինչպես Հայաստանի քաղաքներում, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Միայն մեկ խոշոր աղբավայր՝ Նուբարաշենը, ծառայում է Երևանին և հարակից համայնքներին: Այս աղբավայրը գտնվում է Երևանից մոտ 7 կիլոմետր հեռավորության վրա, ունի շուրջ 40 հեկտար հողային մակերես: Աղբահանության աշխատանքները սկսվել են 1968թ., և այստեղ շուտով տեղ չի լինի: Մի շարք բնակավայրեր տեղակայված են աղբավայրից մի քանի

կիլոմետր հեռավորության վրա, իսկ մեկ գերեզմանոց գտնվում է աղբավայրից 1 կմ հեռավորության վրա:

Նուբարաշենի աղբավայրերի տակ կա բնական ամուր ժայռաշերտ, որը ծածկված է 1.5 մետր հաստությամբ կավե շերտով: Աղբավայրի տարածքի ստորերկրյա ջրերի խորությունը 50 մետրից ցածր է, հետևաբար քիչ հավանական է, որ աղբավայրից աղտոտող նյութերը հասնեն ստորերկրյա ջրերի ավազանին: Նուբարաշենում կան խորհրդային ժամանակից մնացած մի քանի տասնյակ տակառներ, որոնք պարունակում են թունավոր նյութեր: Այդ տակառների տարիքը մտահոգիչ է և կարող է թունավոր նյութերի արտահոսքի պատճառ լինել: Անհրաժեշտ է, որ այս թունավոր նյութերն անմիջապես չեզոքացվեն:

Կոշտ թափոնների կառավարումը խնդրահարույց ծառայություններից մեկն է, որը մշտապես ունի ֆինանսավորման պակաս և դեռևս իրականացվում է ցածր որակով: Շատ տարածված է աղբը, հատկապես շինարարական աղբը չթույլատրված վայրերում թափելը և աղբն այրելը, որի պատճառով արտանետվում են թունավոր քիմինական նյութեր, որոնք ունենում են առողջության համար բացասական հետևանքներ: Առանձնահատուկ մտահոգության տեղիք է տալիս վտանգավոր բժշկական թափոնների չեզոքացումը:

Թեև վերջերս Երևանում թափոնների հավաքման գործընթացը բարելավվել է, բայց 2019 թ. ամռանը աղբահավաքության վիճակը սարսափելի էր, երբ քաղաքապետն ուզում էր ձերբազատվել աղբահանումն իրականացնող «Սանիտեք» ընկերությունից ու կազմակերպել այդ աշխատանքը քաղաքապետարանի միջոցով: Երևանի քաղաքապետարանը 2019 թ. հայտարարեց մեկ տենդեր՝ նոր աղբավայր կառուցելու համար: Զարմանալիորեն այդ տենդերի պայմանների մեջ չկար որևէ ակնարկ աղբի վերամշակման մասին, որը խիստ անհրաժեշտ է:

Քիմիական արդյունաբերություն

Հայաստանի քիմիական արդյունաբերության ավելի քան 70 տոկոսը գտնվում էր Երևանում, իսկ արտադրական գործարաններն աղտոտման հիմնական աղբյուրներն էին: Մոտ 200 հեկտար տարածք զբաղեցնող «Նաիրիտ» քիմիական գործարանը առաջին անգամ սկսեց ռետինե և այլ պոլիմերների արտադրությունը 1936 թվականին և ուներ տարեկան 58000 տոննա հզորություն: Մինչև 1989 թվականը «Նաիրիտի» աշխատանքի հետևանքով, երբ այն գործում էր ամբողջ հզորությամբ, տարեկան գրանցվում էր 15 միլիոն մ3 հեղուկ թափոնների արտահոսք դեպի Հրազդան գետը:

Քիմիական ռեագենտների գործարանը ևս մեկ հիմնական քիմիական գործարան էր, որը սկսեց գործել 1959 թ. և արտադրեց 916 տարբեր տեսակի ռեակտիվներ: Այս գործարանը մեծ քանակությամբ թափոններ է առաջացրել շահագործման ընթացքում

Ալավերդու արտանետումների ծխնելույզը

հնացած և վտանգավոր արտադրական տեխնիկայի օգտագործման հետևանքով: Ներկայումս այս հսկայական քիմիական գործարաններն այլևս չեն աշխատում:

Բնապահպանական ուսումնասիրություններ

ՀՀ բնապահպանության նախարարությունն ունի մեկ փորձաքննության բաժին, որը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) քննարկման ու դրական կամ բացասական եզրակացություն տալու հարցերում: Այս բաժինը չունի համապատասխան կարողություններ՝ ամբողջությամբ քննարկելու բարդ նախագծերի ՇՄԱԳ-ները: Որպես հետևանք՝ տարբեր նախագծերի համար պատրաստված ՇՄԱԳ-ները չեն ընդգրկում քննարկվող նախագծերի բոլոր բացասական ազդեցությունները կամ նախագծերի ամբողջական ազդեցությունը: Այս թերությունները գործնականում անբարենպաստ մթնոլորտ են ստեղծում շրջակա միջավայրի կառավարման հարցում:

Խոշոր նախագծերի համար նախապատրաստված ՇՄԱԳ-ները հաճախ պարզապես ձևական բնույթ են կրում՝ նվազագույն տեղեկություններով փաստելու համար, որ քննարկվող նախագիծը համապատասխանում է գործող օրենքին: Լավ օրինակ է Թեղուտի հանքավայրի նախագծի համար պատրաստված 100 էջանոց ՇՄԱԳ-ը: Նմանատիպ ուսումնասիրությունները զարգացած երկրներում կկազմեին մի քանի հարյուր էջ:

Պետք է նշել, որ Ամուլսարի ոսկու հանքավայրի համար պատրաստված ՇՄԱԳ-ը կարելի է համարել ամենաընդարձակ ու բազմակողմանի ուսումնասիրությունը, որը մինչ օրս կատարվել է Հայաստանում: Բայց այս հանքի շահագործումը կունենա բացասական մեծ ազդեցություն, մասնավանդ՝ Սևանա լճի վրա, որն անտեսված է ՇՄԱԳ-ում, կամ այդ բացասական ազդեցությունները ներկայացված են իբրև կառավարելի ռիսկեր:

Լավ պատրաստված ՇՄԱԳ-ը պետք է դիտվի էկոլոգիապես անվտանգ նախագծի համար որոշումներ կայացնելու հիմք: Մոնիտորինգի ծրագրերը և կանոնակարգերի կիրարկումը

անհրաժեշտ են Հայաստանում ՇՄԱԳ գործընթացը բարելավելու համար: Մինչ այժմ պատրաստված ՇՄԱԳ-ները համապարփակ չեն եղել և չեն արտացոլում ծրագրերին առնչվող բնապահպանական բոլոր մտահոգությունները: Հասարակության մասնակցությունը և գործընթացի թափանցիկությունը կարևոր են նաև շրջակա առողջ միջավայրը պաշտպանելու համար:

ՇՄԱԳ գործընթացի կատարելագործումն անպայման պահանջում է բնապահպանության իրավասու մասնագետներ: Հայաստանում բնապահպանական ճարտարագետների և գիտնականների համար պակասում են այնպիսի կրթության ու վերապատրաստման հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են բնապահպանական խնդիրներին անմիջապես ուշադրություն դարձնելու համար: Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում և Պետական ճարտարագիտական համալսարանում բնապահպանական ճարտարագիտությանը և կառավարմանն առնչվող ուսումնասիրություններն առավելապես գիտական են, քան կիրառական. ներկայումս ավելի մեծ պահանջարկ ունեն հենց գործնական ուսումնասիրությունները: Չնայած վերջին տարիներին Հայաստանում նկատվել է բնապահպանական կրթության որակի որոշակի բարելավում, այնուամենայնիվ, դեռ շատ ավելին պետք է արվի:

Կարգավորող կառուցվածքը ևս մեկ լուրջ խնդիր է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և մեղմացման միջոցառումների իրականացման գործում: Ներկայումս չկան հստակ ուղեցույցներ առկա հիմնահարցերի անհրաժեշտ մեղմացման միջոցառումների գնահատման և կիրառման գործընթացի վերաբերյալ: Անհրաժեշտ է ուժեղ և լիովին անկախ պետական գործակալություն՝ ապահովելու համար հիմնախնդիրների մեղմացման բոլոր առաջարկված միջոցառումները:

Կառավարության և խոշոր ներդրողների միջև աղմկահարույց կապերը ևս մեկ ընդհանուր պատճառ են գործող օրենսդրությունը չկիրառելու համար:

Անտառահատում

Անտառահատումը շարունակում է մնալ կարևոր բնապահպանական խնդիր, չնայած 90-ականների էներգետիկ ճգնաժամը վաղուց ավարտվել է: Հատկապես Հայաստանի համար սա լուրջ մտահոգություն է, քանի որ երկրի տարածքի միայն 7-8 տոկոսն է ծածկված անտառով (թեև պաշտոնապես ներկայացվում է նախորդ դարավերջին արձանագրված ցուցանիշը՝ 11 տոկոս, ընդ որում, այս անտառների մեծ մասը քայքայված է:

Հայաստանը ճանաչված է որպես կենսաբազմազանության համաշխարհային թեժ կետերից մեկը: Իր գտնվելու եզակի վայրով և հրաբխային ծագմամբ պայմանավորված՝ այն, ի տարբերություն մոլորակի այլ վայրերի, ունի միկրոկլիմայի և բնակավայրերի նախընտրելի առավել նպաստավոր պայմաններ մի շարք վտանգված բույսերի և կենդանիների տեսակների կյանքի համար: Հաշվի առնելով բնապահպանական այս ժառանգությունը՝ Հայաստանը հատուկ պատասխանատվություն է կրում ապահովելու համաշխարհային մասշտաբով բարձր արհեստավարժությամբ զինված ղեկավարություն՝ կենսաբազմազանության պահպանման և էկոտուրիզմի ոլորտի զարգացման համար:

Անտառահատման հետևանքներն են էրոզիայի և սողանքների ավելացումը, հողերի և վարելահողերի կորուստը, տեղական եղանակային և կլիմայական պայմանների փոփոխությունը և օդի անբավարար որակը, ինչպես նաև բույսերի և կենդանիների բնակավայրերի ոչնչացումը:

Կառավարության կողմից Թեղուտի նման էկոլոգիապես զգայուն տարածքներում հանքարդյունաբերության ծրագրերի մշակմանն ուղղված գործողությունները վկայում են բնական անտառների՝ որպես կենսաբազմազանության պաշարների կարևորության պաշտոնական գիտակցման բացակայության մասին:

Որոշ դրական քայլեր էին ձեռնարկվել 2017-2018 թթ. Հայաստանում անօրինական անտառահատումների երևույթը կանխելու ուղղությամբ, բայց այդ միջոցառումներն այլևս չեն շարունակվում, ու ներկայիս քայլերը միանգամայն բավարար չեն: Ծրագրվում էր օգտագործելով բարձր տեխնոլոգիաներ կանխարգելել ապօրինի ծառահատումները: Այդ ծրագիրը պատրաստ էր իրագործվելու, բայց, ցավոք սրտի, այն չկենսագործվեց: Անտառահատումների կանխման և անտառների պահպանման աշխատանքների փոխարեն ծրագրվում է մի առասպելական միջոցառում՝ Հայաստանում մեկ օրում տնկել 10 միլիոն ծառ:

Ընդհանուր առմամբ Հայաստանում անտառահատման հիմնական պատճառը վառելափայտի պահանջարկն է՝ պայմանավորված այլընտրանքային վառելիքի պաշարների բացակայությամբ: Առկա խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է մեղմացնել ճնշումը անտառների վրա՝ մերձակա գյուղերում տեղակայելով վերականգնվող

Շինարարական աղբը Հրազդանի կիրճում

էներգիայի աղբյուրներ, ինչպիսիք են արևային էներգիայի օգտագործման միջոցները: Կարևոր է նաև անտառամերձ տների օգտագործած ջերմային էներգիայի արդյունավետության բարձրացումը:

Հայաստանում ապօրինի ծառահատումը շահութաբեր գործ է: Տիրապետող մտայնությունն այն է, որ անտառային ոլորտում կոռուպցիան կապված է բիզնեսի հետ, որը հովանավորվում է բարձր մակարդակի պետական պաշտոնյաների կողմից: Կառավարության նախաձեռնած քայլերն անբավարար են ապօրինի ծառահատումների հետևանքով անտառների ոչնչացումը դադարեցնելու համար:

Հանքարդյունաբերություն

Հանքարդյունաբերությունը համարվում է Հայաստանի համար շահավետ ոլորտ: Դժբախտաբար, բնապահպանական սահմանափակումները չեն կիրառվում հանքարդյունաբերության ոլորտում հիմնական գործառնությունների մեծ մասի դեպքում, ինչը հանգեցնում է շրջակա տարածքների էկոհամակարգի վնասման: Հաճախ կոռուպցիան ծագում է արտոնության տրամադրման և թույլտվությունների ձեռքբերման փուլում:

Հայաստանում գոյություն ունեն 500-ից ավելի աշխատող հանքավայրեր, բայց դրանց մեծ մասը ոչ մետաղական՝ քարի ու ավազի հանքերն են, որոնք մեծ վտանգներ չեն ներկայացնում, սովորաբար չեն ունենում բնապահպանական բացասական հետևանքներ: Սակայն պղնձի, մոլիբդենի, ոսկու, կապարի և ցինկի հանքերի շահագործումը հղի է լուրջ խնդիրներով: Դրանց դեպքում բնապահպանական բացասական հետևանքների հավանականությունը շատ մեծ է: Այս հանքավայրերն ունեն պոչամբարներ, որտեղ կուտակվում են թունավոր նյութերը, որոնք առաջանում են հանքերի շահագործման հետևանքով: Հաճախ այդ թունավոր նյութերը պոչամբարներից դուրս են հոսում կամ ներծծվում են հողի մեջ՝ ստեղծելով լուրջ վտանգներ:

Մետաղական հանքերը հիմնականում վաճառված են օտարերկրյա մեծ մասնաբաժնով ընկերությունների, և դրանցից Հայաստանի Հանրապետությունը ստանում է չնչին տոկոս՝ որպես ընդհանուր շահույթի ռոյալթի:

ՀՅԴ մոտեցումները շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ

ՀՅԴ-ն այն եզակի քաղաքական ուժն է, որն ունի շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության հստակ մոտեցումներ, որոնք վերաբերում են՝

- շրջակա միջավայրի պահպանությանը և բնական պաշարների շահագործմանը՝ տվյալ գործընթացները վերակառուցելով ողջամիտ օգտագործման քաղաքականության սկզբունքով (կայուն զարգացում),

Թեղուտում հատված ծառերը

- ջրային պաշարների հաշվառմանը, ամբարմանը և բաշխման քաղաքականությանը,
- հողն աղտոտումից պահպանելու ընդհանուր և հատուկ պահանջներին, հողի օգտագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակումներին և վերականգնման միջոցների մշակմանը,
- մթնոլորտային արտանետումների (և՛ անշարժ, և՛ շարժական աղբյուրներից) կառավարմանը,
- ընդերքի պաշարների հաշվառմանը,
- անտառների կայուն կառավարմանը,
- թափոնների պահմանը, տեղադրմանը, վերամշակմանը, օգտահանմանը, երկրորդային օգտագործմանը,
- կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծման համակարգերին՝ ներառյալ հարմարվողականությունն ու մեղմումը,
- Հայաստանում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու դրանց թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարմանը,
- կենդանական աշխարհի պահպանմանն ու ողջամիտ օգտագործմանը,
- բուսական աշխարհի պահպանմանն ու հավասարակշռված օգտագործմանը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության համակարգի բարելավմանը,
- էկոլոգիական կրթության և իրազեկման միասնական քաղաքականության ապահովմանը:

Ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի քաղաքականության վերաբերյալ Դաշնակցության առաջարկությունները բխում են ներառական զարգացման հրամայականից և կառուցված են տեխնածին տնտեսական մոդելից կայուն զարգացման անցնելու տնտեսական մոդելի գործադրման սկզբունքով: Վերջինիս պայմաններում կտրուկ կնվազեցվի չվերականգնվող բնական պաշարների շահագործումը, կկրճատվեն առաջացող թափոնների ծավալները:

Գյուղատնտեսական քաղաքականության նոր հրամայականները

Արմեն Գրիգորյան
ՀՅԴ Հայաստանի ԳՄ ֆինանսների և էկոնոմիկայի հանձնախմբի նախագահ

Հայաստանի Հանրապետությունը Արցախի Հանրապետության հետ ավելի քան 41.0 հազար քառ. կմ ընդհանուր մակերես ունեցող, դեպի ծով ելք չունեցող լեռնային երկիր է, որը գտնվում է Արևմտյան Ասիայում՝ Կովկասյան լեռներից դեպի հարավ-արևմուտք: Հայաստանի Հանրապետության միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1800 մետր, ընդ որում, ընդհանուր տարածքի շուրջ 76 տոկոսը գտնվում է ծովի մակարդակից 1000-2500 մետր բարձրության վրա:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Սոցիալական պետություն լինելն արդեն իսկ ենթադրում է պատասխանատվություն սեփական քաղաքացիների սոցիալական բարեկեցության, կյանքի որակի, աղքատության հաղթահարման, սոցիալական ծրագրերի իրականացման, երկրում գեներացվող եկամուտների և դրանց արդար բաշխման համար: Ունենալ սոցիալական պետություն նշանակում է ունենալ արժանապատիվ կյանքի նվազագույն պայմաններ, հավասար հնարավորություններ, ներառական տնտեսական համակարգ և հաստատված սոցիալական արդարություն:

20-րդ դարի 90-ականներից Հայաստանն առաջիններից էր, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո իրականացրեց զանգվածային մասնավորեցում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում: Մասնավորեցվեց գրեթե ամեն ինչ՝ մշակովի հողատարածքները, ընտանի կենդանիներն ու գյուղատնտեսական տեխնիկան: Հայաստանի մշակովի հողատարածքների սեփականաշնորհումը հանգեցրեց մանր տնտեսությունների առաջացմանը: Հողը հանձնվեց գյուղացուն, իսկ գյուղացին հողի հետ մնաց մենակ՝ պետությունից ստանալով նվազագույն օժանդակություն:

Գյուղատնտեսությունը՝ որպես տնտեսության առանձին ճյուղ, գտնվում է բազմաթիվ մարտահրավերների առջև: Այս ոլորտը հնարավորություն է տալիս լուծելու սոցիալական լրջագույն խնդիրներ, ապահովելու մարդկանց զբաղվածությունը, լինելու կայուն եկամտի աղբյուր: Գյուղատնտեսությամբ զբաղվելը էականորեն տարբերվում է տնտեսության մյուս ճյուղերում զբաղվածությունից. այն որոշակի ապրելակերպ է, կյանքի բնագավառ: Գյուղատնտեսությունը միայն ագրոբիզնեսը չէ, և այն չպետք է դիտարկել

որպես գործարարության տեսակ, որտեղ գործում են շուկայական մրցակցության օրենքները՝ ուժեղը հաղթում է թույլին և զբաղեցնում նրա տեղը:

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը տրամադրվող օժանդակության գերակշռող չափաբաժինը հասել է խոշոր գյուղատնտեսական բիզնեսներին՝ այն հիմնավորմամբ, որ միայն նրանք կկարողանան գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժը դառնալ: Այսպիսի լուծումները բավարար չեն, քանի որ գյուղատնտեսական արտադրանքի մեծ բաժինը արտադրվում է տնային տնտեսությունների կողմից, և վերջիններիս տնտեսական կայուն զարգացումը երկրի տնտեսության ներառական աճի ապահովման հիմնական գործոններից է:

Անկախ այն հանգամանքից, թե զարգացածության ինչպիսի աստիճան ունի, գյուղատնտեսությունը յուրաքանչյուր երկրում, բացի գյուղատնտեսական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկություններին մատակարար հանդիսանալուց, առաջին հերթին համարվում է քաղաքացիներին պարենամթերքով ապահովող առաջնային ճյուղ:

Ոլորտում իրականացվող քաղաքականության առանցքային հարցերը պետք է ստանան կոնկրետ ձևակերպումներ: Պետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսությամբ զբաղվող մեր քաղաքացիների եկամուտների դինամիկ ավելացման, գյուղական համայնքների սոցիալ-

տնտեսական հիմնախնդիրների լուծման, բնակչության աճի համար անհրաժեշտ է, որ մեր երկրի ագրարային քաղաքականությունը մշակված լինի այնպիսի բաղադրիչների հիման վրա, որոնք կարող են արդյունքներ տալ:

Ոլորտի քաղաքականությունը պետք է հիմնված լինի հավակնոտ ծրագրերի վրա՝ նվազագույնի հասցնելով Հայաստանի Հանրապետության կախվածությունը հացահատիկի, մսամթերքի և կաթնամթերքի արտադրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումից: Պետք է ներդնել նոր գործիքակազմ, ինչը հնարավորություն կտա ավելացնելու գյուղատնտեսական մթերքների իրացման ծավալները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Բնական աղետներից պետական ապահովագրման համակարգի ներդրումն այլևս այլընտրանք չունի: Գյուղացին իր դժվարությունների հետ մնացել է միայնակ, կարկտահարումից և ցրտահարությունից վնասվելու դեպքում կրկին հայտնվում է խեղճացած խնդրողի դերում, ինչին ի պատասխան՝ հաճախ չի ստանում անհրաժեշտ փոխհատուցում, որը կբավարարի նրա պահանջները: Անհրաժեշտ է բարելավել ոռոգման համակարգը, անցնել ջրի խնայողության նոր տեխնոլոգիական լուծումների, առավելագույնս բարձրացնել ջրօգտագործման արդյունավետությունը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությամբ զբաղվում է ոչ միայն Արարատյան դաշտավայրի բնակչությունը, այլ նաև լեռնային և բարձրլեռնային գոտիներում ապրող մեր համաքաղաքացիները, ապա անհրաժեշտ է, որ ոռոգման ջրի բարձր ծախսեր ունեցող համակարգերը ստանան բյուջետային այնքան սուբսիդիաներ, որպեսզի սոցիալական աջակցությունն էական ազդեցություն ունենա, լինի թիրախային: Առանց գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորման ծավալների ավելացման, վարկավորման համակարգի կատարելագործման, տոկոսադրույքների և մարման ժամկետների վերանայման՝ որևէ տեսանելի փոփոխություն հնարավոր չէ կատարել: Գյուղական վայրերում գտնվող՝ գյուղմթերք վերամշակող ձեռնարկությունների և գյուղացիական տնտեսությունների գործունեության անխափան աշխատանքն անհրաժեշտ է դիտարկել գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակի բարձրացման տեսանկյունից: Պետք է խրախուսել մանր գյուղացիական տնտեսությունների միջև գործընկերային միավորների ստեղծումը՝ կոոպերացիաների կամ ակումբների տեսքով: Նման օրինակներ առկա են եվրոպական բազմաթիվ զարգացած երկրներում, որտեղ դրանք կիրառվում են արդեն ավելի քանի 100 տարի:

Վերոնշյալ քաղաքականության գործադրման համար անհրաժեշտ է կայուն եկամտաստեղծ և ինտենսիվ գյուղատնտեսական զբաղվածության պայմանների ու խթանների լիարժեք ձևավորում՝ «անապահովությունից կայուն զբաղվածություն» հիմնական սկզբունքով, իրականացնելով հետևյալ միջոցառումները.

- ներդնել գյուղատնտեսության ոլորտում լիարժեք հաշվառման համակարգ և ըստ այդմ ձևավորվող առարկայական հնարավորությամբ գյուղատնտեսական գործունեության պետական սուբսիդավորում, գյուղատնտեսական գործունեությունը ներառել կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մեջ,
- պլանավորել գյուղատնտեսությունը, որոշել ներքին սպառման շեմը յուրաքանչյուր առաջնային օգտագործման արտադրատեսակի համար,
- պետական մասնակցությամբ, փուլերով ներդնել գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրություն կամ բնական աղետների վնասների փոխհատուցման այլընտրանքային գործուն համակարգ,
- բարելավել գյուղատնտեսական ենթակառուցվածքները, ներառյալ ոռոգման համակարգերի արդիականացումը, մատչելիության և ծածկույթի ընդլայնումը, գյուղատնտեսության մեքենայացման աստիճանի բարձրացումը,
- ապահովել գյուղատնտեսական մթերքի՝ գյուղացու համար արդյունավետ իրացման ժամանակակից նոր գործիքներ,
- խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների կամ ակումբների ձևավորումը և արդյունավետ զարգացումը,
- բարելավել գյուղատնտեսական կրթության և խորհրդատվության համակարգը,
- հստակ նույնականացնել Հայաստանի բնակլիմայական պայմաններին և ներկա ու կանխատեսվող շուկայական (ներքին և արտաքին) պահանջարկին համապատասխան բուսաբուծության ուղղությունները, որոնք կապահովեն գյուղատնտեսության առավելագույն արդյունավետություն,
- ձեռնարկել գործուն միջոցառումներ գյուղմթերքի և արտադրամիջոցների կորուստների կանխարգելման ուղղությամբ,
- գյուղատնտեսությամբ զբաղվողների համար ապահովել ֆինանսավորման տարբերակված ու մատչելի պայմաններ և ժամանակակից գործիքներ,
- կիրառել բավարար հովանավորչական գործիքներ Հայաստանում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման նկատմամբ,
- ստեղծել հնարավորություններ, որպեսզի թարմացվեն մեքենասարքավորումները, աստիճանաբար ազատվել բարոյապես և

ֆիզիկապես մաշված գույքից,

- ստեղծել պայմաններ՝ ապահովելու համար անհրաժեշտ պարարտանյութերի, սերմացուների, բուժանյութերի մատչելի ձեռքբերման հնարավորությունը,
- ավելացնել մշակվող հողատարածքները, հիմնել նոր ցանքատարածքներ և այգիներ:

Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը կարող է նոր դուռ բացել գյուղատնտեսության առաջանցիկ զարգացման համար: Այս կոոպերատիվներին պետք է վերաբերվել ինչպես համատեղ խնդիրներ լուծողների, այնպես էլ ստացվելիք արդյունքներ ավելացնողների: Կոոպերատիվների ստեղծումը կնպաստի արտադրանքի ծախսերի կրճատմանը, իրացման կազմակերպմանը, ժամանակակից տեխնոլոգիաների և էժան միջոցների ներդրմանը, գյուղական համայնքներում աշխատատեղերի ստեղծմանը, գնային ճկուն քաղաքականությանը և այլն: Այս կոոպերատիվները կարող են և պետք է դառնան գյուղատնտեսության լոկոմոտիվը: Կոոպերատիվների ստեղծումը կարող է իր հետ բերել մի շարք առավելություններ՝ համատեղ մեծածախ գնումներ, հետևաբար ցածր գներով նյութերի ձեռքբերում, կայուն շուկաների ձեռքբերում, ավելացված եկամուտներ, ռիսկերի նվազեցում մեկ մասնակցի հաշվով և այլն: Այս ամենն ունենալու համար անհրաժեշտ է համապատասխան պետական քաղաքականություն, ինչը ենթադրում է ուսումնասիրել հաջողված փորձերը, մշակել դրանք, տեղայնացնել Հայաստանի պայմաններին և լծվել աշխատանքի: Պետությունը պետք է մշակի ձևերն ու մեխանիզմները, սովորեցնի, ներդնի, գործադրի համակարգը և հետևի վերջինիս անխափան աշխատանքին: Իսկ սա նշանակում է ոչ միայն ոլորտի քաղաքականության մշակում, այլ նաև դրա իրագործում, ինչն ամենօրյա աշխատանք է:

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում վարվող նեոլիբերալ տնտեսական քաղաքականությունը սպառել է իրեն: Ինչ խոսք, կարևոր է բարձր տեխնոլոգիաներին անհրաժեշտ ուշադրություն դարձնելը, կարևոր են համաշխարհային տնտեսության մեջ տեղ ու դիրք ունենալու Հայաստանի ձգտումները: Կարևոր է, որ նոր տեխնոլոգիաները գործնական կիրառություն ունենան նաև սոցիալ-տնտեսական և հանրային կյանքում: Անհրաժեշտ է, որ որոշակի խիստ ստանդարտներ ներդրվեն ինչպես մյուս ոլորտներում, այնպես էլ գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսությունը պետության ողնաշարն է, բնակչության պահպանման և աճի երաշխիքը:

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր երկրում գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիները կազմում են բնակչության շուրջ մեկ երրորդը, իսկ բյուջետային հատկացումներն այս ոլորտին եղել են ցածր: Հարկ է նշել, որ գյուղատնտեսությունը չի արժանացել բավարար ուշադրության և չի դիտարկվել որպես սոցիալ-ժողովրդագրական խնդիրներ լուծող գործոն: Դատողություններն այս ոլորտի վերաբերյալ արմատապես վերանայման կարիք ունեն: Պատահական չէ, որ ՀՀ-ում աղքատության ամենաբարձր ցուցանիշը գրանցվում է գյուղական բնակավայրերում: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության վերաբերյալ հոդվածներով կազմել են 2015 թվականին՝ 29,093,692.0 հազար դրամ, 2016 թվականին՝ 29,658,642.0 հազար դրամ, 2017 թվականին՝ 25,261,745.1 հազար դրամ, 2018 թվականին՝ 40,309,812.0 հազար դրամ, որին հաջորդել է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների ժողովրդական շարժումը, ինչի հետևանքով Հայաստանում փոխվեց իշխանությունը: Եկան նոր մարդիկ, բայց շարունակվեց հին նեոլիբերալ քաղաքական մոտեցումը: Երբ քաղաքական իշխանությունները լուծումներ չեն ունենում, փորձում են ազատվել խնդիրներից: Այդպես եղավ, երբ որոշվեց փակել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝ այն միավորելով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Ունենալ ընդարձակ ոլորտ, բայց չունենալ ոլորտի քաղաքականությունն իրականացնող պատասխանատու գերատեսչություն անթույլատրելի է: Մինչդեռ նախանշված գործառույթներով գյուղատնտեսության նախարարություն ունենալու մասին նշված էր թե՛ իշխող քաղաքական ուժի նախընտրական ծրագրում, թե՛ Կառավարության՝ 2019-2023

թվականների համար մշակված գործունեության և միջոցառումների ծրագրում: Այնուամենայնիվ, Գյուղատնտեսության նախարարությունը միացվեց Էկոնոմիկայի նախարարությանը Կառավարության գործունեության ծրագրի հաստատումից հետո՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 01.06.2019 թվականին:

Համաձայն պաշտոնական հրապարակումների՝ 2019 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, տարեկան կազմել է 852.8 մլրդ դրամ. Որից ընդամենը 4 մարզի տեսակարար կշիռն է այս արժեքի մեջ բարձր 10 տոկոսից, իսկ մյուս մարզերը, ներառյալ մայրաքաղաք Երևանը, ունեն համեմատաբար ցածր մասնակցություն: Դրանցից Վայոց Ձորի և Տավուշի մարզերի տեսակարար կշիռը ցածր է 5 տոկոսից՝ կազմելով համապատասխանաբար՝ 2.5 և 4.4 տոկոս: Սա արդեն ցուցիչ է, որ տարածքների հավասար զարգացման սկզբունքի կիրառման տեսանկյունից պետք է միջոցներ ձեռնարկել և առավել ուշադրություն դարձնել համեմատաբար թույլ մարզերին: 2019 թվականին, 2018 թվականի համեմատությամբ, գյուղատնտեսության ոլորտը անկում է գրանցել շուրջ 4.2 տոկոսով, փոխարենը աճել է ձկնարտադրության ցուցանիշը շուրջ 7.3 տոկոսով:

Այս օրերին ինչպես ամբողջ աշխարը, այնպես էլ Հայաստանը անցնում է դժվարությունների միջով՝ պայմանավորված նոր տեսակի կորոնավիրուսի տարածմամբ: Համավարակի տարածումը ևս մեկ անգամ փաստեց, որ պետք է ապավինենք մեր ուժերին և լուծենք մեզ համար կարևորագույն խնդիրները: 2020 թվականի մարտի 16-ին Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն, երբ կար 45 վարակակիր, իսկ այսօր արդեն բավականին զոհեր կան: Համավարակը ուժգին հարված հասցրեց համաշխարհային տնտեսությանը, փոխվեցին և դեռ շատ կփոխվեն մեր երկրի միջազգային տնտեսական հարաբերությունները: Իշխանությունները նոր տեսակի կորոնավիրուսի հետևանքների հաղթահարման համար կյանքի են կոչել և գյուղատնտեսությանն ուղղված միջոցառումների ծրագիր, որը սահմանափակվում է ոլորտին տրամադրվող զրո տոկոսով վարկերով, բայց պայմանով, որ բանկի փաստացի տոկոսադրույքը չպետք է գերազանցի ՀՀ դրամով 13-14 տոկոսը, իսկ արտարժույթով՝ 9.0 տոկոսը: Գաղտնիք բացահայտած չեմ լինի, եթե նշեմ, որ մեր քաղաքացիների մի զգալի մասն արդեն իսկ ծանրաբեռնված է վարկերով: Հանրությանը թողնել միայնակ բանկերի դեմ, ինչ է թե վարկերի տոկոսադրույքները սուբսիդավորվում են:

Կան պարենային ապրանքների տեսակներ, որոնց մի զգալի մասը ներմուծվել է, իսկ վաղը կարող է դրա հնարավորությունը չլինել: Ուստի Հայաստանի իշխանությունները պետք է կարողանան ապահովել երկրի պարենային պաշարները: Այդ իսկ պատճառով նորից պետք է վերադառնալ գյուղատնտեսությանը և միջոցների մի զգալի մասն ուղղել այս ոլորտ: Հարկավոր է փոփոխություն կատարել երկրի կառավարման ծրագրերում, կառուցվածքում և վերանայել կադրային քաղաքականությունը:

Պատահական չէ, որ մարտի 23-ին ՀՀ կառավարությանը համավարակի պայմաններում հակաճգնաժամային կառավարման վերաբերյալ ՀՅԴ ներկայացրած առաջարկություններում հատուկ անդրադարձ է կատարվել ռազմավարական պաշարների և պարենային անվտանգության խնդիրներին:

Սակայն այսօր իշխանությունն ունի՞ արդյոք այս խնդիրների լուծման գիտակցումը: Դատելով այն հանգամանքից, որ Կառավարության որդեգրած շուրջ երկու տասնյակ հակաճգնաժամային միջոցառումներից ոչ մեկը ուղղակիորեն ուղղված չէ գյուղատնտեսության ոլորտին, այլ դրանք հանդիսանում են ֆինանսավարկային միջոցներից օգտվելու խրախուսիչ գործիք կամ քաղաքացիների առանձին խմբերին ուղղված հասցեական աջակցություն, ապա գյուղատնտեսության զարգացման նոր ռազմավարության որդեգրումն ու իրականացումը շարունակում է մնալ հրատապ և արդիական խնդիր:

Հայաստանի Հանրապետության պետահիրավական կառուցվածքի ազգային-ժողովրդավարական բնույթը (1918-1920թթ.)

(պատմական զուգահեռներ 1-ին և 3-րդ հանրապետությունների միջև) (երկրորդ և վերջին մաս)

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Ընտրովի պառլամենտ: ՀՀ պետական ժողովրդավարական համակարգի ձևավորման ամենավառ դրսևորումը եղավ համաժողովրդական ուղղակի, ընդհանուր, հավասար, գաղտնի քվեարկությամբ խորհրդարանական ընտրությունների անցկացումն ու ընտրովի պառլամենտի (խորհրդարանի) ձևավորումը: 1919 թ. գարնանը, երբ Առաջին աշխարհամարտն արդեն ավարտվել էր, ՀՀ վիճակը՝ նկատելիորեն կայունացել և սահմաններն ընդարձակվել էին: Ամերիկյան օգնության շնորհիվ փոքր-ինչ մեղմվել էր սովը, և շինականն անցել էր խաղաղ աշխատանքի, օրակարգի հարց դարձավ նախորդ՝ 1-ին գումարման խորհրդարանի՝ Հայաստանի խորհրդի փոխարեն նոր, ընտրովի խորհրդարանի ձևավորումը: Հունիսի 21-23-ը տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները տարբեր պատճառաբանություններով ու հիմնավորումներով բոյկոտեցին Հայ ժողովրդականները, Հայ սահմանադիր ռամկավարները, Հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, բոլշևիկները և այլն:

Համաձայն ընտրությունների մասին օրենքի (բաղկացած տասը գլխից և 111 հոդվածից[1])՝ դրանք անցան համամասնական ընտրակարգով՝ կուսակցական սկզբունքով, ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ, առանց ազգի, կրոնի ու սեռի խտրության, 20 տարին լրացած, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող երկու սեռի քաղաքացիների մասնակցությամբ: Ի դեպ, ընտրելու իրավունք էր տրված նաև հանրապետության տարածքում ապաստանած մի քանի հարյուր հազարի հասնող արևմտահայ (տաճկահայ) գաղթականությանը, ինչը փաստում է հանրապետության իշխանությունների ազգային-ժողովրդավարական բնույթի մասին[2]: Վիճակագիր Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) տվյալներով, 1918 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության անցկացրած մեկօրյա վիճակագրությամբ, հանրապետության տարածքում գաղթականների ու փախստականների ընդհանուր թիվը կազմում էր 244000 շունչ[3]: Գաղթականությանը ոչ միայն թույլատրվեց մասնակցել համապետական ընտրություններին, այլև նման հեռագնա քայլով նրանք ինքնաբերաբար համարվեցին (ճանաչվեցին) ՀՀ քաղաքացիներ՝ իրենց իրավունքներով ու պարտականություններով: Ավելին՝ Անդրկովկասում ու բազմաթիվ երկրամասերում հայտնված հայ գաղթականները դիտարկվում էին որպես նորանկախ Հայաստանի քաղաքացիներ, եթե ոչ իրավական, ապա առնվազն հոգևոր-բարոյական իմաստով: ՀՀ կառավարությունն ու խորհրդարանը ջանում էին ամեն կերպ օգնել ու աջակցել նրանց խնամակալության, դեպի հայրենիք ներգաղթի կազմակերպման հարցում և, ավելի լայն առումով, ի վերջո Հայկական հարցի, այն է՝ Միացյալ և Անկախ Հայաստանի

Առաջին Հանրապետության խորհրդարանի կին պատգամավորները: Ձախից աջ՝ Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյան, Կարարինե Ջալյան-Մանուկյան, Վարվառա (Վարյա) Սահակյան

ծրագրային նպատակի կենսագործման հեռանկարով: Ընտրություններին մասնակցությունից զատ՝ կառավարությունն ու խորհրդարանը գաղթականների համար հողահատկացումներ կատարեցին հատկապես մահմեդականներից ազատված տարածքներում: ՀՀ կառավարությունն ու խորհրդարանը ջանում էին ամեն կերպ օգնել ու աջակցել նրանց խնամակալության, դեպի հայրենիք ներգաղթի աջակցման հարցում և, ավելի լայն առումով, ի վերջո Հայկական հարցի, այն է՝ Միացյալ և Անկախ Հայաստանի ծրագրային նպատակի կենսագործման հեռանկարով: Ընտրություններին մասնակցությունից զատ՝ կառավարությունն ու խորհրդարանը գաղթականների համար հողահատկացումներ կատարեցին հատկապես մահմեդականներից ազատված տարածքներում: Կարծում ենք, որ այն ժամանակներում գործադրված ազգօգուտ այդ քայլն ուսանելի և առանց արհեստական խոչընդոտների կիրառելի կարող է լինել նաև մեր ժամանակներում հայրենիք վերադառնալ ցանկացող Սփյուռքի մեր հայրենակիցների համար: Օրինակ՝ վերաբնակեցման նման մի քաղաքականություն պետք է իրականացվի հատկապես Արցախի ազատագրված տարածքներում և այլն:

Վերադառնալով 1919 թ. հայ ժողովրդի կյանքում երբևէ անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներին՝ արձանագրենք, որ դրանցում բացարձակ հաղթանակ տարավ ՀՅԴ կուսակցությունը: Կանոնակարգով նախատեսված 80 պատգամավորական տեղերից 72-ը զբաղեցրեց ՀՅԴ կուսակցությունը, 4-ը՝ էսէռները, 2-ը՝ թուրքերը, մեկը՝ քուրդ (եզդի), և մեկն էլ՝ անկուսակցականի անվան տակ ծպտված բոլշևիկ[4]:

Դրանով հանդերձ՝ փաստենք, որ ՀՅԴ բացարձակ գերակշռությամբ խորհրդարանում գործող մեկ տասնյակից ավելի (12) մշտական հանձնաժողովներում ընդգրկված են եղել ընդդիմության բոլոր 8 անդամները, ընդ որում, առանձին ներկայացուցիչներ միաժամանակ հանդես էին գալիս երկու տարբեր հանձնաժողովներում:

Երկրորդ գումարման ընտրովի խորհրդարանի 80 պատգամավորներից 13-ը արևմտահայեր էին, 3-ը՝ կին, որոնց թվում էր հանգուցյալ Արամ Մանուկյանի այրին՝ Մանուկյան (Ջալյան) Կատարինեն: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Հայաստանի պառլամենտի ընտրությունների մասին օրենքով կանայք տղամարդկանց հավասար ունեցել են ոչ միայն ընտրելու, այլև ընտրվելու իրավունք: Սա փաստում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին, մի երևույթ, որը 20-րդ դարասկզբին տակավին նոր էր սկսել արմատավորվել համաշխարհային ընտրական համակարգում: Հավելենք ևս մի դիտարկում. նախատեսվում էր հետագայում՝ Հայկական հարցի լուծումից, այսինքն՝ Միացյալ և Անկախ Հայաստանի հիմնումից հետո անցկացնել խորհրդարանի լրացուցիչ ընտրություններ արևմտահայ (գաղութահայ) 50 նոր պատգամավորական տեղերի համար, որով Միացյալ Հայաստանի խորհրդարանը պիտի բաղկացած լիներ 130 պատգամավորներից: Ինչպես տեսնում ենք, ձևավորվելու էր արևելահայ և արևմտահայ պատգամավորների գրեթե հավասար հարաբերակցությամբ պառլամենտ: Խորհրդարանի պատգամավորների թվակազմի առումով պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով 1-ին և 3-րդ խորհրդարանների միջև՝ կարելի է նկատել ուշագրավ ևս մի զուգադիպություն, այն է՝ նախատեսվելիք Միացյալ Հայաստանի խորհրդարանի (130) պատգամավորների և ՀՀ ներկայիս Ազգային ժողովի (մինչև 130) պատգամավորների քանակական հարաբերակցությունը ստացվում էր գրեթե նույնը: Բնութագրական է նաև, որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ ներկայումս ընտրությունների ժամանակ նախապատվությունը տրվում է համամասնական-կուսակցական սկզբունքին[5], որը դարձյալ ցույց է տալիս ժառանգորդական ու իրավաքաղաքացիական կապը Առաջին և Երրորդ հանրապետությունների միջև:

Հարկ է նաև ընդգծել, որ 20-րդ դարասկզբի հայաստանյան ընտրողը հիմնականում ծանոթ էր հայ իրականության մեջ գործող ազգային և ոչ ազգային քաղաքական կուսակցությունների ծրագրերին, գործելակերպին, ճանաչված գործիչներին և այլն: Ինչպես արդեն ասվել է, այդ կուսակցությունները ներկայացնում էին Հայաստանի քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը՝ աջակողմյան, կենտրոնական և ձախակողմյան: Եվ որքան էլ զարմանալի թվա, այն ժամանակվա կուսակցությունները գաղափարապես ու քաղաքական դավանանքով շատ ավելի ճանաչված էին ու կայացած, մի բան, որ չես ասի մեր ժամանակներում առնվազն 50-60-ի հասնող կուսակցությունների մասին: Հայաստանի՝ վերջին երկու-երեք տասնամյակների հասարակական-քաղաքական կյանքի պատկերը ցույց է տալիս, որ մի շարք կուսակցություններ, ըստ էության, գաղափարազուրկ են, հաճախ ստեղծվում են իրավիճակի ու հանգամանքների թելադրանքով, երբեմն՝ մեկ անձի շուրջ՝ սեփական շահերի ու անձնական դրամագլխի պաշտպանության նպատակով:

Ընտրությունների փուլում նրանք հանդես են գալիս ժողովրդին ուղղված փքուն, հրապուրիչ ու չիմնավորված խոստումներով, կրկնում մեկը մյուսի ասածները, բաժանում են ընտրակաշառք, արագ «գունափոխվում» են կամ ինչ արագությամբ, որ ստեղծվում են, անհաջողություն կրելուց հետո նույն արագությամբ քայքայվում ու հեռանում են հասարակական-քաղաքական ասպարեզից: Շատ հաճախ նման կուսակցությունների ծրագրերում գրված է մի բան, սակայն նրանք իրականացնում են բոլորովին այլ բան և այլն:

Ինչ վերաբերում է Առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններում ՀՅԴ-ի տարած բացարձակ հաղթանակին, ապա դա բացատրվում է մի քանի հանգամանքով. ա) նախ ընտրությունների արդյունքները վկայում են ՀՅԴ-ի 1890-ական թթ. անցած պատմական հարուստ ուղու, ունեցած համազգային ազդեցության ու քաղաքական մեծ կշռի մասին, բ) ցավոք, մի շարք կուսակցություններ՝ ՀԺԿ, Սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ, Հայ սահմանադրական ռամկավարներ և այլն, տարբեր պատճառներով ընտրությունները բոյկոտեցին: Տվյալները ցույց են տալիս, որ եթե աջակողմյան, ազգային-ազատական գաղափարներով առաջնորդվող ՀԺԿ-ն մասնակցեր ընտրություններին, ապա կարող էր ստանալ 15-20 պատգամավորական տեղ, գ) ընտրությունների ընթացքում թույլ են տրվել նաև զանազան ընտրախախտումներ և անգամ զեղծարարություններ, մի երևույթ, որից այդպես էլ չենք կարողանում ազատվել 100 տարի անց էլ: Օրինակ՝ այն ժամանակ ընտրախախտում է համարվել այն, որ տվյալ ընտանիքի ծիսի (գերդաստանի) մեծը, հայկական ավանդույթի ուժով, միայնակ քվեարկել է նաև ընտանիքի՝ ընտրական իրավունք ունեցող մյուս անդամների՝ կնոջ, որդու, հարսի և ուրիշների փոխարեն, մինչդեռ, ըստ ՀՀ պառլամենտի ընտրությունների մասին օրենքի Ջ գլխի հոդված 64-ի, «ընտրողն իր ընտրատոմսը մատուցանում է անձամբ»[6], պատառոտվել են ընտրություններին վերաբերող գովազդային ցուցանակներն ու կոչերը, կամ ընտրակաշառք է համարվել այն, որ ընտրությունների օրերին սովյալ բնակչությանը ալյուր է բաժանվել և այլն: Ընտրախախտումների վերաբերյալ պատմահամեմատական զուգահեռը ցույց է տալիս, որ իրենց բնույթով, «հնարամտություններով» ու մասշտաբայնությամբ անհամեմատելի են մեկ դար առաջվա և ներկայիս ընտրական թերությունները:

***

Դատական իշխանությունը: 1918 թ. ՀՀ անկախության հռչակումից հետո, չնայած հանրապետության տնտեսական և քաղաքական դժնդակ պայմաններին, նորակազմ խորհրդարանն ու կառավարությունն առաջին իսկ օրերից մեծ ճիգեր գործադրեցին պետական իշխանության անբաժանելի մասը կազմող երրորդ թևի՝ դատական իշխանության ձևավորման հարցում՝ եվրոպական ժողովրդավարական երկրների օրինակով կազմակերպելու և բնական հունի մեջ դնելու Հայաստանի պետական և հասարակական կյանքը, երկրում հաստատելու իրավական նորմերից բխող կարգուկանոն ու արդարադատություն:

Ավելի քան հարյուրամյա հեռավորությունից դիտարկելով այս հարցը՝ կարելի է առանձնացնել ուսանելի

և ազգային-ժողովրդավարական արժեք ներկայացնող հետևյալ երևույթներն ու կառույցները: Հասկանալի է, որ եռաթև պետական իշխանության կայացման գործում կարևոր էին դատական իշխանության ձևավորումը, դրա հայացումը և ժողովրդավարացումը: Դատահիրավական համակարգում մտցվեց եռաստիճան դատական համակարգ՝ օկրուգային կամ շրջանային դատարան, դատական կամ դատաստանական պալատ և Սենատ: Սենատը կամ Ծերակույտը դատական բարձրագույն ատյանն էր: Այն, փաստորեն, մի կողմից իրականացնում էր վճռաբեկ ատյանի դեր, իսկ մյուս կողմից՝ օրենքները մեկնաբանող, այսինքն՝ և՛ Գերագույն դատարանի, և՛ ինչ-որ առումով նաև Սահմանադրական դատարանի դեր[7]:

Հատկանշական է, որ գրեթե համանման եռաստիճան (Առաջին ատյանի ընդհանուր իրավասության, Վերաքննիչ և Վճռաբեկ) դատական համակարգ է գործում ներկայիս ՀՀ-ում: Իհարկե, ներկայիս՝ 3-րդ հանրապետությունում գործում է նաև բարձրագույն դատական մարմին հանդիսացող Սահմանադրական դատարանը: Այն ժամանակ սահմանադրության բացակայության պատճառով նման անվանումով ու իրավասությամբ դատարան չկար, սակայն, ինչպես արդեն ասվեց, ինչ-որ չափով նման լիազորություններով էր օժտված Սենատը: Հավելենք նաև, որ 1-ին հանրապետության օրոք գործել են նաև ցարական Ռուսաստանից ընդօրինակված, այսպես կոչված, Հաշտարար դատարաններ, որոնք քննելիս են եղել փոքր հանցակազմ (մինչև 500 ռուբլի տուգանքի կամ վեց ամսվա բանտարկության պատժաչափ որոշող) պարունակող գործերը, եղել են նաև վարչական դատարաններ[8]: 1920 թ. մայիսին ծագած բոլշևիկների հակապետական խռովության հետևանքով ապստամբական օջախ հանդիսացող մի քանի քաղաքներում հարկադրաբար ստեղծվեցին արտակարգ դատարաններ, և հարկադրաբար ժամանակավորապես մտցվեց մահապատժի մասին հոդվածը[9]:

Անգամ ժամանակակից չափանիշներով յուրաքանչյուր պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով և առաջին հերթին երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Հայտնի է, որ 1919 թ. գարնանը հատուկ օրենքով ՀՀ-ում Շրջանային դատարանին կից հիմնվեց երդվյալ ատենակալների ինստիտուտ՝ վեց ատենակալներով, դատահիրավական մի կառույց, որն այն ժամանակ բացակայում էր աշխարհի բազմաթիվ, այդ թվում՝ եվրոպական զարգացած երկրներում, ինչպես նաև նման ձևակերպմամբ՝ մեր ներկայիս դատական համակարգում:

Խատիսյանը զինվորական փողանցի ժամանակ. Սարիղամիշ, 1919 թ.:

Շատ կարևոր խնդիր էր դատական իշխանության հայացումը: 1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթի (1869-1951 թթ.) վավերացմամբ հաստատվեց «Պետական լեզվի մասին» օրենքը, և մայրենին ստացավ միակ պետական լեզվի կարգավիճակ[10]: Հանրապետությունում, ինչպես նաև Թիֆլիսում կատարվեցին գործնական-բառարանային աշխատանքներ ոչ միայն միջազգային իրավական, բժշկագիտական, բնագիտական և այլ տերմինների ու հասկացությունների հայերեն համարժեքների ստեղծման ուղղությամբ, այլև, ինչպես ասվեց, օրենքից բխող արդարադատության հիմնարկությունների աշխատանքների հայացման ուղղությամբ: Մենք տեսնում ենք, որ արդեն 1920 թ. գարնանից՝ արդարադատության նախարար Ռ. Դարբինյանի (Ա. Չիլինգարյան) (1883-1969 թթ.) ժամանակից՝ դարավոր ընդհատումից հետո, առաջին անգամ դատավարական գործընթացն անցկացվում էր մայրենիով, վճիռները կայացվում էին «Հանուն Հայաստանի Հանրապետության» ձևակերպումով, և այլևս չկային մեծ բանաստեղծ Պ. Սևակի ձաղկած «ռուսա»-ն և «թուրքա»-ն: Բացառությամբ մի քանի ոլորտի, հատկապես բանակի ու առողջապահության, մնացած հիմնարկ-ձեռնարկություններում ամբողջ գործավարությունն արդեն տարվում էր պետական լեզվով՝ մայրենիով:

Հանրապետության արդարադատության մարմինները ենթարկվում էին միայն օրենքին և պատասխանատու էին միայն օրենքի առջև: Դատական ատյանների բարձր պաշտոնյաներին, Նախարարների խորհրդի առաջարկությամբ, ընտրում էր խորհրդարանը, ինչը դարձյալ փաստում է խորհրդարանի՝ բարձրագույն իշխանություն լինելը: Ավելին՝ խորհրդարանի իրավասության շրջանակներում էր մտնում բանտարկյալներին ներում շնորհելը կամ նրանց պատիժը մեղմացնելը: Դատական իշխանության ժողովրդավարական-մարդասիրական դրսևորման արտահայտություն պետք է համարել նաև այն, որ խորհրդարանը ձայների մեծամասնությամբ մերժեց «Մահապատժի մասին» օրինագիծը: Ի դեպ, Ռուսաստանում Ալ. Կերենսկու Ժամանակավոր կառավարությունը, իսկ հետո նաև Վրաց սոցիալիստ-մենշևիկների խորհրդարանը ընդունել էին մահապատժի մասին օրինագիծը, իսկ Հայաստանում համանման օրենքի գործադրումը մերժվեց[11] և այլն:

Այդուհանդերձ, սրանք ավելի քան մեկ դար առաջ սեփական ազգային ինքնիշխան պետության համար արված քայլեր ու գործողություններ էին, որոնք կատարվում էին երկրում առկա ներքին ու արտաքին, սոցիալ-տնտեսական ու քաղաքական արտակարգ ծանր պայմաններում: Ասվածներին պետք է հավելել նաև այն, որ նորաստեղծ հանրապետությունում բացակայում էին պետության կառավարման ու կայացման փորձ ունեցող

անհրաժեշտ թվով ուսյալ կադրեր, հասարակության իրավական ու սոցիալ-կրթական մակարդակը բավարար չէր, էլ չենք խոսում նորաստեղծ պետության համար այնքան անհրաժեշտ նյութական ու ֆինանսական միջոցների սղության մասին:

***

ՀՀ պետական կառուցվածքի ռամկավար կառավարման համակարգի արմատավորման ժողովրդավարական ցուցիչներից (հիմքերից մեկը) պետք է համարել նաև տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-երը)՝ գավառային, քաղաքային և գյուղական համայնքային մարմինները: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ պատերազմում պարտված Գերմանիան և Թուրքիան հարկադրված իրենց զորքերը դուրս բերեցին Անդրկովկասից, ՀՀ սահմանները սկսեցին ընդարձակվել՝ ներառելով Լոռի-Փամբակը, Ալեքսանդրապոլի գավառը, Էջմիածնի գավառի մնացած մասը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը, Կարսի նահանգը և այլն: 1919 թ. գարնանը ՀՀ գավառների թիվն անցնում էր մեկ տասնյակից, քաղաքների թիվը՝ նույնպես: Սոցիալական կազմի տեսանկյունից հանրապետության բնակչության 85 տոկոսը կազմում էր գյուղացիությունը: Ավելի ուշ՝ 1920 թ. մայիսին, հանրապետության տարածքը վարչականորեն բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի: Այդ ժամանակ ՀՀ տարածքը հասավ 67 հազ. քառ. կմ-ի՝ 2 մլն բնակչությամբ: Գործնականում ՀՀ սահմանները ձգվում էին Արցախից մինչև Օլթիի ածխահանքերը:

Հենց 1919 թ. մայիսից կառավարության նախաձեռնությամբ ռուսական զեմստվոների օրինակով մշակվեց և գործողության մեջ դրվեց «Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) մասին» օրենքը[12]: Խորհրդարանում գործում էր ինքնավարությունների մշտական հանձնաժողով (նախ.՝ Ա. Ղազարյան), որը փորձում էր ՏԻՄ-երի գործունեության համար ապահովել համապատասխան իրավաօրենսդրական դաշտ: ՏԻՄ-երի՝ որպես ժողովրդավարական ընտրովի կառույցների խորհրդի ու վարչության գործառույթներն ընդգրկում էին տեղական նշանակության քաղաքային ու գավառային խնդիրների՝ հողահատկացումների, բնակարանային, ֆինանսական (ելևմտի), կրթության, առողջապահության, սանմաքրման, բնակավայրերի բարեկարգման, վիճակագրության, տուրքերի գանձման և այլ ոլորտներ: Փորձեր արվեցին տարանջատելու կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, սահմանները և փոխհարաբերությունների շրջանակները: Օրինակ՝ փորձեր արվեցին ՆԳՆ մի շարք գործառույթներ, մասնավորապես՝ միլիցիային վերաբերող, հանձնել ՏԻՄ-երի ենթակայությանը և այլն[13]:

Հատկանշական է, որ խորհրդարանի նմանությամբ տեղական ինքնակառավարման մարմինները՝ գավառային, քաղաքային և համայնքային, ևս ընտրովի էին: Դրանք խորհրդարանի ընտրությունների նման ձևավորվում էին բազմակուսակցական (համամասնական) սկզբունքով անցկացված ընտրությունների միջոցով: Տվյալներ կան, որ ընտրությունների արդյունքներով, ՀՅԴ-ից զատ, բավականաչափ իրավասու տեղեր են զբաղեցրել և այդ մարմինների աշխատանքներում ընդգրկված են եղել նաև այլ կուսակցություններ՝ ՀԺԿ, Էսէռ, Սոց.-դեմ. մենշևիկ և նույնիսկ բոլշևիկ, անկուսակցականներ և այլն:

Այսպիսով, մեկ-երկու տարում հայաստանյան բազմաթիվ քաղաքներում և շրջաններում ժողովրդավարական այդ կառույցի՝ տեղական ինքնակառավարման արմատավորումն ինքնին վկայում է, որ հանրապետության իշխանություններն այդ ոլորտում ևս արել են հնարավորը այն ժամանակների չափանիշներով կազմակերպված պետության կայացման ուղղությամբ: Վստահաբար կարելի է ասել, որ Հայաստանի առաջին հանրապետության ՏԻՄ-երի փորձն ու դասերն ուսանելի ու կիրառելի կարող են լինել ժողովրդավարական հիմնարար սկզբունքներով Երրորդ հանրապետության ՏԻՄ-երի՝ կայացման գործում:

***

Ազգային բանակի փորձը: Հայաստանի ներկայիս հանրապետությանը պետահիրավական ու ռազմաքաղաքական տեսանկյունից ուսանելի փորձ կարող է փոխանցել Առաջին հանրապետության ազգային բանակը: ՀՀ պետական իշխանության իրավական առանցքը հանդիսացող խորհրդարանում գործում էր զինվորական հանձնաժողովը՝ Ռուբեն Տեր-Մինասյանի (1882-1951 թթ.) նախագահությամբ: Բնականաբար, դրա իրավաօրենսդրական աշխատանքների առանցքում էին բանակի կայացման ու ամրապնդման հարցերը: Նկատի ունենալով ՀՀ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակն ու, մեղմ ասած, ոչ բարեկամ անմիջական հարևաններին՝ խորհրդարանն ու կառավարությունը միջոց ու ջանքեր չեն խնայել՝ առաջին հերթին ամրապնդելու ու զորացնելու հայոց բանակը՝ իբրև ժողովրդի ու երկրի պաշտպանության ու անվտանգության թերևս ամենավստահելի երաշխավորի: Դա երևում է կառավարության ու խորհրդարանի կատարած ֆինանսական հատկացումներից: Վարչապետ Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ ՀՀ պետբյուջեի շուրջ 75 %-ը ծախսվում էր բանակի ու պաշտպանության համար[14]:

Ուշագրավ է, որ սեփական միջոցներով ու խնայողություններով, օտարերկրյա վարկով ֆինանսական հատկացումներ էին կատարվում ոչ միայն բանակի համար զենք-զինամթերքի գնման, զինվորականության կերակրման ու հանդերձավորման, այլև, իբրև ուսանելի փորձ, օտարներից կախում չունենալու համար: Անգամ կազմակերպվում էր ռազմամթերքի սեփական արտադրություն Քանաքեռում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլուր՝ մարտական գնդակներ պատրաստելու, փամփուշտներ լցնելու, հրանոթային արհեստանոցներ հիմնելու և գործարկելու համար:

Դարձյալ որպես պատմական փորձ ու դաս՝ հարկ է նաև նշել, որ պետականության հիմնասյուներից մեկը համարվող ազգային բանակի ամրության համար այն ժամանակ (1917 թ. ռուսական երկու հեղաբեկումների դառը փորձը հաշվի առնելով) շատ կարևոր էր համարվում նրա ապաքաղաքականացված լինելը: Իբրև պատմական իրողություն փաստենք, որ Առաջին հանրապետության օրոք իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները օրենքով ընտրություններին (խորհրդարանի, տեղական ինքնակառավարման մարմինների) մասնակցելու (ընտրել, ընտրվել) իրավունք չունեին[15]: ՀՀ բանակի ապակուսակցականացած լինելու մասին

է վկայում նաև այն փաստը, որ դրա բարձրագույն հրամանատարական կազմի 33 գեներալներից ոչ մեկը հիմնական կառավարող կուսակցության՝ ՀՅԴ անդամ չէր: Բացառություն էր միայն Դրոն (Դրաստամատ Կանայան, 1884-1956 թթ.), ով իր նախորդող կենսագրությամբ ավելի շատ հայդուկ էր, քան արհեստավարժ զինվորական:

Մարտունակ և որակյալ բանակ ունենալու համար իշխանությունները կարևորում էին ոչ միայն ուժեղ տնտեսության առկայությունը, այլև զինվորների բարոյականային կայունությունն ու հայրենիքին նվիրվածությունը: Ինչպես ասվեց, շատ կարևորվել է բանակի ապաքաղաքական լինելը: Բանակը լիովին ապաքաղաքականացնելու և ապակուսակցականացնելու նպատակով միգուցե առաջարկվի, որ ներկայումս իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները նույնպես չմասնակցեն խորհրդարանական և ինքնակառավարման մարմինների ընտրություններին և դրանով իսկ հեռու մնան քաղաքական գործընթացներից: Այս կապակցությամբ այնքան էլ համոզիչ չէ այն փաստարկը, թե դրանով խախտվում է զինվորական քաղաքացու սահմանադրական իրավունքը: Մեր համոզմամբ՝ հայոց ազգային բանակի զինվորականն այս բարդ աշխարհաքաղաքական տարածաշրջանում ու ժամանակներում, Արցախյան հարցի դեռևս վերջնականապես լուծված չլինելու պայմաններում ունի առանձնահատուկ առաքելություն՝ հնարավորինս հեռու մնալ քաղաքականությունից և առաջնորդվել միայն Ազգ-Բանակ-Հայրենիք եռամիասնության կարգախոսով, հայրենիքին անմնացորդ նվիրվելու ու ծառայելու գիտակցությամբ: Մենք գիտենք նաև, թե մեր ժամանակներում ինչպես են անցկացվում համապետական նշանակության ընտրությունները, այդ թվում՝ նաև զորամասերի ընտրական տեղամասերում և ոչ միայն այդտեղ: Մենք գիտենք նաև, որ ազգային բանակի հզորության ու բարձր մարտունակության համար շատ կարևոր է կապն ու վստահությունը բանակի ու իշխանությունների, միջև, քանզի բանակն ազգի ծնունդն է ու հոգեհարազատ զավակը:

Բանակի քանակական ու բարոյական ամրակայման առումով կարևոր է արդարության և հավասարության սկզբունքով զորակոչի մասին օրենքի գործադրումը: Մեր ժամանակների համար շատ ուսանելի է, որ Առաջին հանրապետությունում հայոց բանակ երկամյա պարտադիր զինծառայության էին անցնում զորակոչային տարիքի բոլոր տղամարդ քաղաքացիները՝ առանց սոցիալական, կրթական և դիրքի խտրության, այդ թվում՝ բոլոր պաշտոնատար անձանց զավակները: Իբրև օրինակ տեղին է հիշել, որ Հայաստանի ազատության և անկախության համար մղված կռիվներում որպես հայկական բանակի զինվորներ կռվեցին և զոհվեցին վարչապետներ Հ. Քաջազնունու երկու որդիները՝ Աշոտը և Արամը, Հ. Օհանջանյանի միակ որդին՝ Մինիկը, Ալ. Խատիսյանի եղբայրը և այլք:

Եվ վերջապես, ժառանգորդական-հոգևոր կապերով անմիջականորեն կապված են 1-ին և 3-րդ հանրապետությունների ներքին օրգանական միասնությունն արտահայտող, նույնական ու անբաժանելի հայոց պետական խորհրդանիշները՝ եռագույնը, օրհներգն ու զինանշանը: Կուզենայինք վստահ լինել, որ որևէ մեկը չի համարձակվի ոտնձգություն թույլ տալ ազատամարտերում սրբագործված, անկախ Հայաստանի Սահմանադրությամբ ամրագրված եռամիասնական այդ խորհրդանիշների նկատմամբ՝ ինչ-որ խմբագրումներ անել կամ առավել ևս տեքստային ու երաժշտական փոփոխություններ կատարել ըստ ժամանակ առ ժամանակ հնչող առաջարկների:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրվածը, կարելի է եզրահանգել, որ դարավոր ընդմիջումից հետո գերմարդկային ճիգերով ավելի քան մեկ դար առաջ Հայաստանի անկախության վերականգնման ու կարճատև գոյության ընթացքում ինքնիշխան անկախ պետականության ձևավորումը հայոց նորագույն պատմությունը սկզբնավորող գործընթաց էր, որում ձևավորված ժողովրդավարական կառույցները, ազգային ու հոգևոր արժեքները՝ որպես պատմական փորձ ու դաս, անշուշտ, ժառանգաբար փոխանցվել ու դեռևս կփոխանցվեն մերօրյա՝ Երրորդ հանրապետությանը՝ իբրև բոլոր առումներով հայ ժողովրդի հետագա առաջընթացին ու բարգավաճմանը նպաստող գործոններ:

Մեզ համար պատմականորեն ու ճակատագրորեն շատ թանկ, հաղթական Մայիսի կապակցությամբ հարկ է նաև ընդգծել, ներքին հոգևոր կապ կա Մայիսի 28-ի և Սեպտեմբերի 21-ի միջև, այն որ Հայաստանի ներկայիս հանրապետությունը, ըստ էության, Առաջինի իրավահաջորդն է և հոգեհարազատ ժառանգորդը, ասել է թե՝ առանց Առաջին հանրապետության, ամենայն հավանականությամբ, չէր լինի նաև այսօրվա Հանրապետությունը: Հենց դրանում է Մայիս 28-ի, եռագույնի և Սեպտեմբերի 21-ի խորհուրդը: Վերը ասվածին պետք է հավելել նաև այն ճշմարտությունը, որ Հայաստանի առաջին հանրապետության կերտողը հայ ժողովուրդն է, իսկ իբրև նրա քաղաքական կամքի ու համազգային նպատակների արտահայտիչ, անշուշտ, իր անուրանալի դերակատարությունն է ունեցել ՀՅԴ կուսակցությունը:

Օգտագործված աղբյուրներ

1- Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները» (1918-1920 թթ.), կազմողներ՝ Միրզոյան Ս. և ուրիշներ, Եր., 1998, էջ 212-226:
2- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 43, ֆ. 404, ց. 1, գ. 62, թ. 1-14, «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրութեանց», էջ 1, Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 276:
3- Տե՛ս Ա-Դո, Հայաստանի երկունքը, Եր., 2019, էջ 527:
4- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 3, թ. 22-23, գ. 32, թ. 5, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 98-99:
5- Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 176, Պողոսյան Վ., Սարգսյան Ն., նշվ. աշխ., էջ 174:
6- ՀՀ պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Եր., 1998, էջ 220:
7- Տե՛ս Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 144:
8- Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., էջ 114:
9- Ահարոնեան Վարդգէս, Դատարանը Հայաստանի Հանրապետութեան մէջ, տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 1932, թիվ 12 (հոկտեմբեր), էջ 118-119:
10- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 30:
11- Տե՛ս Հակոբյան Ա., վերոնշյալ աշխատությունը, էջ 117-118:
12- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 21:
13- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1. գ. 52, թ. 43, «Յառաջ», Եր., 9 հունվարի 1920 թ.:
14- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 3 հուլիսի 1920 թ.:
15- Տե՛ս ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 62, թ. 1:

Իրական պատմություն. Բաթումի պայմանագրի գնահատման շուրջ

Արամ Նազարյան

Ավելի քան հարյուր տարի առաջ աշխարհաքաղաքական և տարածաշրջանային սրընթաց փոփոխվող պայմաններում վերականգնվեց հայկական անկախ պետականությունը: Մեր հայրենիքի մի մասում ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Հիրավի շրջադարձային և դարեր շարունակ մեր ազգի քաղաքական միտքն ու ռազմական ոգին ձևավորող, ամրապնդող ու պայքարի մղող այդ տեսլականը կյանքի կոչվեց ամենից առաջ հայության մայիսյան փառահեղ հաղթանակների շնորհիվ: Որ դա իրականացավ հայոց բանակի, նրան սնող, աջակցող և կռվելու կամք ու ոգի տվող ժողովրդի, հայ հասարակության բոլոր շերտերի, ազգային քաղաքական ու ռազմական ուժերի և նրանց նշանավոր գործիչների համատեղ ջանքերով, հայ հանրությունն այն օրերին և այժմ գրեթե միակարծիք է: Բայց, չգիտես ինչու, ոմանք շարունակում են հին կարծրատիպային կաղապարներով գնահատել 1918 թ. գարնանը Հայաստանում և մեր տարածաշրջանում տեղի ունեցած վճռորոշ իրադարձությունները. մի կողմից գովերգում են մայիսյան հաղթանակներն ու Առաջին հանրապետության ծնունդը, մյուս կողմից՝ արհեստական հակադրություն ստեղծում, ողբերգական կամ խարազանման մթնոլորտ ձևավորում Բաթումի պայմանագրի շուրջ:

Մեր կարծիքով՝ սխալ է նման հակադրություն ստեղծել պատմական ընթացքի և դրա արդյունքների գնահատման մեջ, նաև սլաքները տանել-հասցնել Ալեքսանդրապոլի պայմանագիր ու դրանով նսեմացնել Առաջին հանրապետության արժեքը: Երբ դա արվում էր խորհրդային ժամանակներում, հասկանալի էր, բայց մեր օրերում նման մտայնությունն ու գործելակերպը պետք է վերացնել հայության միջավայրից: Կողմնակալ, միակողմանի, միտումնավոր, առարկայականությունից և համակողմանիությունից հեռու գնահատականներով ոմանք փորձում են նվազեցնել կամ անտեսել ժամանակի հայ ազգային քաղաքական և ռազմական ուժերի, նրանց ղեկավարների մեծագույն ներդրումը մեծ հաղթանակների և անկախության վերականգնման գործում:

Քաղաքական և գաղափարական պայքարի կեղտոտ մեթոդներ ու հնարներ չարժե կիրառել մեր պատմության հանդեպ: Դա առավել ևս աններելի է հայության հերոսական և փառահեղ էջերը ներկայացնելիս: Այդ մոտեցումն ու մտավարժանքներն այլևս արխայիկ են, ուժերի անիմաստ և անտեղի վատնում:

Որ նման երևույթներ դեռ տեղ են գտնում մեր հասարակության մեջ, մեր եթերում, մամուլում և համացանցում, մերժելի է, և դրանում մեր մեղքի

Բաթումի հայկական պատվիրակությունը. ձախից աջ՝ Հ.Քաջազնունի, Ալ. Խատիսյան, Մ. Պապաջանյան:

բաժինը նույնպես կա: Ժամանակին չենք լուսաբանում, հակադարձում, չենք սովորեցնում մեր իրական պատմությունը, վեր չենք հանում և ներկայացնում Դաշնակցության ներդրումը, վաստակը Հայաստանի և հայ ազգի պատմության մեջ: Իսկ որ հենց 1918 թ. գարնանը Դաշնակցությունը մեծ դեր է խաղացել մեր պատմական ընթացքը բեկելու, Հայաստանի վերածնունդը կերտելու, Անկախ և Միացյալ Հայաստանի երկարատև ճանապարհի սկիզբը հիմնավոր դնելու գործում, վկայում են նրա քաղաքական ղեկավարությամբ հայոց բանակի ստեղծումը՝ ի դեմս Առանձին հայկական կորպուսի, Առաջին հանրապետության հիմնադիր հայրեր Արամի և Դրոյի ղեկավարությամբ տարած մայիսյան հաղթանակները, հանրապետության ծնունդն ու կայացումը: Ցավոք, այսօր ըստ պատշաճի չենք լուսաբանում նաև Արցախյան ազատամարտում Դաշնակցության դերն ու ներդրումը:

Չվրիպելու համար Բաթումի պայմանագիրը պետք է գնահատել ոչ թե ժամանակի իրադարձություններից առանձնացված, այլ ընդհանուր շղթայի մեջ: Ով փորձում է ոչ համակողմանիորեն վերլուծել դեպքերը, նա անշուշտ հանգելու է ոչ լիարժեք, կեղծ եզրահանգման, իհարկե եթե նպատակը դա չէ: Բնականաբար, այս հոդվածում հնարավոր չէ պատմագիտական և արխիվային ամբողջ հենքը շարադրել, որպեսզի ցույց տանք Բաթումի պայմանագրի իրական արժեքը, ազդեցությունը մեր պատմության մեջ, բայց այն բոլոր փաստերը, որ օգտագործվել են մեր կողմից, հավաստի են, համակողմանիորեն ստուգված: Հարկ եղած դեպքում կարող ենք վավերագրերը ներկայացնել…

Եվ այսպես, ինչո՞ւ մեր պատմական ընթացքը, և ոչ

միայն մեր, այլև վրացիների ու Անդրկովկասի արևելքի թաթարների (այժմ կոչվում են ադրբեջանցիներ), հանգեցրեց Բաթումի պայմանագրի ստորագրմանը, և ինչ տվեց այն կողմերին:

Այդ ընթացքը սկզբնավորվել էր դեռ 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումով: Ռուսաստանի երկրամաս Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների ղեկավար քաղաքական ուժերը չընդունեցին այդ իշխանափոխությունը և ստեղծեցին երկրամասի տեղական իշխանություն: Նրանք համոզված էին, որ բոլշևիկների իշխանությունը շատ շուտով տապալվելու է: Բայց միայն տարիներ անց ակնհայտ դարձավ, որ կանխատեսումը սխալ էր: Առաջին աշխարհամարտում պատերազմող Ռուսաստանում սկսվել էր հասարակարգային նոր գործընթաց, որը քաղաքակրթական նոր բաղադրիչ մտցրեց համաշխարհային պատմության մեջ:

Բոլշևիկյան կառավարությունը սեպարատ, անարդար, պարտվողական հաշտություն կնքեց Ռուսաստանի թշնամի Քառյակ միության պետությունների հետ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում՝ հսկայական տարածքներ զիջելով Գերմանիային ու Օսմանյան կայսրությանը: Հրաժարվելով Անտանտի իր դաշնակիցներից՝ բոլշևիկյան Ռուսաստանը միակողմանիորեն դուրս եկավ համաշխարհային կռվից:

Հայության տեսլականը՝ ստեղծել անկախ Հայաստան թուրքերից հետ վերցված մեր հայրենիքի տարածքում, որի իրագործումն այնքան մոտ էր, այդ ժամանակ ձախողվեց: Բրեստի հաշտությամբ թուրքերին էր վերադարձվում Արևմտյան Հայաստանը, որի ազատագրման համար երեք տարի կռվել էին ռուսական բանակը և հայ կամավորները: Թուրքերին էին նվիրաբերվում նաև Կարսի և Բաթումի մարզերը: Վրացիները ևս չընդունեցին այդ պայմանագիրը, որովհետև կորցնելու էին Բաթումը: Անդրկովկասի մուսուլմանների ղեկավար ուժերը, որ նույն քաղաքական իշխանության մեջ էին վրացիների և հայերի հետ երկրամասում, արտաքուստ դեմ էին Բրեստին:

Այս ընթացքում ռուսական հաղթական բանակը, որ ջախջախել էր թուրքերին, ինքնակամ և անկանոն լքեց Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատը: Թուրքերն օգտվեցին առիթից և մինչև Բրեստի պայմանագրի ստորագրումը, խախտելով Երզնկայի զինադադարը, վերսկսեցին պատերազմական գործողությունները Կովկասյան ճակատում:

Անդրկովկասի քաղաքական կենտրոն Թիֆլիսում երկրամասի տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից կազմվեցին իշխանության նոր մարմիններ՝ օրենսդիր Սեյմը և նորակազմ կառավարությունը: Երկուսի նախագահներն էլ վրացի մենշևիկներ էին: Նշենք, որ վրացիների ղեկավար ուժը սոցիալ-դեմոկրատ մենշևիկներն էին, հայության ղեկավար ուժը՝ Դաշնակցությունը, թաթարներինը՝ մուսավաթական կուսակցությունը: Իսկ երկրամասի արդյունաբերական, նավթային կենտրոն Բաքվում Ս. Շահումյանի գլխավորությամբ ստեղծվեց խորհրդային իշխանություն:

Երկրամասում եռում էր ներքաղաքական պայքարը իշխանության համար, թափ էին հավաքում նաև ազգամիջյան բախումները, թուրք և գերմանացի գործակալների ուղղորդմամբ՝ մուսուլմանների խռովությունները:

Դաշնակցությունը և նրա գլխավորած հայկական ազգային կառույցները (Հայոց ազգային բյուրո, ապա՝ Հայոց ազգային խորհուրդ, Արևմտահայ ազգային խորհուրդ, Հայաստանի ապահովության խորհուրդ, Հայ զինվորական խորհուրդ) դեռ նախորդ տարիներից ձեռնարկել էին հայկական կանոնավոր զորքի կազմավորման գործը:

1918 թ. մարտի սկզբին հայոց զորքը Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում փոխարինել էր ռուսական զորքին և պատկառելի ուժ էր ներկայացնում. միայն մարտական ուժը կազմում էր 40-42 հազար զինվոր: Մինչ այդ ստեղծված արևելահայ և արևմտահայ զորամիավորումների միացումով ձևավորվեց Առանձին հայկական կորպուսը, որը հաստիքային լրիվ համալրման շարունակվող գործընթացի արդյունքում ունենալու էր 64 հազար զինվոր:

Աստիճանաբար ամրապնդվող հայոց բանակի նպատակն էր ապահովել Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվելիք անկախ Հայաստան պետության անվտանգությունը: Սակայն համաշխարհային կռիվը դեռ ավարտված չէր, և Հայաստանի ապագայի հարցը լուծելու էր պատերազմի արդյունքներն ամփոփելու համար հրավիրվելիք վեհաժողովը: Դա պարզ էր բոլորին, նույնիսկ մեր թշնամիներին: Ահա թե ինչու մեզ պետք էր սեփական բանակ ունենալ, պետք էր համախմբել համահայկական կարողականությունը, որպեսզի չկրկնվեր Խրիմյան Հայրիկի տխուր պատմությունը:

Նորից ենք ուզում շեշտել, որ մեր համազգային տեսլականը համաշխարհային կռվի թոհուբոհում միայն մեր ուժերով հնարավոր չէր իրականություն դարձնել. տերությունների վեհաժողովը պետք է վճիռ տար: Սակայն անկախության ձեռքբերման և պահպանման համար հարկավոր էր հիմնավորապես նախապատրաստվել, մի գործ, որը կազմակերպված և հետևողականորեն անում էին օրվա ղեկավար ազգային ուժերն ու կառույցները: Այդ ժամանակաշրջանում մեր քաղաքական և դիվանագիտական մտածելակերպն ու գործելակերպը անցում կատարեցին խնդրագիր-աղերսանքների, հեռագրա-նամակային սին մակարդակից սեփական զորքին և միասնական ռազմաքաղաքական կամքին ապավինելու մակարդակ: Այս մակարդակի ուժականացումն ու ամրապնդումը առաջնային խնդիր է նաև հիմա՝ մեր ազգային, պետական և պատմական իրավունքներն ու շահերը պաշտպանելու, առաջ տանելու համար:

Հայոց նորակազմ բանակին 1918 թ. գարնանը չհաջողվեց միայնակ, առանց վրացիների և թաթարների ռազմական աջակցության պահել

Կովկասյան ճակատի հայկական հատվածի բնագծերը: Կովկասյան ճակատի թուրքական զորքը, որ ուժեղացվել էր Միջագետքի ճակատից բերված դիվիզիաներով, բայց և այնպես քիչ էր գերազանցում հայոց զորքին, հասավ 1914 թ. ռուս-թուրքական պետական սահմանին և ամենևին մտադիր չէր կանգ առնել:

Թուրքական կողմի առաջարկով Տրապիզոնում տեղի ունեցած բանակցությունները ձախողվեցին, որովհետև Անդրկովկասի կառավարությունը չհամաձայնեց Բրեստի պայմաններին: Թուրքերի ախորժակն էլ օր օրի բացվում էր. հստակ ուրվագծվել էր համաթուրքական ծրագրի իրականացման հնարավորություն: Ո՞վ էր տուժելու դրանից. իհարկե առաջին հերթին հայերս, որ որպես սեպ խրվել էինք նրանց կոկորդը, տուժելու էին նաև վրացիները, իսկ շահելու էին թուրքերի կրտսեր եղբայր Անդրկովկասի թուրք-թաթարները:

Տրապիզոնում Բրեստի պայմաններից պատվաբեր հաշտություն կնքել չհաջողվեց, և պետք է գովել Անդրկովկասյան սեյմին: Նա քաջություն ունեցավ պատերազմ հայտարարելու թուրքերին, որովհետև վերջիններս անցել էին 1914 թ. պետական սահմանը: Վրացիների առաջնահերթ մտահոգությունը Բաթումը պահելն էր: Նրանք այդ ուղղությամբ ունեին 10 հազար զորք, բայց առանց դիմադրության 1918 թ. ապրիլի 1-ին թուրքերը գրավեցին իրենց համար ռազմավարական նշանակություն ունեցող քաղաք-նավահանգիստը:

Հենց այս պահից պատերազմը թուրք-անդրկովկասյանից իրականում դարձավ հայ-թուրքական, չնայած իրավական առումով Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում մինչև հունիսի 4-ը՝ մինչև այս ռազմաբեմի պաշտոնապես փակվելը, պատերազմը թուրք-անդրկովկասյան էր:

Օսմանյան կառավարությունն ի սկզբանե պահանջում էր և հասավ իր նպատակին: Անդրկովկասը ապրիլի 9-ին անկախ հռչակվեց Ռուսաստանից, և երկրամասում ստեղծվեց նոր պետություն՝ Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը: Թուրքերի պահանջը, կարելի է ասել, տեղին էր: Հաշտություն կնքելու համար պետք էր Անդրկովկասը պետություն հռչակել, այլապես Օսմանյան կայսրությունը հո պայմանագիր չէր ստորագրելու Ռուսաստանի ինչ-որ չինքնորոշված երկրամասի հետ: Այդ պահանջի կատարմամբ Թուրքիան կարողանում էր նաև հակադարձել բոլշևիկների առարկություններին:

Նոր ռազմաքաղաքական իրավիճակում մուսավաթականները սկսեցին գաղտնի և բացահայտ աջակցել թուրքերին և պահանջում էին արագ հաշտություն կնքել: Դաշնակցությունը համաձայնեց երկրամասի անկախացմանը, որովհետև հայությունը միայնակ էր մնալու թուրքերի դեմ պատերազմում: Իսկ վրացի մենշևիկներն սկսեցին հովանավոր փնտրել ու միաժամանակ հայերի հաշվին զիջումներ անել թուրքերին: Նման գործելակերպի գլխավոր դերակատարը Չխենկելին էր, ով դարձավ նորակազմ պետության վարչապետ: Նրա պահանջով և ինքնագլուխ որոշմամբ հայոց զորքը հարկադրվեց Կարսը՝ հայոց հինավուրց մայրաքաղաքներից մեկը, առանց կռվի հանձնել թշնամուն: Ապա պատերազմող կողմերի միջև համաձայնություն կայացվեց վերսկսելու հաշտության բանակցությունները, այս անգամ՝ Բաթումում:

Նոր բանակցություններն ընթացան մայիսի 11-ից մինչև հունիսի 4-ը: Թուրքական կողմը մերժեց Բրեստի պայմաններով հաշտություն կնքել Անդրդաշնության հետ, քանի որ Տրապիզոնից հետո պատերազմը շարունակվել էր երկու կողմերի միջև, իրենք էլ տիրացել էին Բրեստով իրենց հասանելիք տարածքից ավելի մեծ տարածքի: Օսմանյան տերության պատվիրակությունը մայիսի 14-ին ներկայացրեց նոր, զավթողական պայմաններ: Մասնավորապես թշնամին պահանջում էր Ախալցխայի, Ախալքալաքի և Սուրմալուի գավառները, Ալեքսանդրապոլ – Ջուլֆա երկաթուղին, և հայոց զորքն ու բնակչությունը հետ քաշել երկաթուղուց մի քանի կմ հեռու, թույլ տալ Ղարաքիլիսա – Դիլիջան ճանապարհով զորք անցկացնել դեպի Գանձակ: Չսպասելով պատասխանի՝ թուրքական զորքն անցավ հարձակման, գրավեց Ալեքսանդրապոլը և սկսեց առաջանալ Երևանի նահանգի և Ղարաքիլիսա – Ղազախ ուղղությամբ:

Ահա այս օրհասական պահին տեղի ունեցավ հայ ժողովրդի և նրա բանակի ոգեղենացումն ու հզոր հարվածը՝ ուղղված մեզ ոչնչացնել ցանկացող թշնամուն: Ոչ միայն թշնամու, այլև մեր դրացիների ու նաև Թիֆլիսում գտնվող և այնտեղից ազգային հարցերը կարգավորող մեր քաղաքական կառույցների համար անհավատալի էր, որ հայոց զորքը կանոնավոր պատերազմի դաշտում կարող է հաղթել թուրքական բանակին:

Անդրդաշնության պատվիրակության համար թուրքական կողմի այդ պահանջներն անընդունելի էին, և ընթանում էր կուլիսային ու անդրկուլիսյան բանակցությունների և պայքարի ծանր շրջան: Երկրամասի պետական և ռազմաքաղաքական ուժերի՝ հաղթանակի հանդեպ հավատի պակասն էր, որ խանգարեց բեկում մտցնել բանակցությունների ընթացքի մեջ: Նույնիսկ Անդրդաշնության պատվիրակության հայ անդամները ուշացումով, որոշ դեպքերում էլ հենց թուրք պատվիրակներից էին իմանում մեր բանակի հաջողությունների մասին: Ոչ միայն հավատ ու միակամություն չստեղծվեց հայերի, վրացիների ու թաթարների միջև, այլև այնքան սրվեցին նրանց միջև հակասությունները, որ համագործակցելու և դաշնային նույն պետության մեջ մնալու հնար այլևս չկար:

Վրացիների կողմից ի դեմս Գերմանիայի հզոր հովանավոր ձեռք բերելուց հետո մենշևիկների նախաձեռնությամբ և թաթարների աջակցությամբ մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասի դաշնային պետությունը: Այն տրոհվեց երեք՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների: Հարկ է նշել, որ անդրկուլիսյան բանակցություններում

նույնիսկ նախատեսվել էր, որ եթե Օսմանյան կայսրության կառավարիչներ՝ հայերի ցեղասպան Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը չհամաձայնեն հայկական անկախ պետության ստեղծմանը, ապա թաթարները և վրացիները հայերին ինքնավարություն կտան հայկական մի երկու գավառում: Ինչպիսի՜ մեծահոգություն մեր հանդեպ…

Անդրդաշնության լուծարման նույն օրը՝ երեկոյան, Բաթումում թուրքական կողմը վերջնագիր ներկայացրեց անդրկովկասյան պատվիրակությանը և տվեց 3 օր՝ պատասխանի համար:

Անդրդաշնության պատվիրակության հայ անդամներ Ալեքսանդր Խատիսյանը և Հովհաննես Քաջազնունին վերադառնում են Թիֆլիս, զեկուցում Հայոց ազգային խորհրդին բանակցությունների ընթացքի մասին և սպասում որոշման՝ թուրքերի վերջնագրին պատասխանելու համար: Բուռն քննարկումներ տեղի ունեցան: Նախ ընդունվեցին Անդրդաշնության լուծարումը, Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումը՝ որպես կատարված փաստ, և որոշվեց տեր կանգնել Անդրկովկասի հայկական գավառներին: Մայիսի 28-ին որոշվեց նաև որպես Հայաստանի պատվիրակներ Բաթում ուղարկել Խատիսյանին, Քաջազնունուն և Միքայել Պապաջանյանին: Հայաստանի անկախության հռչակման մասին բանաձևը հրապարակվեց ավելի ուշ: Սակայն Հայաստանի առաջին հանրապետության ծննդյան օր է ընդունվել Մայիսի 28-ը և ամրագրվել մեր ազգային տոնացույցում: Համայն հայությունը ամեն տարի մեծ շուքով նշում է այն:

Հայերի պատվիրակները մայիսի 29-ին վերադարձան Բաթում և տեղեկացրին թուրքերին, որ ընդունում են վերջնագիրը, սակայն որոշ առաջարկներ ունեն քննարկելու: Որպես արդյունք՝ հայ-թուրքական սահմանի նախնական տարբերակում որոշ փոփոխություն արվեց մեր օգտին՝ 1300 քառ. կմ տարածք: Վրացի պատվիրակներն էլ կարողացան թուրք-վրացական սահմանը մի փոքր շտկել իրենց օգտին:

Շատ հետաքրքիր տեղեկություններ կան Բաթումի բանակցությունների ընթացքի մասին, որոնք այստեղ մանրամասն ներկայացնելու հարկ չկա: Կան մասնակիցների բազմաթիվ հուշեր, արխիվային նյութեր և այլն: Կցանկանայինք երկու դրվագի վրա ուշադրություն հրավիրել, որոնց մասին պատմում է հայկական պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանը: Վրաստանի անկախության հռչակման նախօրեին Բաթում էր եկել Նոյ Ժորդանիան՝ Վրաց ազգային խորհրդի և մենշևիկների կուսակցության նախագահը, որպեսզի վրաց պատվիրակների հետ գաղտնի քննարկի իրենց անկախության հարցը: Խատիսյանը հանդիպում է նրան և նրանից իմանում, որ հայոց զորքը շարունակում է պատերազմել, իսկ թուրքերն առաջանում են: Ժորդանիան ասում է, որ իրենց այլ բան չի մնում, քան հայտարարել Վրաստանի անկախությունը: Խատիսյանի հարցին,

Բաթումի թուրքական պատվիրակությունը. Կենտրոնում նստած՝ Վեհիբ փաշա, կանգնած ձախից՝ Խալիլ փաշա:

թե ինչպես կարող են իրենց լքել, երբ իրենք ընդհանուր պատերազմի մեջ են, Ժորդանիան պատասխանում է. «Մենք չենք կարող խեղդվել ձեզ հետ: Մեր ժողովուրդը ուզում է փրկել այն, ինչ որ կարող է»:

Մյուս դրվագը. բանակցությունների ավարտական փուլում, երբ Խատիսյանը՝ որպես Հայաստանի Հանրապետության պատվիրակ, թուրքական պատվիրակության անդամ, Կովկասյան ճակատի օսմանյան զորքի հրամանատար, Վեհիբ փաշայի հետ քննարկում էր սահմանների հարցը և պնդում էր ընդարձակել հայոց պետության սահմանները, վերջինս մերժելով ասում է նաև հետևյալը. «Գալով տարածքի փոքրության պատճառով թշնամության զգացումներին՝ պետք է ասեմ, որ բոլոր պետություններն էլ քչով են սկսել և աստիճանաբար աճել են»: Մտածելու և հետևություններ անելու հարկ կա ասվածի շուրջ:

Ինչևէ, պատերազմի ավարտը Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում հաստատվեց Բաթումում 1918 թ. հունիսի 4-ին ստորագրված պայմանագրով: Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունները այս նույն հերթականությամբ և ժամերի տարբերությամբ ընդունեցին թուրքերի ներկայացրած պահանջները: Հայաստանի համար տարածքային կորուստները մեծ էին, վրացիները նույնպես կարևոր տարածքներ կորցրին: Շահողն օսմանյան թուրքերն էին և նրանց կրտսեր եղբայր թուրք-թաթարները, որոնք էլ համատեղ ջանքերով ստեղծեցին Ադրբեջան կոչվող պետությունը մեր հարևանությամբ:

Հիմա վերադառնանք Բաթումի պայմանագիրը գնահատելու մեր հարցադրմանը: Շատ է շահարկվում, որ իբր Հայաստանի Հանրապետության տարածքը, ըստ պայմանագրի, 10 հազար քառ. կմ էր, ինչն

ամոթալի էր, նույնիսկ ստրկացուցիչ և այլն:

Այո՛, որպես Կովկասյան ճակատում պարտված կողմի՝ հայերին և վրացիներին պարտադրված պայմանները ծանր էին, հայերինը՝ առավել քան: Սակայն Բաթումի պայմանագրում ամրագրված են եղել հայ-թուրքական և թուրք-վրացական սահմանները, իսկ հայ-վրաց-թաթարական եռակողմ սահմանները պետք է որոշեին երեք նորահռչակ պետությունները փոխադարձ համաձայնագրերով: Հայ-ադրբեջանական սահմանի մասին համաձայնագիրը, ըստ Բաթումի պայմանագրի, պետք է փոխանցվեր օսմանյան կայսերական կառավարությանը:

Առաջ անցնելով ասենք, որ նման համաձայնագիր այդպես էլ չկնքվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև, ավելին՝ հայ-ադրբեջանական սահմանների արդարացի ուղղումները մեր օրերում էլ դեռ շարունակվում են: Իսկ հայ-վրացական սահմաններն էլ հաստատվեցին դժվարին ջանքերով, նույնիսկ երկու բարեկամ ազգերի միջև պատերազմ եղավ:

Այսպիսով՝ ՀՀ սկզբնական տարածքի մասին գործածվող թվերը պաշտոնական և ստույգ չեն: Մեր համոզմամբ՝ իրականում նորահռչակ մեր պետության սկզբնական տարածքն ավելի մեծ էր: Ինչո՞ւ ենք դա ասում. որովհետև հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմաններն այդ պահին ֆիքսված չէին: Դրանք կարելի է որոշել միայն 1918 թ. ամռան սկզբի դրությամբ Առանձին հայկական կորպուսի զբաղեցրած, նրա կողմից պաշտպանվող և Երևանի նահանգի դիկտատոր Արամի իշխանության ներքո եղած տարածքներով: Հայոց կորպուսի որոշ զորամասեր մինչ այդ ստեղծվել էին և կային նաև Շուշիում, Նախիջևանում, Գանձակում, Ղազախում, նույնիսկ Բաքվում: Իսկ Արամ Մանուկյանի կողմից ղեկավարվող Երևանի նահանգի վարչությունը կորպուսի համալրման նպատակով հայերի զորահավաք էր անցկացնում նաև Ելիզավետպոլի նահանգի կազմում գտնվող Զանգեզուրում: Այսինքն՝ Առաջին հանրապետության «դե ֆակտո» տարածքը հունիսի սկզբին մոտ երկու անգամ, եթե ոչ ավելի, մեծ էր: Հայ-թուրքական սահմանի տարանջատումը, զորքերի փոխադարձ հետքաշումը սահմանագծից շարունակվեց մինչև հուլիսի կեսերը, որի ընթացքում եղան նաև զինված ընդհարումներ: Իսկ Առանձին հայկական կորպուսի վերածվելը մեկ դիվիզիայի (այդքան զորք կարող էր պահել Հայաստանը՝ ըստ Բաթումի պայմանագրի), այսինքն՝ հայոց բանակի վերակազմավորումն ու կրճատումը տեղի ունեցավ միայն 1918 թ. օգոստոսին:

Կողմերն այդպես էլ չվավերացրին Բաթումի պայմանագիրը, չնայած նախատեսված էր մեկ ամսվա ընթացքում այն վավերացնել Կ. Պոլսում: Սակայն Հայաստանի և Վրաստանի ջանքերով Թուրքիայի դաշնակիցները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Բուլղարիան, համաձայնեցին վերանայել Բաթումի պայմանագիրը, որովհետև նրանք էլ էին դժգոհ Կովկասում Թուրքիայի դիրքերի չափից ավելի ուժեղացումից: Կ. Պոլսում նախատեսված խորհրդաժողովը այդպես էլ չկայացավ, իսկ Քառյակ միությունը շուտով անձնատուր եղավ Անտանտին, և աշխարհամարտն ավարտվեց Թուրքիայի ու նրա դաշնակիցների լիակատար պարտությամբ: Կարծում եմ՝ ամեն ինչ ակնհայտ է:

Ինչ վերաբերում է Բաթումի պայմանագրի բարոյական ազդեցությանը, ապա դեպքերն այնպես դասավորվեցին, որ առաջինը Հայաստանի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչվեց Թուրքիայի կողմից: Այդպես եղավ նաև Վրաստանի պարագայում, նման բան կարող ենք ասել նաև բոլշևիկյան Ռուսաստանի մասին: Քառյակ միության կազմում Թուրքիան ևս ստորագրել է Բրեստի պայմանագիրը: Ինչ է, այդ փաստից Վրաստանն ու Ռուսաստանը կործանվե՞լ են, թե՞ մենք ենք անհետացել:

Իսկապես, պատվաբեր չէր «Բաթումը», մեծ ջանքերի դեպքում միգուցե հնարավոր էր ավելի շահեկան պայմանների հասնել: Այստեղ բազում գործոններ կան՝ վրացիների, հայերի և թաթարների անմիաբանությունը, հայ պատվիրակների ուշ տեղեկացվածությունը մեր հաղթանակների մասին, նրանց անվստահությունը և հեռու լինելը պատերազմական թոհուբոհից, նրանց կողքին հաղթանակ կերտող ռազմաքաղաքական ղեկավարների բացակայությունը, որոնք կարող էին վստահություն ու հավատ ներշնչել ռազմական առումով և ուժի դրսևորում հանդես բերել և այլն:

Առաջարկում ենք Բաթումի պայմանագիրը նաև այլ տեսանկյունից գնահատել: Հետո ինչ, որ մեր առաջին միջազգային պայմանագիրը կնքել ենք Թուրքիայի հետ: Միգուցե դրա մեջ ինչ-որ ուղենշային խորհուրդ կա... և Թուրքիան առաջինը կստորագրի ու կճանաչի Ազատ և Միացյալ Հայաստանի միջազգային առաջին փաստաթուղթը: Չէ՞ որ Բաթումի պայմանագիրն է հավաստել, որ Հայաստանը Առաջին աշխարհամարտի մասնակից սուբյեկտ է, որովհետև կռվել էր Թուրքիայի դեմ: Հետևաբար նա Անտանտի դաշնակից էր և դրա շնորհիվ լիարժեք իրավունքով մասնակցեց Փարիզի խաղաղության վեհաժողովին ու Սևրի դաշնագրով ամրագրեց իր անժամանցելի իրավունքը՝ վերատիրանալու իր հայրենիքին:

Մեզ տարիներ շարունակ օտարների կամ օտար գաղափարախոսությունների տեղական մոլեռանդ ջատագովների կողմից ներշնչվել, հիմնավորվել և պարտադրվել է թերարժեքության բարդույթ, որը վերաբերում է մեր պատմության բոլոր փուլերին, առավել ևս նորագույն շրջանին: Իսկ այդ բարդույթը փշրելու, սեփական ինքնությունն ու ինքնավստահությունը վերականգնելու և ամրապնդելու առաջին լուրջ քայլը մենք արել ենք 1918 թ. մայիսին: Հաջորդ էական քայլերը կատարվեցին 1988-1994 թթ., հատկապես Արցախյան ազատամարտի ընթացքում: Շարունակությունը եղավ 2016 թ. ապրիլին, դա շարունակվելու է հաստատ ու վստահաբար, և մենք հասնելու ենք մեր համազգային նվիրական ՆՊԱՏԱԿԻ իրագործմանը: Կարևորը՝ մեծ գործի սկիզբը դրված է, և այն դրվել է ամուր հիմքի վրա 1918 թ. մայիսին: ■

Իրադրությունը ՀՀ-ում Մայիսյան հերոսամարտերից հետո. Արամ Մանուկյանը Վարիչների մարմնի նախագահ

Անի Մելքոնյան

1918 թ. մայիսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում հայությունը սեփական ուժերով դիմադրեց իրեն ռազմապես գերազանցող թուրքական բանակին և հաղթանակ տարավ: «Սարդարապատի, Բաշ-Աբարանի և Ղարաքիլիսայի յաղթանակներու դարբնողները,- գրել է «Ազատ խօսք» օրաթերթը,- կը մնան Վասպուրականի ԱՐԱՄԸ՝ իւր պողպատեայ կամքով, ԴՐՕՆ՝ իւր շեշտակի խոյանքով ու սպարապետ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆ և զօր. ՍԻԼԻԿԵԱՆ՝ ռազմավարի հանճարով[1]»:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպմանն Արամ Մանուկյանն ունեցավ առաջնակարգ մասնակցություն, բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Դրանք ոչ միայն վերջինիս փրկեցին բնաջնջումից, այլև հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը՝ ծնունդ տալով Հայաստանի առաջին հանրապետությանը:

Մայիսի 28-ին ձևավորվեց և թուրքերի հետ առանձին բանակցություններ վարելու համար Բաթում ուղարկվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը:

Անկախության մասին հայտարարությունը Ն. Աղբալյանի մշակմամբ հրապարակվեց մայիսի 30-ին:

1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի համար չափազանց ծանր պայմաններով կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը, ինչը դժգոհությունների տեղիք տվեց: Զորքն ու ժողովուրդը պահանջում էին չեղյալ հայտարարել այն, զորքի հրամանատարությունը հանձնել գեներալ Մ. Սիլիկյանին և շարունակել պատերազմը:

Փոթորկահույզ այդ օրերին ժողովրդական զանգվածները դարձյալ հայացքներն ուղղեցին դեպի Արամը: Իսկ նա, որ ամենից քաջատեղյակն էր իրական վիճակին, «որոշ ժամանակ լռություն պահպանելուց, ըստ երևույթին իրադրությունը համակողմանի վերլուծելուց հետո կողմ արտահայտվեց հաշտությանը»[2]: Արամը խոսեց սահմանների, պարենավորման ու մարտունակության իրական պատկերի մասին և նշեց, «որ առկա իրավիճակում Թիֆլիսի Ազգային խորհուրդն այլ ելք չուներ և ստիպված էր հաշտություն կնքել թշնամու հետ»[3]:

Օգտագործելով այս փաստը՝ ոմանք Արամին մեղադրել և այսօր էլ երբեմն մեղադրում են, որ դեմ չգնաց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին և ընդունեց Բաթումի պայմանագիրը: Բայց մեկդարյա հեռավորությունից այսօր կարող ենք միանշանակ արձանագրել, որ թե՛ Արամը, թե՛ Բաթումում և Թիֆլիսում գտնվող հայ գործիչները, պարտադրված հաշտությունից զատ, այլ ելք չունեին: Հետագայում այլ առիթով Խալիլ փաշային Արամի արած մի խոստովանությունից պետք է պարզ դառնար, որ պատերազմը շարունակելու համար երևանյան զորախմբի տրամադրության տակ չնչին քանակությամբ փամփուշտ էր մնացել, և թուրքական

Արամը

ևս մեկ հարձակման դեպքում հայկական կողմի համար իրադարձություններն անկանխատեսելի ընթացք կարող էին ունենալ[4]: Ժողովուրդն այդ մասին չգիտեր: Առանց այն էլ ծանր վիճակում գտնվող ժողովրդի շրջանում խուճապ չառաջացնելու համար Արամը գերադասեց լռել և սպասել լավ օրերի:

Ըստ էության, Արամը շրջահայաց գտնվեց՝ արտահայտվելով Բաթումի պայմանագրի օգտին: Նա քաջ գիտակցում էր, որ շատ առումներով անցանկալի և չափազանց ծանր այդ պայմանագիրը տվյալ ժամանակաշրջանում այն առավելագույնն էր, որին կարելի էր հասնել, հատկապես որ ամենակարևոր խնդիրը՝ հայ ժողովրդի նվազագույն անվտանգությունը և հայոց պետականության ստեղծումը, այլևս կատարված փաստ էր[5]:

Արամի այդ դիրքորոշումն ավելի ընկալելի է դառնում, եթե հաշվի ենք առնում նաև այն հանգամանքը, որ այդ օրերին Հայաստանը գտնվում էր գերծանր կացության մեջ՝ զուրկ արտաքին դաշնակիցներից, լցված գաղթականներով ու սովահար որբերով, դարձած թուրքական հարձակումների մշտական թիրախ:

Ի հավելումն վերը շարադրվածի՝ նաև արձանագրենք, որ փաստացի 1918 թ. հունվարից մինչև հունիսը Կովկասյան ռազմաճակատում թուրքերին դիմադրում էր միայն մեկ ռազմական ուժ՝ հայկականը: Հարևան թաթարները Թուրքիայի դաշնակիցն էին, իսկ վրացիները ստացել էին Գերմանիայի հովանավորությունը: Միայն հայ ժողովուրդն էր, որ առանց արտաքին դաշնակցի ու դրսից ստացված որևէ օգնության կանգնել էր թշնամու գերակշիռ ուժերի դեմ:

Բաթումի պայմանագիրը ստորագրելու պատասխանատվությունը ստանձնած հայ գործիչներին

մեղադրելուց առաջ չպետք է մոռանալ այն փաստը, որ եթե «Չլիներ մեր ժողովրդի միակամ պոռթկումն ընդդեմ թշնամու, չլիներ մայիսյան ճակատամարտերը, չէր լինի նույնիսկ այդ ծանր պայմանագիրը և նրանով ճանաչվող անկախ Հայաստանը:

Մինչ մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի»[6]:

Բաթումի պայմանագրից դժգոհ էր մնացել նաև զորավար Անդրանիկը: Վերջինս որոշել էր հեռանալ նորանկախ Հայաստանի տարածքից և հունիսի 25-ին իր հայկական առանձին հարվածային զորամասով արդեն հասել էր Խոյ[7], թեև թշնամու գերակշիռ ուժերի ճնշման ներքո ստիպված էր նահանջել և մինչև 1919 թ. գարուն հանգրվանել Զանգեզուրում: Հատկապես խորհրդային շրջանում այս փաստն օգտագործվել է Արամին և ՀՀ մյուս ղեկավարներին վարկաբեկելու համար:

ՀՀ տարածքից Անդրանիկի հեռանալը փորձել են կապել նրա դեմ հայ-թուրքական ենթադրյալ համագործակցության հետ: Այդ նպատակով 1965 թ. շրջանառության մեջ է դրվել Թուրքիայի ռազմական նախարար Էնվերին ուղղված և 1918 թ. հունիսի 17-ով թվագրված մի կեղծ հեռագիր, որում ՀՀ ղեկավար գործիչները իբր գրել են, որ Անդրանիկը «մտադիր է ուժեղ բանակ կազմել, ստեղծել սեպարատ պետություն և հարձակվել ձեր վրա: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապես ջախջախելու համար»[8]: Այդ հեռագիրը ստորագրել էին՝ «կառավարության նախագահ՝ Հ. Քաջազնունի», «զինվորական մինիստր՝ Արամ փաշա Մանուկյան» և «կառավարության խորհրդի նախագահ՝ Սահակյան»[9]:

Այն, որ այս «հեռագիրը» ամբողջությամբ կեղծ է, երևում է թե՛ ամսաթվից, թե՛ ստորագրություններից: Ինչպես իրավացիորեն նկատել է Ա. Ասրյանը, 1918 թ. հունիսի 17-ին Արամը, Հ. Քաջազնունին և Ա. Սահակյանը միաժամանակ չեն գտնվել ո՛չ Երևանում, որտեղից իբր թե ուղարկվել է հեռագիրը, և ո՛չ էլ մեկ այլ վայրում: Քաջազնունու կառավարությունը, ինչպես կտեսնենք, Երևան է ժամանել միայն հուլիսի 19-ին[10]: Ակնհայտ կեղծիքի մասին է խոսում նաև այն փաստը, որ Արամի անվան դիմաց գրված է «զինվորական մինիստր»:

Բաթումի բանակցությունների կովկասյան պատվիրակությունը

Մինչդեռ, ինչպես գիտենք, Արամը եղել է ներքին գործերի նախարար, իսկ Ա. Սահակյանն էլ ոչ թե կառավարության խորհրդի, այլ Հայաստանի առաջիկա օրերին բացվելիք խորհրդի նախագահն էր:

Վերը շարադրվածին մնում է հավելել, որ ինքը՝ Անդրանիկը, Հայաստանից իր հեռանալու պատճառների թվում երբեք չի նշել իր դեմ կազմակերպված հայ-թուրքական գործակցությունը: Մասնավորապես այդ մասին որևէ ակնարկ անգամ չկա 1921 թ. հրատարակված «Զօր. Անդրանիկ կը խօսի» գրքույկում, որում նա տարատեսակ մեղադրանքներ է ներկայացրել հանրապետության կառավարությանը և ՀՅԴ-ին: Նման պատճառ չի մատնանշվում նաև Անդրանիկի մերձավորների, կենսագիրների և հուշագիրների կողմից: Ի դեպ, այդպիսի վավերագիր չի պահպանվել նաև ՀՀ արխիվներում (ներառյալ Անդրանիկի ֆոնդը)[11] :

Եվս մեկ նկատառում: Ժամանակակիցների վկայությամբ՝ Արամը տանել չէր կարողանում, երբ իրեն «փաշա» էին կոչում: Ուստի քիչ հավանական է, որ նա որևէ փաստաթղթի տակ դներ «Արամ փաշա» ստորագրությունը: Բացի այդ՝ ՀՀ կառավարության գլխավոր հոգսը հայկական տարածքները թուրքական ներխուժումից զերծ պահելն էր: Հետևաբար, ըստ տրամաբանության, նրա համար թեկուզև իր գոյությունը չճանաչող Անդրանիկի ներկայությունը հայկական որևէ տարածքում, լինի դա Զանգեզուրում, Արցախում կամ Նախիջևանում, ավելի օգտակար կլիներ: Չմոռանանք, որ Անդրանիկը Արամից կամ Քաջազնունուց պակաս հեղինակություն չէր վայելում: Ուստի բնական հարց է ծագում. Հայաստանի կառավարությունը ակնհայտ առճակատման կգնա՞ր արդյոք ժողովրդական հերոսի հետ՝ առանց այդ էլ մահվան ճիրաններում գալարվող երկիրը տանելով եղբայրասպան պատերազմի:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք վերը բերված «հեռագրում» առկա աչքի զարնող սխալներից, այդ փաստաթուղթը կեղծ էր և ընդհանուր ոչինչ չուներ իրականության հետ: Այն ստեղծվել և շրջանառության մեջ է դրվել ակնհայտ նպատակով՝ վարկաբեկել Առաջին հանրապետության ղեկավարներին և ՀՅԴ-ին:

Արամի կառավարությունը երկրում ներքին կայունություն, հանրային համերաշ-խություն ապահովելու և ցնցումներից զերծ մնալու համար հունիսի վերջերին որոշակի վերահսկողություն սահմանեց հրապարակային ելույթների վրա, ինչը դժգոհություն առաջ բերեց: Որոշ շրջանակներ Արամին մեղադրում էին խոսքի ազատությունը սահմանափակելու մեջ: Մասնավորապես սոցիալ-դեմոկրատ մենշևիկ (հետագայում բոլշևիկ) Հայկ Ազատյանը Երևանի և Թիֆլիսի Ազգային խորհուրդներին բողոքում էր, որ ինքը ցանկացել է դասախոսություն կարդալ, բայց տպարանները մերժել են առանց միլիցիայի պետի թույլտվության տպագրել դրա վերաբերյալ ազդագրերը: Հայկ Ազատյանի կարծիքով՝ «դա խօսքի ազատութեան բռնադատումն է, որը պէտք է այսօր և եթ վերացւի»[12]: Հարցի վերաբերյալ իր կարծիքն է հայտնել նաև Արամը՝ շեշտելով, որ «.իրաքանչիւր դասախօս պարտաւոր

է յայտնել միլիցիապետին թէ որտեղ, որ ժամին և ինչի մասին պիտի խօսի»[13]: Կարծում ենք՝ 1918 թ. բախտորոշ օրերին նման հարցադրումը միանգամայն տրամաբանական և օրինական էր:

Հայկական պատվիրակության՝ Բաթումից Թիֆլիս վերադառնալուն պես ձևավորվեց ՀՀ առաջին կառավարությունը՝ Հ. Քաջազնունու վարչապետությամբ: Բայց, ինչպես վկայում է Ա. Աստվածատրյանը, «Մինչև Քաջազնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան Երևան գալը, Երևանում գործում էր Արամի նախագահութեամբ ու գլխավորութեամբ կազմուած կառավարութիւնը՝ Վարիչների մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինել էր Յատուկ Կոմիտէին»[14]:

Ստանձնելով Վարիչների մարմնի նախագահի պաշտոնը՝ Արամը, նկատի ունենալով իր մեծ ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հատկապես սպայական վերնախավի շրջանում դժգոհություններ չառաջացնելու նպատակով հրաժարվում է զինվորական վարիչի պաշտոնից: Նրա այդ առաջարկը սկզբնապես չի ընդունվում, քանի որ ընտրություն կատարողները քաջ գիտակցում էին, «.որ այն պայմաններում ոչ ոք կարող էր փոխարինել նրան և կատարել նրա գործը»[15] :

Այնուհանդերձ, կարճ ժամանակ անց Արամը «Հ.Յ.Դ. Երևանի Կ. Կոմիտէում նորից բարձրացրեց զինուորական վարիչի պաշտօնը զինուորականի յանձնելու հարցը...»[16]: Այդ պաշտոնում Արամի կողմից դիտարկվում էր գեներալ Մ. Սիլիկյանի թեկնածությունը: Վերջինս, իր հերթին շնորհակալաբար հրաժարվելով առաջարկված պաշտոնից և տեղեկանալով Արամի հրաժարվելու պատճառների մասին, ասաց. «Դժգոհողները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն, կը համոզուեն, որ ներկայումս նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչո՞ւ եմ հրաժարուում. որովհետև մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու՝ ոչ մի կարևոր քայլ չեմ առնում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի: Ես ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չթողնի այդ պաշտօնը»[17]:

Հանձն առնելով զինվորական վարիչի պաշտոնը՝ Արամը, Ռուբենի վկայությամբ, «.վարում էր զինուորական գործերը իր յատուկ ձևով, առանց կապուելու ընդհանրապէս ընդունուած զինուորական օրէնքներով և կանոններով»[18] : Առհասարակ գործի հաջողության համար Արամը կառչած չէր մնում ընդունված ձևականություններից և երբեմն կարող էր շրջանցել դրանք: Նրա «.կիրառած ժողովրդական-զինուորական ձևերի շնորհիւ, առանց նիւթական և դրամական միջոցների, մի պատկառելի զինուորական ոյժ էր կազմակերպուած թուրքերի դիմաց, որից կ՚ակնածէին նոքա»[19] :

Այսպիսով, մինչ կառավարության՝ Երևան ժամանելը փաստացի իշխանությունը գտնվում էր Վարիչների մարմնի ձեռքում: Անցումային այդ ժամանակահատվածը և այդ օրերին Արամի դերակատարությունն ահա թե ինչպես է բնութագրում Ռիչարդ Հովհաննիսյանը. «Մինչ այդ Հայաստանն անկախ էր՝ համենայն դեպս անվանապես, մեկ ամբողջ ամիս, սակայն վարչության միակ նմանությունը Երևանի շրջակայքում մնում էր ժողովրդական դիկտատուրան: Այն գլխավորում էին Արամ Մանուկյանը՝ Վանի 1915 թ. ինքնապաշտպանության և Երևանի նահանգի 1918 թ. մայիսի դիմադրության առաջնորդը, և Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ փառաբանված պարտիզանական հրամանատարը: Երկու ղեկավարները, որոնք շատ ժամանակակիցների գնահատմամբ դիտվում էին որպես Հանրապետության իսկական հիմնադիրներ, չազատվեցին իրենց պարտականություններից անգամ Ազգային խորհրդի կողմից Քաջազնունու կառավարության հաստատումից հետո, որովհետև պաշտոնական կառավարությունը դեռևս մնում էր Թիֆլիսում»[20] :

Թե՛ Վարիչների մարմնի և թե՛ անձամբ Արամի գերխնդիրը երկիրը թշնամու ոտնձգություններից պաշտպանելն էր: Ճիշտ է, «Երևանում ձգտում էին հաշտության, բայց կապիտուլյացվելու մտադրություն չունեին»[21]: Մինչդեռ թուրքական ներխուժման վտանգը, գոնե մինչև 1918 թ. նոյեմբերը, դամոկլյան սրի պես կախված էր նորանկախ Հայաստանի գլխին: Այդ պատճառով, ռազմական պատրաստություններին զուգընթաց, Արամը նաև բանակցում էր թուրքերի հետ՝ փորձելով հասնել այն բանին, որ թուրքերը կատարեն Բաթումի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Երբ հունիսի 17-ին Վեհիբ փաշան առաջարկեց մինչև հայ-վրացական սահմանի որոշումը թուրքական զորքեր թողնել Ալեքսանդրապոլ-Սադախլու երկաթգծի ուղղությամբ, Արամը դեմ արտահայտվեց դրան: Նա գտնում էր, որ հարկավոր է թուրքական ուժերը հեռացնել Ղարաքիլիսայի գծից և Վրաստանի հետ սահմանը պահպանել սեփական ուժերով[22]:

Երկիրը ծանր կացության մեջ էր. հարյուր հազարավոր փախստականներ, փլուզված տնտեսություն, սննդամթերքի և նյութական այլ միջոցների բացակայություն: Նման պայմաններում Վարիչների մարմնի առջև ծառացած մյուս դժվարին խնդիրը պարենային ճգնաժամի մեղմումն էր: Այդ նպատակով Ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 9-ին սահմանեց հացի պետական մենաշնորհ և հսկողության տակ վերցրեց հացահատիկի բերքը[23]:

Նյութական խնդիրների ցբացի՝ Վարիչների մարմնի կարևոր խնդիրներից էր նաև երկրում կարգ ու կանոնի հաստատումը: Ա. Աստվածատրյանի վկայությամբ՝ ««Երևանի կառավարութեան» ի վերջո յաջողուեց մաքրել ռազմական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, խռովութիւնների բոյն ծառայող թրքաբնակ վայրերը... և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում»[24]: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, գործադրված գերմարդկային ջանքերով և կատարված տիտանական աշխատանքի գնով «.Արամի գլխավորությամբ գործող Վարիչների մարմինը, մինչև Հ. Քաջազնունու կառավարության գործի անցնելը, կարողացավ ապահովել երկրի տարբեր

ոլորտների կենսագործունեությունը և համեմատական կայունությունը՝ որոշ չափով դյուրացնելով վերջինիս գործը»[25] :

Անդրադառնալով 1918 թ. ամռանը Արամի ծավալած գործունեությանը՝ Վահան Նավասարդյանը հիշում է, որ այդ օրերին արտաքին աշխարհից մեկուսացված, իր անվերջանալի խնդիրներով «Արարատեան փոքրիկ Հայաստանը, Արամի հզօր ու արթուն հսկողութեան տակ, ապրում էր իր անստոյգ ճակատագրի մռայլ օրերը:

Մի բացառիկ երկիր էր այդ, օղակաձև շղթայով շրջապատուած իր չորս կողմերից, զուրկ արտաքին աշխարհի հետ կապուելու, նրան լուր տալու և այնտեղից լուր առնելու գրեթէ բոլոր հնարավորութիւններից»[26]: Այդ մռայլ երկրում ժողովրդի հայացքն ուղղված էր դեպի այն տունը. «ուր օր ու գիշեր տքնում էր Արամը, փրկութեան ելք փնտռելով հայկական ահաւոր դժոխքից»[27] :

Այսպիսով, 1917 թ. դեկտեմբերի վերջերից Արամ Մանուկյանը, ապա 1918 թ. հունվարից նրան միացած Դրոն ու Մ. Սիլիկյանը մի քանի ամսվա ընթացքում կարողացան նախապատրաստել և նվաճել հայ ժողովրդի նորագույն պատմության առաջին հաղթանակները: «Նրանք միասնաբար ստեղծեցին անկախ պետականության շենքը, լռեցրին երկրի ներքին թշնամուն, բարոյալքված զանգվածներից կերտեցին մարտունակ, ազգային ազատագրության գաղափարներով տոգորված ժողովուրդ և մայիսի վերջին պատմության անդունդից դուրս բերեցին ու Արարատի շուքի տակ շունչ հաղորդեցին հայոց պետականությանը»[28] :

Ամփոփելով կարող ենք ասել, որ 1917 թ. դեկտեմբերից, երբ Ազգային խորհրդի կողմից Արամն ուղարկվեց Երևանի նահանգ, մինչև 1918 թ. հուլիսը, ինչպես վկայում է Սարգիս Արարատյանը, «Երևանի շրջանում… ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում, որ լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Սիլիկյանի և զորքին ու ժողովրդին ոգևորող Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը՝ միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին: Եվ եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ, և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող է վերագրվել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»[29] :

Դրօն

Հ. Քաջազնունու կառավարությունը 1918 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսից գնացքով ուղևորվեց և հուլիսի 19-ի ուշ երեկոյան հասավ Երևան: Բայց անգամ կառավարության ժամանումից հետո Արամի դերը երկրում չնվազեց: Քաջազնունու կառավարությունում ստանձնելով ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ Արամ Մանուկյանը մնաց պետության առանցքային դեմքը՝ շարունակելով իր պետականաստեղծ գործունեությունը:

Ծանոթագրություններ

1- «Ազատ խօսք» օրաթերթ, հունիս 1936 (բացառիկ հրատարակություն), էջ 4:
2- Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործունեությունը, Եր., 2008,էջ 202-203:
3- Նույն տեղում, էջ 203:
4- Տես Շահխաթունի Ա. <<Արամը, մահուան յիսնամեակին առթիւ>>, Եր., 1991, էջ 506:
5- Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյանը որպես հայ ազգային-պետական գործչի մարմնավորում,// «Վէմ» համահայկական հանդես, թիվ 4, Եր., 2018, էջ 47-58:
6- Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 204:
7- Տես նույն տեղում, էջ 201:
8- Նույն տեղում:
9- Նույն տեղում:
10- Տես նույն տեղում, էջ 201-202:
11- Տես նույն տեղում:
12- Տես նույնտեղում, էջ 217:
13- Տես նույն տեղում:
14- Աստուածատուրեան Ա., Արամը Երևանում,// Արամը, մահուան յիսնամեակին առթիւ,էջ 124-125:
15- Նույն տեղում, էջ 125:
16- Նույն տեղում:
17- Նույն տեղում:
18- Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, էջ 330:
19- Նույն տեղում, էջ 331:
20- Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետությունի. I, Եր., 2005, էջ 42-43:
21- Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 212:
22- Տես նույն տեղում, էջ 213:
23- Տես նույն տեղում, էջ 217:
24 Աստվածատուրեան Ա. Արամը Երևանում.,// Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, էջ 136:
25- Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010,էջ 101:
26- Նաւասարդեան Վ., Արամի կեանքից, // Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, էջ 487:
27- Տես նույն տեղում:
28- https://old.arfd.am/?p=21143
29- Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000էջ 34:

Օգտագործված աղբյուրների եւգրականության ցանկ

1. Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991, 549 էջ:
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008, 267 էջ:
3. Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010, 119 էջ:
4. Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Եր., 2005, 570 էջ:
5. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, 363 էջ:

Մամուլ

1.«Ազատ խօսք» օրաթերթ, Սոֆիա, մայիս 1936, N 24, յունիս 1936 (բացառիկ հրատարակութիւն):
2. Վէմ համահայկական հանդես թիվ 4., Եր., 2018

Համացանցային նյութեր

1. https://old.arfd.am/?p=21143

«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս վէրջին)

Աւօ Գաթրճեան

Վեցերորդ ժամանակաշրջանի սկիզբ

Ինը տարիներու զգալի բացակայութենէ յետոյ վերստին կը հրատարակուի ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ «Դրօշակ»ը: 2020 թուականի յունուարին առաջին թիւը (1635րդ) արդէն հասանելի է ընթերցողներուն: Կեանքի 74րդ տարին բոլորող պաշտօնաթերթը կը հրատարակուի ելեկտրոնային տարբերակով, ամսաթերթի պարբերականութեամբ:

Իբրև պաշտօնաթերթի հիմնադիր, զուտ իրաւաբանական տեսանկիւնէ և ՀՀ օրէնքներուն համաձայն, նշուած է «ՀՅԴ պատմութեան թանգարան-հիմնադրամի» անունը: Ելեկտրոնային ամսաթերթի խմբագիրը նորանկախ Հայաստանի գաղափարական ուղղուածութեան մամուլի երախտաւորներէն, ՀՅԴ Բիւրոյի մամուլի դիւանի ներկայացուցիչ Արտաշէս Շահպազեանն է: Կայ խմբագրական խորհուրդ, սակայն անդամներուն անունները չեն նշուած:

Ելեկտրոնային անդրանիկ համարին մէջ առանձնացուած են շարք մը բաժիններ՝ «Հարցազրոյց» (ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի հետ), «Սոցիալական», «Դաշնակցական բեմ», «Հայրենի եզերք», «Տարածաշրջանային»,«Սփիւռք»,«Երիտասարդական», «Պատմութեան լուսարձակ», «Դէմքեր և դէպքեր», որոնց մէջ ներառուած են ՀՅԴ դերակատարութեան ու ընելիքներուն, գաղափարախօսական, ՀՀ ընկերային-տնտեսական հարցերուն, Արցախին, Ջաւախքին, Այսրկովկասեան, Մերձաւոր և Միջինարևելեան եռացող հիմնահարցերուն, Սփիւռքին, Արևմտահայաստանին և համազգային նշանակութեան այլևայլ խնդիրներուն առնչուող շարք մը ծանրակշիռ և գիտահանրամատչելի աշխատանքներ:

Խմբագիր Արտաշէս Շահպազեան, «Խմբագրականի փոխարէն» ենթագլուխի տակ «Առաջնորդող» վերնագրով կը գրէ հետևեալը. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» վերսկսում է «Դրօշակ» պաշտօնաթերթի հրատարակութիւնը: «Դրօշակ»ի կենսագրութիւնը ձուլուած է ծնող կուսակցութեան անցած ճանապարհին այնքան, որ այս երկուսից մէկին անդրադառնալիս յաճախ յիշում ենք միւսին: Սխալուած չենք լինի պատկերաւոր ներկայացնելով, որ «Դրօշակ»ը եղել է կուսակցութեան մաքառումի ու հերոսացման ուղին արտացոլող հայելին»:

Այնուհետև կը շարունակէ՝ ըսելով. «Խօսքի առատութեան մեր ժամանակներում «Դրօշակ»ը կրկին հրապարակ է իջնում որոշակի բաց տեղ զբաղեցնելու համար»:

Առաջնորդող յօդուածը իր աւարտին կը հասնի. ««Դրօշակ»ը, իր ջուրը խմելով սեփական ակունքներից և այլոց փորձառութիւնը նկատի ունենալով, կը

ջանայ յստակեցնել խնդիրներն ու փնտռել դրանց պատասխանները:

Թերևս առայժմ այսքանը, որպէսզի յաւակնութիւնները մեզանից առաջ չընկնեն: Թող որ մեր գործը խօսի մեր փոխարէն»:

«Դրօշակ»ի այս ժամանակաշրջանի առաջին թիւէն արդէն կը շեշտուի, որ խմբագիրն ու խմբագրական խորհուրդը տեղ տուած են համակուսակցական և համահայկական մտաւորականութեան: Այդ պատճառով հոն գրութիւններ ունին տարբեր շրջաններու դաշնակցական մամուլի խմբագիրներ և գրողներ:

Արդարև, 1891էն 2020ի միջև ինկած ժամանակաշրջանին «Դրօշակ»ի հաւաքածոն կը ներկայացնէ ինքնաբերաբար կուսակցութեան պատմութիւնը: Դաշնակցականներ իրենք կը պատգամեն:

Դաշնակցութիւնը ինքզինք կը պատմագրէ, և ընթերցողը պատմական տուեալներու թէ անմման հերոսներու մտածողութեան հաղորդ կը դառնայ ազգային անկորնչելի ժառանգութեան մը սեփականատիրոջ զգացումով:

«Դրօշակ» շուրջ 130ամեայ երթով լուսարձակի տակ առած է տարբեր տեսակի նիւթեր՝ Դաշնակցութեան գերագոյն ժողովներուն և անոնց յարակից գործունէութեան վերաբերող պատկառելի թիւով լրագրութիւններ, Ընդհանուր ժողովներու հաղորդագրութիւններ, կուսակցական շրջաններու տեղեկութիւններ, Շրջանային թէ Ռայոնական ժողովներու տեղեկանքներ, դիւանական այլազան թուղթեր, Ընդհանուր ժողովներու և Բիւրոներու կարևոր որոշումներ, զանազան նամակներ, նուիրատուութիւններ և այլն:

Այլուր ուշագրաւ տեղեկութիւններ կարելի է գտնել Հայաստանի, Արցախի, Ջաւախքի, Նախիջևանի և հայկական գաղթավայրերու ներքին կեանքի մասին, Հայ դատի, ինչպէս նաև ՀՅԴ զանազան շրջաններու կառոյցներուն մասին, անշուշտ, միշտ հարստացած տեղւոյն հայ կեանքի գլխաւոր երևոյթներուն օգտակար արժևորումներով: Հոն լայնօրէն լուսաբանուած են Թուրքիոյ և Ատրպէյճանի ներքին կեանքն ու արտաքին քաղաքականութիւնը, լուսարձակի տակ առնուած են անոնց հակահայ քարոզչութիւնը, խեղաթիւրումներն ու ապատեղեկատուութիւնը:

«Դրօշակ»ի նիւթերը մերթ ընդ մերթ մեզի կը ներկայանան իբրև տեսակ մը աշխարհագրութեան և հայոց պատմութեան դասեր՝ յեղափոխական դէմքերու կենսագրականներ, մարտական-յեղափոխական հերոսապատումներ, որոնք իրենց հետ կ՚առնեն կը տանին ընթերցողը դէպի հայրենի գիւղեր, գաւառներ կամ հայաշխարհի սփիւռքեան ոստաններ, և այնտեղ այդ բարբառուն վկայարաններուն և անոնց հերոսներուն հետ ընթերցողը կ՚ունենայ հոգեխոռով և դաստիարակիչ զրոյցներ, որոնք մարդուս մէջ կ՚արթնցնեն ազգային հպարտութեան զգացում, նահատակութեամբ հայրենիք կերտելու, Դատ պաշտպանելու և վճռականութեամբ գաղափարաբանութեան մը վեհութիւնը ապրելու պատրաստակամութիւն:

Տակաւին, առանց մոռնալու, թանկարժէք նշխարներու ձևով, Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Ջաւարեանի, Ռոստոմի, Յոնան Դաւթեանի, Արմէն Գարոյի, Դժոխք Հրայրի, Պետոյի և առաջին սերունդի այլ դաշնակցականներու յօդուածներու ու թղթակցութիւններու բաժինը, ուր յատիշտակութեամբ կը կարդացուին անոնց գրութիւնները:

Յաջորդական թիւերուն մէջ՝ ընդհանուր մեծ վերնագրի տակ, որքան ալ կուսակցութեան պատմութիւնն է, որ կը վաւերագրուի, բայց խորքին մէջ Հայոց պատմութիւնն է, որ կը ներկայացուի մե՛րթ աշխարհագրութեամբ, մե՛րթ յաջորդական դրուագներով ու դէպքերով, և անոնց ընդմէջէն հերոսներու, նոյնքան՝ տեղանուններու և անձնանուններու, այլ ժամանակաշրջանի մէջ կը հանդիպինք գիտական լուրջ աշխատանքներու:

«Դրօշակ»ի ամբողջութիւնը մեծարժէք է իր պարունակութեամբ և բովանդակութեամբ: Բոլոր անոնք, որոնք կը փափաքին հայկական յեղափոխութեան շունչը զգալ, մօտէ՛ն քննել հարցերու մօտեցման եղանակը, մղիչ ապրումներն ու մտածումները անոնց, որոնք նոր կերպարանք տուին հայոց պատմութեան:

Ուսումնասիրական այս համեստ աշխատութեան մէջ «Դրօշակ»ի մասին, որպէս վերջաբան, կ՚արժէ հիմնաւորել քանի մը կէտեր.

1. Իւրաքանչիւր վերահրատարակութեան ժամանակաշրջան կարելի է ճշդորոշել հետևեալ ուղղուածութեամբ.

Առաջին ժամանակաշրջանը. «Դրօշակ»ի էջերուն մէջ կ՚արտացոլայ հարազատ հողի վրայ ըլլալու և յեղափոխութեամբ ազատագրական զինեալ պայքարի զարթօնքի ժամանակաշրջան կերտելու հզօր գործօնի հանգամանքը, ինչպէս նաև տեղի ունեցած հայդուկային կռիւներու դաշտէն պատերազմական լրագրութիւն կատարելու իրողութիւնը:

Երկրորդ ժամանակաշրջանը. Դաշնակցութեան Օրուան յիշատակման սկիզբ, Հայաստանը խորհրդայնացուած, ՀՅ Դաշնակցութիւնը Երկրէն տարագրուած, Դաշնակցութիւնը համայնավարութեան թիրախ դառնալուն առնչուած նիւթերու արծարծում, անշուշտ, կուսակցական կեանքին ու գաղափարաբանական նիւթերուն զուգահեռ:

Երրորդ ժամանակաշրջանը. Հայոց ցեղասպանութենէն ետք Սփիւռքի կազմաւորուածութիւնը, Հայ դատի՝ նոր փուլ մտնելը և անոր առնչուող 1975-1985 տարիներու զինեալ պայքարի ժամանակաշրջանը, ազգային մշակոյթի և լեզուի կարևորութիւնը սփիւռքեան պայմաններու մէջ, Խորհրդային Միութեան թշնամանքի և այլախոհական շարժումներն են, որ լուսարձակի տակ կ՚առնուին:

Չորրորդ ժամանակաշրջանը. Խորհրդային Միութեան փլուզում, Հայաստանի Հանրապետութեան վերանկախացում, Արցախի ազատագրական պայքար, Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) վերաբերմունքը ՀՅԴի հանդէպ, Հայաստանի Հանրապետութեան օրուան իշխանութիւններու կողմէ (ՀՀՇ)՝ հանրապետութեան տարածքին Դաշնակցութեան գործունէութեան կասեցումն ու դաշնակցականներու հետապնդումն ու բանտարկութիւնը, Ատրպէյճանի և յատկապէս Թուրքիոյ ճնշումով միջազգային ընտանիքի կողմէ կիզակէտ հանդիսացող ԼՂՀ հիմնախնդիրը, Հայ դատի գործընթացի վերադասաւորում:

Հինգերորդ ժամանակաշրջանը. թէև քանի մը տարի անցած է միայն, սակայն «Դրօշակ»ի էջերուն մէջ կ՚արտացոլան գաղափարաբանութեան, ընկերվարութեան և Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն գործելաոճը, Հայաստանի նախագահութեան թեկնածու դաշնակցականներու հիմնաւորումները: Միւս կողմէ՝ նոր փուլի մը սկիզբ՝ տեղեկատուական պատերազմ, պատմական ու քաղաքական խեղաթիւրումներ և ապատեղեկատուութեան տարածման շուրջ գիտական յօդուածներ, և տակաւին կը շարունակուի այս ժամանակաշրջանը՝ իր հետ բերելով բնականաբար նոր ուղղութիւններ:

2. «Դրօշակ»ի հիմնական նպատակն ու առաքելութիւնը սկիզբէն ի վեր եղած է ու կը մնայ հայ ժողովրդին և դաշնակցական շարքերուն կուսակցութեան գաղափարական և սկզբունքային տեսական նիւթեր հայթայթել, որուն ճամբով կը փորձուի ընդհանրապէս բարձրացնել հայ ժողովուրդին քաղաքական գիտակցութեան մակարդակը:

3. ՀՅ Դաշնակցութեան ոչ պարբերական

հրատարակութիւններու շարքը ծնունդ առած է յեղափոխական-ընկերվարական հրատարակութիւններու «Դրօշակ» մատենաշարով, որուն առաջին գրքոյկը՝ «Ապստամբական ոգի», լոյս տեսած է 1894ին: Այնուհետև յաջորդաբար հրատարակուած են հարիւրաւոր գիրքեր, անոնց մէջ նաև՝ օտար լեզուով:

4. «Դրօշակ»ի մէջ լոյս տեսած ուսումնասիրութիւններէն շատերը հետագային հրատարակուած են առանձին հատորներով (ոչ «Դրօշակ» մատենաշարի անունով):

5. Իւրաքանչիւր ժամանակաշրջան մօտաւոր կերպով համապատասխանած է համաշխարհային, ազգային և կուսակցական տարաբնոյթ վերիվայրումներու և փոփոխութիւններու ժամանակաշրջաններուն:

«Դրօշակ» տարիներու ընթացքին, թէև գոյատևած է կարգ մը ընդհատումներով, վերանուանումներով, խմբագիրներու և խմբագրակազմերու փոփոխութիւններով, տեսքով, ձևաչափով, սակայն մի՛շտ ալ յատկանշուած է գաղափարականութեամբ և սկզբունքայնութեան անկոտրում կեցուածքով: Դաշնակցութեան պատմութեան մէջ իւրաքանչիւր ժամանակաշրջանի և մարտահրաւէրի համար անկասկած յայտնուած են զայն դիմագրաւելու ատակ մարդիկ: Բարեբախտաբար, պարբերականը բոլոր առումներով պահպանած է իր ինքնութիւնը և միշտ նորոգուելով՝ բերած է նոր շունչ և ուժ՝ մի՛շտ անշեղ խորքով, ուղղած ու ցուցմունքներ տուած է այն մարտահրաւէրներու շուրջ, որոնք ցցուած են հայ ժողովուրդին դիմաց: Այստեղ կը շեշտադրուի, որ դաշնակցական պաշտօնաթերթի ըմբռնումն ու ուղղուածութիւնը իր իսկ հանգամանքէն բխող պարտաւորութիւններու դիմաց կը դնեն զինք:

«Դրօշակ»ի մօտաւորապէս 130ամեայ ճանապարհորդութիւնը դիւրին չէ եղած երբեք. զինեալ ազատագրական պայքար, հերոսամարտեր, Հայոց ցեղասպանութիւն, գաղթ, շրջանային տագնապներ, Հայաստանի Հանրապետութեան կերտում, ազգային վերիվայրումներ, ազգային ինքնութեան պահպանութեան մարտահրաւէրներ, Արցախի Հանրապետութեան կերտում, տնտեսական թէ մարդուժի դժուարութիւններ և այլն: Այդ բոլորը մաս կազմած են պաշտօնաթերթին տարեգրութեան. «Դրօշակ» անցած է այդ բոլորին բովէն և, բնականաբար, ազդուած այդ բոլորէն:

Միւս կողմէ, կուսակցական պաշտօնաթերթ ըլլալու հանգամանքը չէ խանգարած, որ «Դրօշակ»ը դառնայ նաև հասարակական լայն զանգուածներու կողմէ փնտռուած և համակրանք վայելող թերթ մը: Անոր ազգային ուղղութիւնը եղած է առողջ, ազգային բոլոր տեսակի հիմնահարցերը ներկայացուցած, գաղափարական և քաղաքական սնունդ սերմանած է, ինչպէս նաև կուսակցական մամուլին շուրջ գաղափարա-քաղաքական բեմահարթակը հանդիսանալով՝ իրազեկ դարձուցած է բոլոր այն հայորդիները, որոնք մտահոգուած են ազգին Դատով:

«Դրօշակ»ին շուրջ համախմբուած իւրաքանչիւր կուսակցական շարքային կամ անհատ համակիր իր գաղափարապաշտութեամբ թէ տեսլականով, միտքով թէ գրիչով, աշխատակցութեամբ թէ քսակով կերտած է այս թերթին հարուստ պատմութիւնը:

Ինչպէս որ 1891-2020 թուականներուն «Դրօշակ»ի դէմ ցցուող ամէն տեսակի մարտահրաւէրները յաղթահարուած են, այսօր ևս դիմագրաւելու հաստատակամութիւնը շեշտուած է կրկնակիօրէն: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է կարելին և անկարելին ընել՝ թերթը ժամանակակից տեղեկատուական նոր արհեստագիտութեան և համացանցային դարու պահանջներուն պատշաճեցնելու համար:

Այսօր արհեստագիտութեան ժամանակն է: Նոր ժամանակներուն յարմարելու համար խիստ կարևոր է օգտագործել ընձեռուած բոլոր կարելիութիւնները:

Օգտուելով արհեստագիտութեան բարիքներէն՝ «Դրօշակ» 130ամեակի սեմին իր ելեկտրոնային տարբերակով ու կայքով մուտք կը գործէ հայկական կեդրոններ, հայորդիի տուն թէ գրասենեակ՝ հայ ազգային, գաղափարական, քաղաքական, ազատագրական պայքարի միտքն ու լուրը հասցնելու անոնց:

Պէտք է գուրգուրալ «Դրօշակ»ին վրայ, բեմահարթակներու վրայ զայն յիշատակելը բաւարար չէ, այլ մտաւորական և նիւթաբարոյական գերզօրակցութիւնը, ամուր պահպանելը, որպէսզի մնայ միշտ իր բարձունքին վրայ, որուն արժանի է: Պէտք է ընթերցողի լայն զանգուած պատրաստել ու տարածել նաև:

Միւս կողմէ, մեծ նուիրագործում է գաղափարապաշտ մտաւորական փաղանգի մէկտեղումն ու անոր նուիրական ծառայութիւնը, որպէսզի նոյն այդ շրջանակը նոյն յանձնառու ոգիով շարունակէ ապահովել թերթին յաղթական ընթացքը, անոր ուղեգիծը և ազգանուէր առաքելութիւնը: Այս տեսիլքով և վճռականութեամբ է, որ անհրաժեշտ է միասին քալել դէպի աւելի ևս փայլուն ապագայ:

Գաղափարական միտքի արծարծումն ու զարգացումը կը համարուի գլխաւորը, որ պէտք է արտացոլայ «Դրօշակ»ի էջերուն մէջ: Ան կը դաստիարակէ մեզ և ուրեմն կը մնայ, կը գոյատևէ նոյնքան ուժական, նոյնքան կենդանի, քանի ան կը ներկայացնէ շատ պարզ, շատ էական և յաւերժական իմաստասիրութիւնը հայկական յեղափոխութեան:

Այստեղ, «Դրօշակ»ի վեցերորդ ժամանակաշրջանի առաջին թիւին լոյսընծայման առիթով և հիմնադրութեան 130ամեակի սեմին կանգնած, պարտաւոր ենք գնահատելու նախ բոլոր խմբագիրներն ու խմբագրական կազմերը անխտիր, քանի որ այս յաջողութեան իսկական բանալին անոնք են, ապա՝ այն բոլոր նուիրեալները, որոնք գաղափարի սիրոյն ծաւալեցին գաղափարական միտքը և իրենց գրիչը շարժեցին դժուարին պայմաններու մէջ:

Վերջապէս, «Դրօշակ»ը ՀՅԴ գաղափարաբանութեան դրօշակն է, որ միշտ պէտք է ծածանի մամուլի ընտանիքին մէջ և տարբեր բեմահարթակներու վրայ, և կարելի չէ վար առնել, կանգ առնել կամ անգամ մը ևս դադրիլ, ինչ ալ ըլլան անոր պայմանները, քանի որ պաշտօնաթերթ «Դրօշակ»ն ալ կը համարուի կուսակցութեան խորհրդանիշներէն մէկը:

«Դրօշակ»ի լոյսընծայումը խիստ կարևոր ու հպարտալի երևոյթ է: Արդար է մեր ուրախութիւնը, և տեղին է մեր հպարտութիւնը: Քանի որ «Դրօշակ»ը իր 130 տարիներու ընթացքին եղած է ՀՅ Դաշնակցութեան վաւերագիրը՝ գրաւոր յուշարձանը:

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (Դաշնակցութիւնը ՀՀ կառավարութեան մասնակից)

Մկրտիչ Մկրտիչեան

Հայ-թրքական փրոթոքոլներու նախնական ստորագրութեան պատճառով կառավարութենէն իր հրաժարումէն ետք Դաշնակցութիւնը դեր ունեցաւ ընդդիմադիր ուժերու համախմբումի մը՝ քառեակի (ԲՀԿ, Ժառանգութիւն, ՀԱԿ և ՀՅԴ) կազմաւորման մէջ: Գաղափարական ու քաղաքական նպատակներու հասարակաց գետին չունեցող այս կուսակցութիւններու համախմբումի անդամները, բնական է, իրարու կապուած էին համեմատաբար դիւրաբեկ թելերով. անոնք պարտաւոր էին իրենց որոշումներուն յանգել միաձայնութեամբ, ինչ որ կը սահմանափակէր անոնց գործունէութեան դաշտը:

Դաշնակցութեան համար Հայաստանի քաղաքական կեանքի արդիականացումն ու անոր՝ ներկայ ժամանակներու մէջ տեղադրումը կը մնար կուսակցութեան տակաւին չիրականացած գլխաւոր ծրագիրներէն մէկը: Հանրապետութեան վերանկախացման առաջին օրերէն արդէն Դաշնակցութիւնը կը հետապնդէր խորհրդարանական վարչակարգի որդեգրումը՝ իբրև ժողովրդավարութիւնը կարելի դարձնող և զարգացած երկիրներու մէջ գործող լաւագոյն օրինակը, սակայն ընդդիմադիր քառեակի գործընկերները խանդավառ չէին այդպիսի հեռանկարով:

Ահա այս հարցով է, որ իշխանութեան ղեկին գտնուող ՀՀԿի և նախագահ Սերժ Սարգսեանի հետ Դաշնակցութեան կապերը վերստին սերտացան, մանաւանդ որ հայ-թրքական համաձայնագրերու ճակատագիրը արդէն կնքուած կը թուէր ըլլալ. յստակ դարձած էր արդէն, որ թրքական կողմն ալ խանդավառ չէր անոնց գործնականացման՝ ազրպէյճանական կողմի ճնշումներուն գոհացում տալով: Հետապնդուող սահմանադրական այս փոփոխութեան առնչութեամբ, անշուշտ, միտքերուն մէջ կար այն կասկածը, որ նախագահը անձնապէս շահագրգռուած կրնար ըլլալ այդպիսի փոփոխութեամբ մը, որովհետև իր համար դուռը կը բացուէր այս անգամ իբրև վարչապետ իշխանութիւնը իր ձեռքին մէջ պահելու:

Մտահոգութիւնները կարևոր չափով փարատեցան, երբ նախագահը հրապարակաւ յայտարարեց, թէ ինք հետաքրքրուած չէ վարչապետի պաշտօնով:

Այսպէս, Դաշնակցութիւնը կառավարութեան նստարաններէն գրեթէ ութնամեայ բացակայութենէ մը ետք վերստանձնեց իր ատենին կամաւոր ու հիմնաւոր կերպով թողած կառավարական պատասխանատուութիւնները: Կառավարական ընթացիկ գործերը տարուեցան, սահմանադրութիւնը պատրաստուեցաւ, ան հանրաքուէով ընդունուեցաւ, նախագահ Սերժ Սարգսեան իր նախագահական

պաշտօնի աւարտէն անմիջապէս առաջ Ազգային ժողովէն յետ կանչեց հայ-թրքական փրոթոքոլները և վերջապէս, մոռնալով ատենին իր տուած խոստումը, ընդունեց ՀՀ վարչապետ դառնալու՝ իր կուսակցութենէն եկած առաջարկը:

Շարունակութիւնը բոլորին յայտնի է: Շրջանաւարտ նախագահի իշխանական նոր գերագոյն պաշտօնի՝ վարչապետի պաշտօնի ստանձնումը պատճառ դարձաւ երկու նախագահական լման շրջաններու ընթացքին քաղաքական դժգոհ շրջանակներու գործօն զարթնումին, որ վայելեց նաև ժողովրդային իրաւամբ յուսախաբ ստուար զանգուածի մը համակրանքը, զօրավիգն ու մասնակցութիւնը:

Այստեղ միջանկեալ թող ըսուի, որ Դաշնակցութեան գործունէութեան այս հանգրուանի աւարտէն անմիջապէս առաջ տեղի ունեցաւ իրադարձութիւն մը, որուն հարկ եղած կարևորութիւնը չտրուեցաւ ատենին, որովհետև մարդիկ աւելի կեդրոնացան ձևական մանրամասնութիւններուն, քան խորքային իմաստին վրայ: Ատիկա ցեղասպանութեան յաջորդած հայկական պետութեան հիմնադրութիւնը խորհրդանշող, այդ օրերու կենաց-մահու պայքարի փաստացի առաջնորդ Արամ Մանուկեանի արձանի բարձրացումն էր հանրապետութեան կառավարական կեդրոնական հրապարակի անմիջական հարևանութեամբ: Այսպէս, հայկական պետականութեան վերածնունդէն դար մը ետք երկու զուգահեռ փողոցներու միջև գտնուող պուրակի երկու ծայրերը այսօր կան մէկ կողմէն՝ Լեռնահայաստանի ազատարար Գարեգին Նժդեհի արձանը, միւս կողմէն՝ մայրաքաղաք Երևանի

փրկարար և հանրապետութեան կերտիչ Արամ Մանուկեանի արձանը: Մարդոց յիշողութեան մէջ տեղ գրաւած են, անշուշտ, այդ օրերուն դեռ նորընծայ իշխանութիւններու մասնակից կարգ մը տարրերու ճիգերը՝ անհիմն պատրուակներով խափանելու Ա. Մանուկեանի արդէն պատրաստ արձանի տեղադրումը. խափանման փորձերը ձախողութեան մատնուեցան: Զոյգ արձանները, այսօր իրենց ներկայութեամբ ամէն օր տևաբար ընդգծելով հանրապետութեան հիմնադրութեան օրերու ոգին, անոր արթուն պահակն են միաժամանակ:

Դուրսէն դիտողը կը նկատէ, անշուշտ, որ Խորհրդային Միութեան ինքնահաշուեյարդարէն միայն 27 տարիներ ետք ազատ մթնոլորտի մէջ կառուցուեցաւ հանրապետութեան անցեալն ու ներկան իրարու զօդող այն սկզբնական ամուր յենակէտը, որ երաշխիքն է հայ ժողովուրդի, հասարակութեան և ազգի՝ իբրև ուրոյն ու ամբողջական միաւոր զարգանալու և յարատևելու կամքի առարկայական իրականացման:

Արամ Մանուկեանի յուշարձանի տեղադրումով սկսած ընթացքը պէտք է իր ծրագրուած շարունակութիւնը ունենայ: Համահայկական հասարակութիւն կազմաւորող այս գործադաշտը դժբախտաբար յատկանշուած է գլխաւորաբար իր արտասովոր դանդաղութեամբ:

Դաշնակցութեան, թերևս միաժամանակ նաև այլ ուժերու ճիգերով տեղին միջնորդութիւններով յեղափոխութիւնը մտցուեցաւ սահմանադրական անարիւն հունի մէջ: Մագոգային խորհրդակցութիւններով առաջքը առնուեցաւ աննախատեսելի հետևանքներով պատրաստուող փողոցային բախումներուն:

Վարչապետ Սերժ Սարգսեան պատրաստակամութիւն յայտնեց իր պաշտօնէն հրաժարելու: Շարժման ձերբակալուած առաջնորդը ազատ արձակուեցաւ: Հանրապետութեան հրապարակ հաւաքուած ցուցարարներուն հարցնելով՝ անոնց ղեկավար, դուխագլխարկ կրող Նիկոլ Փաշինեան ստացաւ իր ակնկալած պատասխանը. ինք պիտի դառնար ՀՀ վարչապետը՝ կամօքն հրապարակը հաւաքուած ժողովուրդին:

Սերժ Սարգսեան յայտարարեց պետական մարդու վայել հրաժարական մը՝ ընդունելով «իր սխալը», առանց մանրամասնելու այս խոստովանութեան իմաստը: Յայտարարութիւնը կը պարունակէր նաև որոշ առեղծուածային եզրեր, որոնց բացատրութիւնը, կ'երևի, պիտի տրուի ապագային:

Լաւ սերտուած սահմանադրական բեմադրութեամբ ցուցարարներու աչքին ատելի խորհրդարանը վարչապետ ընտրեց օրուան անդիմադրելի հերոս Նիկոլ Փաշինեանը, որ արդէն համաձայնած էր յաջորդ մէկ տարուան ընթացքին արտահերթ պատգամաւորական ընտրութիւններ կազմակերպելու պայմանին՝ փոփոխութեան ենթարկելէ ետք գործող ընտրական օրէնքը:

Նորընտիր վարչապետը դիմեց Դաշնակցութեան՝ կառավարութեան մաս կազմելու առաջարկով:

Դաշնակցութիւնն ընդունեց առաջարկը՝ իր զարմանքը յայտնելով հանդերձ. անոր վստահուեցան տնտեսութեան և գիւղատնտեսութեան նախարարութիւնները: Ամիսներ շարունակ կառավարական աշխատանքի լրատուութիւնը կը վերաբերէր այս երկու նախարարութիւններուն, մնացեալները զբաղած էին յեղափոխութեան յաջողութեան կենացներով և ընդհանրապէս տարուած էին յաղթանակի խանդավառ քարոզչութեամբ:

Ինչպէս պարագան եղած էր անցեալին, ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը մաս կազմած էր կառավարութեան, այս անգամ ևս որոշ շրջանակներու կողմէ ան մեղադրուեցաւ պատեհապաշտութեամբ, ամբաստանուեցաւ քանի մը նախարարութիւն ունենալու համար իր իսկ սկզբունքներուն հակադրուելու անհեթեթ զրպարտանքով:

Փակագիծ մը բանալով՝ ըսենք, որ նորանկախ Հայաստանի քաղաքական բեմին վրայ Դաշնակցութիւնը երբեք, բառին ամբողջական իմաստով, կառավարական ամբողջական պատասխանատուութիւն չէ կրած: Յաճախ ալ, կառավարութեան մաս կազմելուն հակառակ, հրապարակային կերպով քննադատած է կառավարութեան այս կամ այն որոշումը՝ արժանանալով կառավարական գործընկերներու ափսոսանքին ու բարկութեան, միւս կողմէն՝ ընդդիմութեան դիտողութիւններուն, որոնք կեղծիք կը համարէին Դաշնակցութեան կատարած քննադատութիւնները, սակայն վերջիվերջոյ մարդիկ վարժուեցան Դաշնակցութեան այդ վարքագծին: Այս գործելաձևը փոխուեցաւ միայն նախագահ Ս. Սարգսեանի պաշտօնավարութեան վերջին հանգրուանին, երբ կուսակցական մարմինները դադրեցուցին առօրեայ քննադատութեան ոճը, սակայն միայն ոճը: Արդարև, կառավարութեան գործունէութիւնը կուսակցական մարմիններու կողմէ սկսաւ քննարկուիլ եռամսեայ դրութեամբ, իսկ եզրակացութիւնները կը ներկայացուէին հանրութեան

յատուկ յայտարարութեամբ: Իր մասնակցութեամբ կազմուած բոլոր կառավարութիւններուն մէջ Դաշնակցութիւնը պահած է իր ինքնուրոյնութիւնը և որոշումի անկախութիւնը. այս հարցով երբեք անյաղթահարելի խնդիրներ չունեցաւ իր կառավարական գործընկերներուն հետ:

Նոյնը չեղաւ Ն. Փաշինեանի ղեկավարութեամբ կազմուած դահլիճին պարագային:

Ժողովրդավարութեան ու ժողովուրդի անունով իշխանութեան հասած վարչախումբը իր գործունէութեան առաջին իսկ օրերուն ցոյց տուաւ այլ կարծիքներու հանդէպ իր անհանդուրժողականութիւնը: Առաջին բախումին պատճառ դարձաւ դաշնակցական տնտեսական նախարարի՝ հանգստեան թոշակներու առնչութեամբ արտայայտած մէկ տեսակէտը:

Խանդավառուած 2018ի սեպտեմբերի սկիզբը տեղի ունեցած Երևանի քաղաքապետի ընտրութիւններուն իր համար բացառիկ դրական արդիւնքէն՝ անկանխատեսելի վարչապետը սկսաւ պահանջել պատգամաւորական արտահերթ ընտրութիւններու յառաջացումը, բան մը, որ Դաշնակցութիւնը չէր կրնար ընդունիլ, որովհետև ժամանակի մթնոլորտին մէջ անոնց արդիւնքը դիւրաւ կանխատեսելի էր:

Ընտրեալ վարչապետն կրկին դիմեց խափանարարական միջոցներու. ցուցարարները շրջափակեցին խորհրդարանի շէնքը՝ արգելք հանդիսանալով պատգամաւորներու մուտքին, որոնք կանչուած էին խորհրդարանի անխափան գործունէութիւնը ապահովող օրէնքի մը խորհրդակցութեան և ընդունման համար: Դաշնակցութեան Գերագոյն մարմինը յայտարարեց իր ներկայացուցիչներու հրաժարականը կառավարութենէն:

Քանի մը վայրկեան ետք թատերաբեմի դեր կատարող ցոյցի հարթակին վրայ վարչապետը ոտքի վրայ ստորագրեց դաշնակցական նախարարներու դահլիճի անդամակցութենէն դադրեցման հրամանագիրը:

Առաջին անգամը չէր, որ Դաշնակցութիւնը բոլորովին ինքնակամ կը հրաժարէր կառավարութենէն, ինչ որ գոնէ պարկեշտ մեկնաբաններու աչքին կը հաստատէ, թէ կուսակցութեան համար նախարարական աթոռները ինքնին նպատակ չեն, այլ տաժանակիր շինարար աշխատանքի առիթ ընծայող միջոցներ: Այլ՝ իմ ականջիս ալ հասած տեսակէտներ կը պատկանին կասկածելի աղբիւրներէ հոսող և մեր իրականութեան մթնոլորտը թունաւորող բամբասանքային ոլորտին, որուն համար, ընկերային ցանցերուն վրայ մանաւանդ, ժամանակ յատկացնողները դժբախտաբար բազմացած են:

Սփիւռքը առհասարակ դրական վերաբերում ունեցաւ ՀՀէն ներս կատարուած փոփոխութիւններուն հանդէպ: Ասիկա զարմանալի չէ, որովհետև անկախութենէն ի վեր շեփորահար քարոզչութիւն տարուած էր երկրէն ներս մերկ աչքով տեսանելի որոշ երևոյթներու դէմ՝ փտածութիւն, կիներու իրաւունքներու հարց, ներընտանեկան բռնութիւն և այլն: Շատերու նպատակը, վստահաբար, այդ յոռի երևոյթները առողջ քննադատութեամբ օր մը սրբագրուած տեսնելն էր, սակայն լրատուական միջոցներու սովորութիւնն է ամէն ինչ խոշորացոյցով դիտելով ողբերգական ծայրայեղ ու չափազանցուած վիճակ մը վկայելը, որ միայն մասնակիօրէն կը ներկայացնէ իրականութիւնը, նաև ընթերցողներուն ընկալումը առհասարակ նկատի չ'ունենար աշխարհագրութեամբ պայմանաւորուած բարքերու յաճախ խորունկ տարբերութիւնները: Այս ձևով վիճակ բարելաւելու սկզբնական դրական նպատակին համար տարուած աշխատանքը կու տայ ճիշդ հակառակ արդիւնքը: Բացառելու չէ նաև այն, որ կարգ մը շրջանակներ ի սկզբանէ հետապնդած ըլլան աշխարհաքաղաքական նպատակներ՝ շահագործելով ժողովրդային ըմբոնելի դժգոհութիւնը:

Յամենայնդէպս, ներկայ հանգրուանին օրէ օր ու շաբաթէ շաբաթ հիասթափութեան աստիճանը կը բարձրանայ, դժգոհներու թիւը կ'աւելնայ: Այսպէս, 2018ի հոկտեմբեր 2ին վարչապետին՝ խորհրդարանը շրջափակելու կոչին ընդառաջեցին տասնեակ հազարաւորներ, իսկ շուրջ եօթ ամիս ետք դատարանները փակելու անոր կոչին՝ միայն իշխանամէտ պատգամաւորներ, պետական պաշտօնեաներ, փոքրաթիւ համակիրներ:

Ժամանակի ընթացքին հիասթափութեան ալիքը հասաւ մինչև Սփիւռքի ամենէն հեռաւոր անկիւնները: ■

Այս անկիւնէն. Կը լսէ՞ք, հայեր

Վրէժ-Արմէն

Գանատացի անուանի գրագիտուհի Մարգարետ Ատվուտ ունի ուշագրաւ յօդուած մը՝ “Leaping the moat” («Ոստում ջրախրամին վրայէն»), ամերիկեան “Time” շաբաթաթերթի 2020 ապրիլ 27 - մայիս 4 միացեալ թիւին մէջ: Այդ բացառիկ զոյգ թիւը ամբողջութեամբ նուիրուած է յոյսի որոնման՝ ներկայ համավարակի ատեն, ներկայացնելով 100 ականաւոր, հանրածանօթ դէմքերու տեսակէտները:

Մարգարետ Ատվուտի գրութիւնը կը զանազանուի միւսներէն իր նպատակաուղղուածութեամբ:

Գրողը մարդկութեան ներկայ վիճակը կը նմանցնէ այն ձիաւոր ասպետի վիճակին, որ մեծ ոստում մը կատարած է ցատկելու համար դղեակը շրջապատող ջրախրամին վրայէն և հասնելու արդէն իսկ բարձրացող կամրջակին: Կը գտնուի օդին մէջ և կը յուսայ հասնիլ անոր նախքան անոր ամբողջովին բարձրանալն ու փակուիլը: Մենք ալ հիմա այդպէս օդին մէջ ենք, մեզ կը հալածէ պսակաձև ժահրը, և կը յուսանք հասնիլ դղեակին՝ մեր «բնական» կեանքին: Բայց կը մտածենք արդեօք, թէ ինչ պէտք է ընենք մինչ այդ՝ առկախեալ վիճակին մէջ, վերագտնելու համար մեր պատկերացուցած այդ «բնականը»:

«Մտածէ՛,– կ՚ըսէ ան,– այն բոլոր բաներուն մասին, որ կը յուսաս, որ տակաւին հո՛ն պիտի ըլլան՝ ապագայի դղեակին մէջ, երբ կարենանք հասնիլ անոր: Ապա ըրէ՛, ինչ որ ձեռքէդ կու գայ, հիմա՛, որպէսզի ապահովես անոնց ապագայ գոյութիւնը»:

Այդ «բաներուն» կարգին, ի միջի այլոց, ան՝ իբրև մտաւորական, կը նշէ գրատուները, թերթերն ու պարբերականները, արուեստի ամեն տեսակ կազմակերպութիւնները, որոնց գոյութիւնը վտանգուած է այս պահուն:

Ան կը գրէ. «Արուեստի ճամբով է, որ մենք կ՚արտայայտենք մեր մարդկայնութիւնը՝ իր բոլոր տարողութիւններով: Արուեստին ընդմէջէն մենք կ՚իջնենք դէպի մեր մարդկային բնութեան խորութիւնները, կը բարձրանանք անոր բարձունքները, կը հասնինք անոնց միջև ամէն ինչի»:

«Այս պահուս օգնութեան կարիք ունին, –կ՚աւելցնէ ան, գրողները, հրատարակիչները, թատրոնը, երաժշտութիւնը, պարը, փառատօնները, պատկերասրահները: Անոնց հասնինք նուիրատուութիւններով, բաժանորդագրութիւններով և այլապէս, որպէսզի անոնք յարատևեն: Դարձէ՛ք անոնց հանդիսատեսները, առցանց հանդիսատեսները, որովհետև անոնք չեն կրնար առանց հանդիսատեսի գոյատևել»:

Ատվուտ ուրիշ կարևոր բաներ ալ կ՚ըսէ, սակայն նպատակս իր յօդուածը ներկայացնելը չէ, այլ անկէ քաղել, ինչ որ մե՛զ պէտք է շահագրգռէ, ինչ որ մե՛նք կիրարկելու ենք մե՛ր պարագային:

Իրապէս ի՞նչ կ՚ընենք վերագտնելու համար մեր «անցեալ» կեանքէն այն ամէնը կամ այն, ինչ որ հնարաւոր է՝ մեր կազմակերպութիւնները, մեր հաստատութիւնները, մեր նախաձեռնութիւնները և մասամբ նորին: Ի՞նչ կ՚ընենք:

Ահա խնդիրը այս պահուս՝ «օդին մէջ» առկախ մեր այս վիճակին մէջ:

Կը մտածենք՝ որքան ընելիք ունինք՝ նախ չկորսնցնելու, ապա պահպանել ու զարգացնել կարենալու համար մեր հաստատութիւնները՝ մեր եկեղեցիները, մեր ակումբները կամ կեդրոնները, մանաւանդ մեր կրթարանները, այլև մեր կազմակերպութիւնները՝ կուսակցութիւնները, միութիւնները, մանաւանդ մշակութային միութիւնները, և վերջապէս մեր մամուլը՝ գրաւոր թէ բանաւոր, կուսակցական, միութենական թէ անկախ, մանաւանդ մեր գրական մամուլը: Շեշտը կը դնեմ կրթական-մշակութային-գրականներուն վրայ, քանի որ նոյնիսկ ներկայ տագնապէն առաջ ալ արդէն այնքան ալ փայլուն չէր անոնց վիճակը՝ տնտեսական առումով: Կը մտածենք՝ ինչպէս ապահովել անոնց գոյութիւնը երկար ժամանակ, տագնապէն ալ անդին, քանի որ անոնց միջոցաւ է, որ ինքնութիւն կը պահուի, ոգի՛ կը ստեղծուի, ազգ կը գոյատևէ:

Ասիկա միայն սփիւռքեան մտահոգութիւն մը ըլլալու չէ: Դժբախտաբար, մեր ինքնութեան խաթարումը մենք կը տեսնենք մեր սեփական հողին վրայ իսկ՝ սկսեալ մեր լեզուէն:

Յո՞ երթաս, հայ ժողովուրդ:

Ես մէջբերեցի գանատացի գրողին մտորումները, բայց անոնց պէտք ունի՞նք գիտակցելու համար այս ամէնուն:

«Մի՛ կորսնցնէք ձեր հաւատը,– կը պատուիրէ աւագ գրողը իր եզրափակիչ տողերուն մէջ,– կրնաք ցատկել ջրախրամին վրայէն»:

Բարեբախտաբար, ինչպէս որ կը տեսնենք քիչ մը ամեն տեղ, նաև մեր՝ հայերուս պարագային կ՚օգտագործուին առցանց կարելիութիւնները թէ՛ ուսումնական տեսակէտէն, թէ՛ մեր երգերն ու մշակութային նախկին նախաձեռնութիւնները վերստին մատուցելու տեսակէտէն և այլն, նոյնիսկ եթերային նոր ձեռնարկներ կը կազմակերպուին յիշելու և յիշեցնելու համար մեր կարևոր թուականները, վառ պահելու համար մեր պահանջատիրութիւնը: Մամուլն ալ ձեռնածալ չէ նստած: Սակայն այս բոլորը ցաւամոքիչ միջոցներ կը թուին ըլլալ:

Անոնցմէ անդին թո՞ւիչք կայ իրականացնելիք՝ «դղեակին» հասնելու համար:

Ա՛յս մասին մտածենք բոլորս, մտածենք մանաւանդ միասին, ազգովին, եթէ տակաւին այդ բառին կը հաւատանք: ■

«ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆՈՒԱԾ՝ 1899-ԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՀՆԱԳՈՅՆ ԵՎ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՅԱԳԻՐԸ
էջը կը տեսնէ ամէն օր, բացի Երկուշաբթի եւ տօներու յաջորդող օրերէն
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ $16·00
ՎԵՑԱՄՍԵԱՅ » $ 8·50
Հասցէ՝ 212 Stuart St., Boston, Mass. 02116
Հեռաձայն՝ 542-3650

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

HAIRENIK
ESTABLISHED 1899
THE OLDEST AND LARGEST ARMENIAN DAILY IN USA—ISSUED DAILY EXCEPT MONDAY, THE DAY FOLLOWING HOLIDAY & 2 WEEKS IN JULY
"SECOND-CLASS POSTAGE PAID AT BOSTON, MASSACHUSETTS"
Yearly Subscription $16.00
Semi-Yearly Subscription $ 8.50
212 STUART STREET, BOSTON, MASS. 02116
TELEPHONE 542-3650

68-ՐԴ ՏԱՐԻ No. 16.477
Կիրակի, Յուլիս 31, 1966

Vol. LXVIII No. 16.477
Sunday, July 31, 1966

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՏԵՐԿԻՐ ԲԱՌԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՀԻՒՍԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ 73-ՐԴ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՀԱՆԴԷՍԸ ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ՄԷՋ

ԱՆԳԼԻԱ ԿԸ ՁԱՆԱՅ ՄԵՂՄԵԼ ՎԻԵԹՆԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Արտերկիր» բառի կապակցութեամբ

Վերջերս հմուտ և ձեռնահաս հայ հրապարակագիրներ սկսած են նոր բառեր գործածել, որոնք, փոխանակ գիտակցութիւնը պայծառացնելու և գաղափարներու իմաստը ճշգրտելու, մտքերու մէջ շփոթ և երկմտութիւն կը մտցնեն: Հրապարակագրութեան առաջնահերթ նպատակը քարոզչութիւնն է ոչ թէ միտք ջրելու (միջնադարեան հայերէնի մէջ գործածուած «համոզելու», «brain washing» իմաստով), այլ հարցերը լուսաբանելու, բոլորին դիւրամատչելի դարձնելու և յստակ մտածել սորվեցնելու համար:

Հայ լեզուին մէջ զօրով ներմուծուած բառերէն մէկն ալ ԱՐՏԵՐԿԻՐ-ն է: Ուրկէ՞ և ինչո՞ւ թխուած է այս իմաստ խառնակող բառը՝ չկրցանք ստուգել: Հայերէն ո՛չ հին և ո՛չ ալ նոր բառարաններուն մէջ գոյութիւն ունի: Սա նորակերտ բառ մըն է՝ նման «արտասահման» բառին, որ ռուսերէնէ թարգմանուած է: Հակառակ չենք բառակերտութեան, երբ ան պարապ մը կը լեցնէ, անհրաժեշտ պէտքի մը գոհացում կուտայ կամ խրթին գաղափար մը յստակեցնելու կը ծառայէ: Այդ կողմէ հայերէնը ամենէն ճկուն լեզուներէն մեկն է: Բայց անտեղի և անհարկի բառակերտութիւնը միտքերը պղտորելու, մթագնելու և շփոթանքի կը ծառայէ:

Յօդուածներու, մինչև իսկ խմբագրականներու մէջ յաճախ կը յեղյեղուին «Արտերկրի հայութիւն», «Արտերկրի կրթական վիճակ» խօսքերը, որոնք սկսած են արագօրէն ծավալիլ: Հարց կուտանք այդ գրողներուն.«Արտերկրի հայութիւն» խօսքով ո՞ր հայութեան կ'ակնարկուի: Ըստ բառակազմութեան՝ կը նշանակէ «Հայաստանէն դուրս ապրող հայութիւնը»: Գրութիւններու պարունակէն կը մակաբերենք, թէ «Սփիւռք» կը նշանակէ: Սակայն Վրաստանի, Ազրպէճանի, Հիւսիս. Կովկասի, Քիւրդիստանի, Մոսկուայի, Թուրքեստանի հայութիւնը արտերկրի հայութիւն չէ՞: «Արտերկիր» բառը ազգային քաղաքական ներկայ իրադրութեան մէջ «Սփիւռք»-ի փոխարէն գործածելը կը նշանակէ անտեսել և արժեզրկել սովետական տարածքին փոռուած մէկ միլիոն և 350 հազար հայութեան գոյութիւնը, որ պէտք է մեր առանձին ուշադրութեան արժանանայ: Օրինակ՝ երբ անհրաժեշտ դառնայ Հայաստանի հայութեան թիւը համեմատել անկէ դուրս ապրող հայութեան համրանքին հետ, այդ ատեն կարելի է դէմ դիմաց դնել Երկիրն ու Արտերկիրը: Այլապէս բազում սխալանքներու կ'առաջնորդէ «Արտերկիր» բառի գործածութիւնը:

Իր բոլոր թերութիւններով, Սփիւռքը միջազգային, քաղաքական, իրաւական և մշակութային միաւոր մը կը կազմէ, որ ինքնուրոյն դիմագիծ կը կրէ: Լաւ կամ վատ, Սփիւռքը կազմակերպուած հաւաքականութիւն մըն է: Եւ իր այս եզակի հանգամանքով է, որ Ապրիլեան Եղեռնի Հիսնամեակի ոգեկոչումը, հանդիսութիւնները և այլազան ձեռնարկները միասնաբար և համերաշխութեան միահամուռ ոգիով կատարեց: Հոգեկան այս միասնութիւնը թանկարժէք վաստակ մըն է: Եթէ մի երանաւէտ օր Սփիւռքը վերագտնէ իր զգաստութիւնն ու ողջամտութիւնը և Հայ Դատի հետապնդման համար համահայկական մի ճակատ կազմել յաջողի, անոր միջազգային քաղաքական և իրաւական կշիռը զգալիօրեն կը ծանրանայ:

Սփիւռքը մեծապէս կը տարբերի Հայաստանէն դուրս ապրող սովետահայ հայութենէն:

Սփիւռքը ունի քաղաքական կուսակցութիւններ, որոնց կեդրոնական մտազբաղումը Հայ Դատն է՝ ազգապահպանումը լիսելով անոր կցորդ և անբաժան մէկ փուլը: Ունի հսկայական ցանց մը մամուլի, զուտ հայկական դպրոցներու և կրթական հիմնարկներու: Ունի եկեղեցիներ, որոնք կը կառավարուին ժողովրդավար սկզբունքներով: Ունի Հ. Բ. Ը. միութիւնը, Հայ Օգնութեան միութիւնը՝ հայ կնոջ գործուն և տարածուն կազմակերպութիւնը, մարզական միութիւնները, որոնց ցանցը պատած է աշխարհի չորս ծագերը: Ունի մշակութային բազմաթիւ միութիւններ, Հայ Կրթական միութիւնը, Համազգային Մշակութային և հրատարակչական միութիւնը, որոնք անբաւ դեր կը կատարեն սփիւռքահայութեան մէջ ազգային ընդհանրական հոգեխառնութիւն ստեղծելու գործին մէջ, և վերջապէս Սփիւռքը կառուցեր է և դեռ կը շարունակէ մշակել ինքնուրոյն և արժէքաւոր գրականութիւն մը, որ հզօր ու ինքնատիպ ապրումներու գանձ մըն է: Սփիւռքը դիմագիծ ունի:

Իսկ ի՞նչ է իրավիճակը սովետական տարածքին սփռուած մէկ միլիոնէն աւելի հայութեան: Անդէմ, անկերպարան և քառասային կացութիւն մը: Ան զուրկ է միասնութեան բարիքէն և ոչ միայն մեկուսացման մէջ կ'ապրի, այլև ամէն համախումբ իր բնակավայրին մէջ ազգային նախաձեռնութենէ պարպուած կեանք մը կը բոլորէ: Միասնութիւնը բացարձակապէս կը բացակայի, և անոր տեղ կը թագավորէ ուծացումը և տակաւ ռուսացումը: Ան իսպառ խզուած է մայր հայրենիքի երախտիքէն. առանց պորտակապի հայութիւն մըն է: Բառին բուն իմաստով ՏԱՐՏՂՆՈՒԱԾ, ցիրուցան եղած հայութիւն մըն է՝ նման ցորենի հատիկներուն, որ նետուած են ուրիշի արտերուն մէջ՝ հոն ուռճանալու և ուրիշէն հնձուելու:

Ժամանակին այս տարտղնուած հայութիւնը զատորոշելու համար Սփյուռքէն մենք առաջարկեցինք Ցրօնք բառը: Այս զատորոշումը անհրաժեշտ և ստիպողական է, որովհետև Ցրօնք-ը բոլորովին տարբեր հանգամանքով հարց մը կը ներկայանայ մեզի: Քաղաքական հայուն համար վայել չէ ըսել, թէ «բան մը չենք կրնար ընել»: Ուրեմն պէտք է զայն լքե՛լ, անտեսե՛լ, արհամարհե՛լ: Բացայայտ փաստ է, որ Սով. Հայաստանը ուզէ, կամենայ իսկ գործնական ոչինչ կրնայ ընել անոր օգտին: Չի կրնար մանաւանդ հիմա, երբ ազգայնութեան դէմ սովետական իշխանութիւնը պայքարը խստացուցած է: Ազգային անմեղ արտայայտութիւնն իսկ յանուն լենինեան ազգային քաղաքականութեան կը նկատուի անջատողական շարժման փաստ: Ս. Հայաստանի ձեռքն ու ոտքը կաշկանդուած են ահաբեկչական սպառնալիքով: Բայց մենք՝ ազատ աշխարհի ծոցին մէջ ապրող քաղաքական մարդիկ, իրաւունք չունինք անտարբեր, անփոյթ լինելու, քար պապանձումի ենթարկուելու:

Մեր նուիրական պարտքն է սերտօրէն հետաքրքրուելու, շահագրգռուելու Ցրօնքի հայութեան վիճակով, մանաւանդ ռուսացման վերահաս վտանգի առնչութեամբ: Մեր ուշադրութիւնը և ձայնը անպակաս պէտք է դարձնել և անպայման արտայայտուիլ ռուսական բոլշևիզմի չարաշուք շահատակութիւններու դէմ: Ջնջեցէ՛ք Արտերկիր բառի գործածութիւնը: Սփիւռքը նուիրագործուած է ամէնուր: Արտերկիր-ի գործածութիւնը կը նշանակէ մոռացութեան դատակնիքով խարանել Ցրօնքի հայութեան ճակատը: Սա անսերելի յանցանք է քաղաքական հայուն համար: Եթէ հաճելի չէ Ցրօնք բառը, յօրինեցէ՛ք մի այլ յարմար և դիպուկ բառ, բայց մի՛ լքէք մեկ միլիոն 300 հազար հայութիւնը՝ Սփիւռքի չափ քանակ ներկայացնող հայկական հոծ բազմութիւնը:

Քի՛չ կրնանք ընել. պէտք չէ ձեռնպահ լինիլ այդ քիչէն իսկ: Մեր պարտքն է:

«Հայրենիք» օրաթ. Բոստոն, կիրակի, 31.7.1966, էջ 1

Խմբագիր՝ Ռուբեն Դարբինյան

ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՕՐՆ Է

2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ, ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՇՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՕՐԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ և ԿՐԵՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԱԿ՝ ՀԵՏևՅԱԼ ԳՈՅՆԵՐՈՎ, ԸՍՏ ԿԱՐԳԻ, ՎԵՐևԻՑ ՆԵՐՔև՝ ԿԱՐՄԻՐ, ԿԱՊՈՅՏ, ԴԵՂԻՆ: ՅԱՅՏՆԵԼՈՎ ԱՅՍ ՄԱՍԻՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՍՈՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ և ՀԵՏԵՎԵԼ ՆՐԱ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ»:

Ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանի շրջաբերական-հրահանգը, որը հրապարակվել է 1918 թ. սեպտեմբերի 19-ին.

ՀԱԱ, Ֆ. 214, Ց. 3, Գ. 24, Թ. 19:

ԴՐՕՇԱԿ